առաջարկներն անցկենան: Գերմանական սոցիալիստները կամենում են ստիպել, վորպեսզի Գերմանիան դաշինք կապի կապիտալիստական Պրանսիայի հետ՝ լրացնելու համար բուրժուազիայի միասնական Փրոնտն ընդդեմ ԽՍՀՄ-ի» (նույն տեղը):

Սոցիալ-դեմոկրատիան իմպերիալիստների վնասարարական ազենտուրան է ԽՍՀՄ-ի դեմ:

«Մոսկվայի դատավարությունը ուսման շեղվելների հանդեպ, վորոնք, Վանդերվելդեյե, հայատարբուրության համաձայն, աշխատում են 11 Ինտերնացիոնալի հետ «սերտ համերաշխություն» և վորոնց աշխատանքին «ուշի ուշով հետեվում է» 11 Ինտերնացիոնալը ոչ ոչ սպեց, վոր 11 Ինտերնացիոնալը Ֆրանսիական դիվանջի շտաբի, և ուսուկան սպիտակ գվարդիավականների, Փարիզի եմիգրանտական կազմակերպությունների («Տորդպրոմ») հետ միասին ուսուկան մենչեվիկներից ուղղական ինտերվենցիայի պատրաստության նպատակով վնասարարական աշխատանքի համար անմիջական ազենտուրա կազմակերպեց» (ընկ. Կաշենի ղեկուցման առթիվ պլենումի ընդունված բանաձեվից):

«1927 թ. 11 Ինտերնացիոնալի նախաձեռնությունը կազմակերպվեց Մատտիոտի—Փոնդը, նպատակ ունենալով «ոգնություն ցույց տալ բանվորական շարժման այն յերկրներում, ուր դեմոկրատիա գոյություն չունի»: Այս կազմակերպության բելգիական սեկցիայի կանոնադրության մեջ կարդում ենք.

«Պարագրաֆ 4.—Բելգիական Մատտեոտի—Փոնդը նպատակ ունի ոգնություն ցույց տալ բոլոր աբուրաականներին: Փախստականներին կամ կապիտալիստական

ոեակցիայի դոկերին և այն անձանց, վորոնց Անշուս եմ դիկտատուրաները :

«Անձինք, վորոնց ճնշում և դիկտատուրան» — այս անպայման իր սուր ծայրով Խ. Միլոթյան կողմն և ուղղված :

«1927 թ. կայացավ II Ինտերնացիոնալի կոնֆերանս : Եւ 20 հոգուց բաղկացած մի հատուկ հանձնաժողով նշանակեց Մատտեոտի — Փոնդի դժով ողնություն ցույց տալու համար բանվորական շարժման այն յերկրներում, ուր դեմոկրատիա չկա» :

«Թե ի՞նչ էյին նկատի ունենում այդ վորջումը հանկիս, այդ յերեվում և այն նյութերից, վոր հրապարակեց նույն գործադիր բյուրոն և վորը շրջան գործեց վողջ հակախորհրդային մամուլում : Ահա թե վորտեղ և թաղված շան գլուխը, ահա քե ինչու յե ստեղծված այդ կազմակերպությունը : Ընկերներ, մենք ղեկ շնք յոռոցել մենչև լիկների դատավարությունը, վորից միտնում այն պա դ և, վոր մենչև լիկները սոցիալ-դեմոկրատները և պիւթյուն էյին ստանում, այնպես, վոր Ինքը բիանչամայն բացահայտ կերպով կարողացավ ասել Բեռլինի ժողովրդականների ժողովում՝ «վողջ սոցիալ-դեմոկրատիայի դրամարկից չի վերցված, այլ Մատտեոտի — Փոնդի դրամարկից» : Ահա թե ինչ և իրենից ներկայացնում Մատտեոտի Փոնդը — նա հատկապես ստեղծված և ԽՍՀՄ-ում դրոնվող մենչև լիկների համար : Ընկերներ, յես ուզում եմ ընթերցել ևս մի կետ այդ կանոնադրությունից, վորից միանգամայն պարզ և, վոր այդ Փոնդի մասին պետք և մտածել սպառնալիքներ և ինտերվենցիայի կապակցությամբ :

36-րդ պարագրաֆում ասված և .

Նյութական և բարոյական պաշտպանություն ասելով հատկապես հասկացվում և՛

ա) միլիցիայի կորսուտի կազմակերպում և ինքնապաշտպանության պատրաստություն մարմնամարտության և սպորտի միջոցով .

բ) միլիցիայի համախմբումը յերիտասարդ սրբլետարներին հետ շրջանային ու ազգային մասշտաբով՝ ոեակցիան դիտավորություններին հակակշիռ ստեղծելու համար .

գ) բանավոր և գրավոր պրոպագանդա, վորպեսզի բանվորները նախատեսեն նրանց սպառնացող վտանգը, կազմակերպման համար դրա հավաք պատրաստվի :

«Ի՞նչ և այդ : Այդ, այսպես ասած, սպառնալիքում և : Բայց ո՞ւմ դեմ :

«Իս, ռազմական համալրումների պատրաստություն և բոլոր ժողովուրդների զինված ուժերի համար, վորոնք ստեղծվում են ընդդեմ ԽՍՀՄ-ի» (ընկ. Ստասովի հատից) :

Սոցիալ-դեմոկրատիայի ակտիվ մասնակցությունը ինտերվենցիայի պատրաստության դործին ակնատու կերպով յերեվան և հանում միջազգային սոցիալ-դեմոկրատիայի հակահեղափոխական դերը և վերջնականապես մերկացնում և նրան իջրև իմպերիալիզմի առաջավոր ջոկատի :

«Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի վողջ հակահեղափոխական, հակաբանվորական բողոքականությունն իր ավարտումն և դրոնում բրկապայի և ռազմական ինտերվենցիայի պատրաստության մեջ՝ ուղղված աշխարհիս առաջին սրբլետարական պետության դեմ : ԽՍՀՄ-ի կապիտալիստական վերասերման և

Համ Կ (բ) Կ-ում յեղած աջերի հաղթանակի հույսը կորցրած համաշխարհային բուրժուազիայի շրջադարձը դեպի ինտերվենցիան, կապիտալիստական տարրերի վրա ծավալված դիտավոր հարձակողականը ԽՍՀՄ-ում և հեղափոխական վերելքի վարդացումը կապիտալիստական յերկրներում, ուժեղացրել են II Ինտերնացիոնալի բոլոր կուսակցութունների (առաջին հերթին դերմանական սոցիալ-դեմոկրատիայի, վոր 2-րդ Ինտերնացիոնալի կորիզն և հանդիսանում) ինտերվենցիոնիստական և վնասարարական կողմնորոշումը, կուսակցութուններ, վորոնք դիտակցում են, վոր սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում վերջնականապես ող կհանի նրանց ազդեցութունը կապիտալիստական յերկրների բանվորության մեջ» (ընկ. Մանուիլսկու զեկուցման թեզիսներին) :

«Յերբ սոցիալ-դեմոկրատիան միջազգային համաձայնության կոչ է անում, նա դրանով նկատի ունի իմպերիալիստների և նրանց կուսավարութունների համաձայնությունը ԽՍՀՄ-ի դեմ և բոլոր կապիտալիստական յերկրներին հեղափոխական պրոլետարիատի դեմ : Յերբ կոմունիստական ինտերնացիոնալը միջազգային յեղբայրացման կոչ է անում, ապա նա կոչ է անում միջազգային համերաշխության, դասակարգային պայքարի՝ ընդդեմ կապիտալի, նա կոչ է անում քաղաքացիական պատերազմի, կոչ է անում աջակցելու ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարությանը : Այդ և հիմնական տարբերությունը մեզ կողմից՝ կոմունիստական ինտերնացիոնալի և Պրոֆինտերնի, մյուս կողմից՝ յերկրորդ և Ամստերդամյան ինտերնացիոնալների միջև» (ընկ. Տելմանի ճառին) :

Միջազգային բուրժուազիայի այս ինտերվենցիոնիստական քաղաքականությանը ԽՍՀՄ-ն հակադրում է իր խաղաղության քաղաքականությունը, վոր պայմանավորված է Փոցիալիստական շինարարության շահերով : Խ. Միությունը խաղաղության քաղաքականություն է իրագործում Հոկտեմբերի առաջին իսկ որերից :

«Բայլեզվիկների վճռական նշանակություն ունեցող լոգունդներին մեկը — և վոչ միայն լոգունդը, — այլև այդ լոգունդի գործնական կիրառումը — յեղել է խաղաղությունը : Բանվոր դասակարգի քաղաքական իշխանության հաղթանակի միջոցով ԽՍՀՄ-ում ապախանության հաղթանակի միջոցով ԽՍՀՄ-ում ապախանության խաղաղությունը : Նա առաջին յերկրն էր ամհովվեց խաղաղությունը : Նա առաջին փաթաթած քաղաքացիական կռիվները վերջացնելուց հետո՝ Լենինի և Բայլեզվիկյան կուսակցության քաղաքականության միջոցով խաղաղություն ամեց իր ժողովուրդներին» (ընկ. Տելմանի ճառին) :

«Ինչի՞ համար Խ. Միությունը պատերազմ պետք է ցանկանա : Մի՞թե նոր հողերի կարիք է զգում : — Նա դրավում է մեր մոլորակի մեկ վեցերորդ մասը :

«Հարկավո՞ր է արդյոք, վոր նա ուրիշ տեղում հումք վորոնի : — Բնությունը նրան շոայել է և աշխարհի ամենահարուստ հողաչերտերը :

«Մանրաբեռնված», է արդյոք նրա ներքին շուկան : — Դեռ նա շատ հեռու յե այդ աստիճանին հասնելուց : Ապրանքի գերարտադրությունից չտուժելով, նրա աղքատքնակությունը, վոր արագորեն աճում է դեպի 200 միլիոնը, հսկայական կարիքներ ունի, վորը չի կարողանում բավարարել, չնայած իր վիթխարի հաջողու-

Թյուններին, — վաճառահանման շուկաների հարցը նրա համար դոյություն չունի, մինչդեռ այն նույն հարցը մահվան յերկյուղով վաթաթվում և խմպերիալիստական ազդությունների ազդանքային արտադրության շինքին: Յեթե Խորհուրդները հումք են արտահանում, ապա միայն նրա համար, վորպեսզի մեքենաները ներմուծեն, վորի պահասն առայժմ դրում են» (ընկ. Կաշենի գեկուցումից):

Իմպերիալիստները, ԽՍՀՄ-ին պատերազմի դըրդելու սուլիթներ վորոնելով, իրենց յերկրների աշխատավորներին ԽՍՀՄ-ի դեմ գրգռելով, գրանով միայն կապիտալիստական սխտեմի բացասական կողմերը և խորհրդային սխտեմի դրական կողմերն են յերեվան հանում:

ա) Գեմպլինզի մեղադրանքն ամենեվին հիմնավորված չէ:

«ԽՍՀՄ-ում դոյություն չունի այն ունտան, վորը կապիտալիստական յերկրներում խեղդում և մանր ու միջակ հողատերերին և կազմում և, ասենք թե ՀՍՄ-ում, նրանց արտադրական ծախքերի դրեթե մեկ յերրորդ մասը, դոյություն չունի վաշխառուական կապիտալ, վորին նույնպես դյուղացին տալիս և իր մթերթի մի մասը: ԽՍՀՄ-ում անցյալ տարի կոլտնտեսությունները պետությունից ավելի քան միլիարդ ուրբլու աջակցություն ստացան: ԽՍՀՄ-ում պետությունը դյուղացիական տնտեսություններին դյուղատնտեսական մեքենաներ և մատակարարում. 1931 թ. ԽՍՀՄ-ի դյուղատնտեսությունը պետությունից 1.200 միլիոն ուրբլու մեքենա կտանա, կոլեկտիվացված դյուղատնտեսությունը մանր տնտեսության նկատմամբ առա-

վելություններ ունի, և վերջուպես ներկա տարվա փայլուն բերքը: Այս բոլորը գործոններ են, վոր ազդում են հացի ինքնարժեքի վրա»:

«ԽՍՀՄ-ում տնտեսությունը պլանային-սոցիալիստական և: Իսկ այդ նշանակում և, վոր ԽՍՀՄ-ի ապրանքային հարաբերությունների հիմքում դրված ինքնարժեքի որենքը այլ դեր և խաղում, քան կապիտալիստական տնտեսության մեջ: Ամեն մի առանձին ապրանքի դինը, հիմնականում պլանային ներգործության յենթարկվելով, մեր հասարակության աշխատանքային ծախքերի ընդհանուր դումարից յեղնելով, վորոշվում և ընդլայնված սոցիալիստական վերարտադրության գիտակցաբար դրված նպատակով»:

«Այստեղ դները վորոշվում են վոչ թե շահույթի սախմուղով, ինչպես այդ լինում և կապիտալիստական տնտեսության մեջ, այլ սոցիալիստական շինարարության, այսինքն՝ ամբողջի շահերով» (ընկ. Մանուելիսկու գեկուցումից):

բ) Անհիմն և այն մեղադրանքը, թե Խորհրդային Միությունը միջամտում և և ապրիների մրցակցություն և հանդես բերում՝ կապիտալիստական կարգերը պայթեցնելու նպատակով:

«ԽՍՀՄ-ին մեղադրում են այն բանում, թե չուկա հանդես դալով նա պայթեցնում և կապիտալիստական հասարակարդը: Շատ վատ և ուրեմն համաշխարհային կապիտալիզմի վիճակը, յեթե այն 2 տոկոսը, վորպեսին կազմում և խորհրդային առևտուրը համաշխարհային առևտրի ընդհանուր բալանսում, այնպես և խախտում «կազմակերպված» կապիտալիզմի դերը

վոր նրան, Բրիտանի խոսքերով, բայց Էվիկական հեղափոխութիւնն և սպանում :

«Վոչ թե ԽՍՀՄ-ն և միջամտում կապիտալիստական պետութիւնների ներքին դործերին, այլ ընդհակառակը, նրանք են միջամտում ԽՍՀՄ-ի ներքին դործերին :

«ԽՍՀՄ-ն յենթակա յե կապիտալիստական յերկրների շուկայի որենքներին : ԽՍՀՄ-ն չե, վոր սահմանում և այդ շուկայի որենքները, այլ բուրժուազիայի և նրա սոցիալ-դեմոկրատական արբանյակների զովերդամ կապիտալիստական կարգերը : Յեթե ԽՍՀՄ-ից կախած լիներ ավյալ պահին փոխել այդ որենքները, ապա նա այդ կաներ : Բայց ԽՍՀՄ-ն կանգնած և կապիտալիստական կառավարութիւնների ներքին դործերին չմիջամեւելու դերքերի վրա : Իսկ ԽՍՀՄ-ից պահանջում են, վորպեսզի նա դադարեցնի Բուրժուատրացումը, իր արդյունաբերութիւն մի շարք ճյուղերի դարգացումը, իր խոշոր բնական հարստութիւնների շահագործումը, վորովհետև այդ կարող և խախտել կապիտալիստական յերկրների դիրքերը : Ի՞նչպես այդ համատեղել այլ յերկրների ներքին դործերին չմիջամեւելու սկզբունքի հետ» (ընկ. Մանուիլսկու ղեկուցումից) :

դ) ԽՍՀՄ-ի «հարկադիր աշխատանքի» կիրառման մեղադրանքի կեղծութիւնն ու նողկալիութիւնը առանձնապես աչքի յեն դարկում :

«... Ամերիկական և այլ իմպերիալիստների տաշադրած այն մեղադրանքը, վոր իբրև թե փայտահատումը և մի քանի այլ երապորտային սուրանքների արտադրութիւնը ԽՍՀՄ-ում սպահովված են շնորհիվ ստրկական աշխատանքի, ամենադադրելի մի զըր»

պարտութիւնն և այս համաշխարհային ավազակների կողմից : Ճիշտ հակառակը. մեղ մոտ, կապիտալիստական Գերմանիայում, Բրայունիշների և Բրաունների, Բրեններների և Զեվերինգների Գերմանիայում և, վոր նկատվում են ստրկական աշխատանքի և ստրուկների արտահանման փաստեր :

«... Հռենոսյան մարդում, Քյոլնի աշխատանքի բյուրոյում, գտնվում և գերեվաճանութիւն կենտրոնական բորսա : Այնտեղ հարկադրում են գործազուրկներին աշխատանքի գնալ Ծրանիա, վորտեղ Ֆրանսիական իշխանութիւնների ղեկավարութիւն տան նրանք պարտավոր են աշխատել կոյուղիներում, քարահանքերում և հանքահորերում : Շատ դեպքերում դեմքի գործազուրկներին հարկադրել են գնալ Ծրանիա, Հոլանդիա և անգամ Բելգիա. ամենասովորական սրայմաններով, ամենեվին հաշվի չառնելով նրանց պայմաններով, ամենեվին հաշվի չառնելով խախտում էյին սրայմանադիրը, կամ մերժում էյին արտասահման արտորի գնալ, ապա այդ նրանց համար մահաիճիւ եր նշանակում, վորովհետև այդ մերժման համար նրանց դրկում էյին անգամ այն վողորմելի գրոշմար նրանց դրկում էյին անգամ նրանք ստանում էյին իբրև գործաներից, վորպիսին նրանք ստանում էյին իբրև կապիտալիստական ստրկութիւն կողքին ղերմանական սոցիալ-դեմոկրատիան համարձակվում և միանալ համաշխարհային բուրժուազիայի հակախորհրդային դրապարտութիւններին» (ընկ. Տելմանի ճառից) :

«Կապիտալիստների աչքին հարկադիր աշխատանք և սոցիալիստական յերկրի բոլոր քաղաքացիները պարտավորութիւնը—աշխատել՝ ուտելու իրավունք

ունենալու համար: Դա խորհրդային սահմանադրու-  
թյան հիմնական կետերից մեկն է, վորով պարծենում  
է Խորհրդային յերկիրը: Յեւ այդ պարտավորությու-  
նը կոմունիստները կմտցնեն ամբողջ աշխարհում, տա-  
պալելով ճրիակերների իշխանությունը:

«ԽՍՀՄ-ի հարկադիր աշխատանքի մասին խոսում  
են մարդիկ, վորոնց ամբողջ հասարակական կյանքը  
հիմնված է միլիտնավոր բանվորների ամենահրեշային  
հարկադրման, սնտեսական ստրկացման վրա, մար-  
դիկ, վորոնք իրենց մբողջ տիրապետությունը կառու-  
ցել են սպիտակ ցեղի մի խումբ մակարդձների միջո-  
ցով մնացած բոլոր գոնավոր ցեղերին շահագործելու  
հիման վրա, մարդիկ, վորոնք ստրկություն են մըտ-  
ցրել և այն պահպանում են Չինաստանում, Հնդկաստա-  
նում, Հնդկաչինում, բելգիական Կոնդոյում, Լատինա-  
ական Ամերիկայի Կոնտինենտում, վորոնք Լինչի դա-  
տաստան են գործադրում Ամերիկայում, շղթայի յին  
զարկում միստեր Փայերստոնի կառուչուկի սլանտա-  
ցիաներում Լիբերիայում, խավարամուկներ, վորոնք  
չարաչահում են ամենախավար կրոնական սնտիտալա-  
տություններն ու նախապաշարումները, վորոնք հնդ-  
կա-մուսուլմանական կոտորածներ են կազմակերպում  
(ընկ. Մանուկիւկու գեկուցումից):

6. ՊԱՅՔԱՐ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ՅԵՎ ԻՄՊԵՐԻԱ-  
ԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱՋՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ ԴԵՄ

Այսորվա պայմաններում, յերբ արագորեն մոտե-  
նում են ԽՍՀՄ-ի վրա հարձակվելու վտանգը և իմպե-  
րիալիստական պետությունների զինված ընդհարում-  
ներն աշխարհի վերաբաժանման համար, — իրար հակա-

դիր յերկու աշխարհներին՝ կապիտալիզմի և սոցիա-  
լիզմի աշխարհներին համապատասխան գոյություն ու-  
նեն յերկու ֆրոնտներ և յերկու վճռական գործոն-  
ներ:

«Դատակարգայնորեն գիտակից թշնամին համաշ-  
խարհային բուրժուազիան և միջազգային սոցիալ-դե-  
մոկրատիան—ընդդեմ ԽՍՀՄ-ի մյուս կողմից՝ դասա-  
կարգայնորեն գիտակից բարեկամ—համաշխարհային  
պրոլետարիատը, Կոմինտերնի ղեկավարությամբ և Ս.  
Միլոթյան բանվորների ու գյուղացիների հետ դաշնակ-  
ցած—ընդդեմ դասակարգայնորեն թշնամի ֆրոնտի»  
(ընկ. Տեքմանի ճառից):

Չնայած բուրժուազիայի բոլոր միջոցառումներին,  
ալիւլի ու ալիւլի հաճախակի յին դառնում զինվորները  
յկուլթները՝ Կարմիր Բանակի և իրենց յերկրների  
պրոլետարների հետ համերաշխության լոզունգներով:  
Առանձնապես հատկանշական են այդ յկուլթները  
Յրանսիայում և Լեհաստանում:

Յրանսիայում զինվորների ցույցերը յեղել են  
1929 թ. 110 անգամ, իսկ 1930 թ.՝ 150 անգամ, վո-  
րից 60-ը՝ գործոն ծառայության մեջ դատվող զինվոր-  
ների կողմից, 30-ը պահեստի և գործան զինվորների  
կողմից միասնաբար: 50-ը՝ միայն պահեստների և  
12-ը՝ նավաստիների կողմից: Յեթե 1929 թ. զինվոր-  
ների և նավաստիների ցույցերն ընթանում էյին անմի-  
ջական պահանջների համար պայքարելու ընդհանուր  
լոզունգով, ապա 1930 թ. նրանք ընթանում էյին նաև  
բաղաբական լոզունգներով, ինչպեսին են՝ «Կեցցե  
Կարմիր Բանակը», «Կեցցեն Խորհուրդները», «Կեց-  
ցե Խորհրդային Միությունը», ինչպես նաև՝ «Կորչի

պատերազմը» : Չինվորների ցույցերը քաղաքական բը-  
նույթ են ստանում :

Որինակ՝ ապրիլի 10-ին 24-րդ հետևակ զինվորներն ի պատասխան Փաշխտական թերթերի տա-  
րածման, վոր կատարում էր մի սպա, «Յուժանիտե»  
(Փրանսիական կոմիտեի կենտրոնական որդան) պա-  
հանջեցին, և յերբ սպան կանչեց հերթապահին, վոր-  
պետը այդ զինվորներին ձերբակալել տա, ամբողջ  
խումբն ինքը ձերբակալեց սպային և «ինտերնացիոնալ»  
յերգերով նրան կարցերը տարավ :

Նույն ամսին պահեստի զինվորները Տուռ քաղա-  
քում յերեք անգամ ցույց կազմակերպեցին պատերազ-  
մի դեմ : Սիսոնի լազերում 21 պահեստի զինվորներ յե-  
րեք շաբաթ անընդհատ ամեն տր ցույց եյին անում վատ  
անդի և կարգապահութեան դեմ, բայց ամենից սուսջ  
ցուցադրում եյին իրենց համերաշխութեանը կարմիր  
բանակի հետ :

Ալժիրիայի մեծ մանեվրների ժամանակ «Փարիզ»  
և «Պրովանս» խոշորագույն կրեյսերների նավաստիներ  
ից 150 հոգի հրաժարվեցին նախագահ Դումերգի դա-  
լըստյան առթիվ կայացած հանդեսին մասնակցելուց,  
իջան ալժիրական ափը և «ինտերնացիոնալ» յերգերով  
փողոցներում ցույց սարքեցին :

Վերջին տարում առանձնապես հաճախա՛ի դար-  
ձան զինվորական բանտերում փակված նախաստիներ  
բունտերը անողոք վերաբերմունքի դեմ : Այդպեսի մի  
բունտի առթիվ Տուլոնում կայացած դատավարութեան  
կապակցութեամբ Ֆրանսիայի բուրժուազիան առաջին  
պարտութեանը կրեց—զինվորական դատարանն արդա-  
րացրեց 15 մեղադրյալ նախաստիներին, վորոնք ապրա-

տամբել եյին զինվորական բանտում : Այդ արդարա-  
ցումը հետեւանք էր նավաստիների և բանվորների  
մասսայական շարժման ճնշման, վորոնք բուն ուժով  
խուժեցին դատավարութեան սրահը, կոմյերիտիստ-  
թեան ներկայացուցչի յելուցի ժամանակ դատավա-  
րութեանը միտինդ դարձրին, իսկ արդարացուցիչ դա-  
տավճույց հետո, բոլոր նավաստիները բանվորների  
հետ յեղբայրացման ցույց կազմակերպեցին :

Ֆրանսիայում տեղի ունեցած մանեվրների ժամա-  
նակ, բանվորները մերժեցին սպաներին սենյակ տրա-  
մաղքել և դեմոնստրատիվ կերպով յեղբայրացան զին-  
վորների հետ, նրանց հյուրասիրելով. աղբարնակչու-  
թեանը չենթարկվեց իշխանութեան կարգադրութեան  
ներին : Շամպանիայում բնակչութեանը մանեվրների  
վայրը տանող ճանապարհը դարդարել էր «կորէն մա-  
նեվրները, կորչի՛ պատերազմը» մակադրութեաննե-  
րով :

«Լեհաստանում փողոցի համար ծավալվող պայքարն  
արդէ՛ն սկսում է ներքործել բանակի առանձին ողակ-  
ների վրա : Չինվորական կարգապահութեանը խախ-  
տելու դեպքերը զինվորների կողմից հաճախակի յեն  
տեսնում : Այս հողի վրա մենք ակամատես ենք զինվո-  
րական մի քանի յեյուցիներ (Ռեմբերգովում, Ալիտ-  
րական մի քանի յեյուցիներ (Ռեմբերգովում, Վարչավայում, Լո-  
նեվիցում, Մինսկ-Մավովեցկում, Վարչավայում, Լո-  
նեվիցում) : Իր մարտական բնույթով ամենից ավելի աչքի  
ընկավ Ռեմբերգովը, վորտեղ զորանոցների առաջ տեղի  
ունեցավ 150 զինվորների միտինդ, վորոնք իրենց հա-  
մերաշխութեանն եյին արտահայտում հակաֆաշիստա-  
կան լազերի նկատմամբ : Իսկ յերբ հրամանատարու-  
թեանը կամեցավ պատժել միտինդարարներին, Ռեմ-

բերդովում յեղած ամբողջ գումարտակը դուրս յեկավ նրանց պաշտպանելու: Չինվորները նույնպես հըրաժարվեցին ռազմական ճանապարհի շինարարությունում աշխատելուց: Վարչավայում ՏՕՈ զինվորներ բանվորները հետ միասին միտինգ արին: Վերջին տարում զինվորների թիվը զինվորական բանտերում և ձերբակալվածների քանակը կրկնապատկվեց:

Այս ամենը դեռևս բանակը թափանցող խլրտումների նախնական հայտանիշներն են: Ընդհանրացնել նրանց կլիներ վաղաժամ:

Բայց այս յերևյալների մեծ մասն ընթանում է առանց մեր ղեկավարության: Այնուամենայնիվ չի կարելի ասել, թե բանակի և բանվորության միջև չինական պարխպ է քաշված: Չինվորների մասսան ընդհանուր դժգոհությամբ է վարակվում և հետզհետե սկսում է արձականդել հեղափոխական դեպքերին» (պլենումի նյութերից):

2. ԿիՊԿ-ի XI պլենումը միջազգային ներկա իրադրությունում պրոլետարական Ֆրոնտի ոտրատելիական և տակտիկական խնդիրները բնութագրելիս, ընդգծեց.

«Մտավիզող համաշխարհային տնտեսական ճգնաժամը, վաճառահամման շուկաների համար իմպերիալիստական պետությունների միջև մղվող պայքարի հետևանքով, խորանում է, կրկնապատկվում են իմպերիալիստական բոլոր հակասությունները, տալով նրանց առանձին սրություն: Մեծանում է պատերազմական կոնֆլիկտների վտանգն իմպերիալիստական պետությունների միջև: Բայց իմպերիալիստների շահերի հակասության աճումը չի թուլացնում, ընդհակառակը,

սրում է հակախորհրդային ինտերվենցիոնիստական պտերազմի վտանգը» (XI պլենումի բանաձեվից):

«Վարելվորագույն միջազգային հիմնական լողունգն ընդդեմ իմպերիալիստական պատերազմների և հակախորհրդային զինված ինտերվենցիայի վտանգը համադրանում է Խ. Միության պաշտպանությունը և նրան հետ կապված՝ գաղութային բոլոր հեղափոխությունների պաշտպանությունը: Այս հիմնական լողունգի կապակցությամբ՝ պրոլետարական ֆրոնտի հիմնական խնդիրն է — զանազան յերկրները պրոլետարիատի ինդիլին է — զանազան նվաճումը: Առաջադրելով Խ. Միության մեծամասնության նվաճումը: Առաջադրելով Խ. Միության, չինական և այլ գաղութային հեղափոխությունների պաշտպանությունը պրոլետարիատի մեծամասնության նվաճման խնդրի առնչությամբ, մեզ համար պարզ կլինի այն, թե ինչպիսի անհրաժեշտություն ունի մասսայական յերևյալների նախապատրաստությունի մասսայական յերևյալների տապալման համար, վերսնը սեփական բուրժուազիայի տապալման համար, վերսնը սեփական և համաշխարհային բուրժուազիայի ու սոցիալդեմոկրատիայի դեմ մեր ծավալելիք միջազգային հակապատերազմական պայքարի ընդհանուր ստրատեգիական նպատակն և հանդիսանում: Յուրաքանչյուր հակահարձակում ընդդեմ կապիտալիստական հարձակահամադրանից յերևյալից և մեր ֆրոնտի համար, յուրաման՝ առաջիկությունն է մեր ֆրոնտի համար, յուրաման՝ առաջիկությունն է համաշխարհային բուրժուափոխություններից՝ հարված է համաշխարհային բուրժուազիային և միջազգային սոցիալդեմոկրատիային, յուրաքանչյուր նոր մարզ, վոր խորհրդային է դառնում Չինաստանում, նոր ամբացում է Խ. Միության և համաշխարհային սոցիալիզմի: Մեր պայքարի ուժեղացումն ընդդեմ յերկրորդ և Ամստերդամյան ինտեր-

նացիոնալիստները, սոցիալ-դեմոկրատական բանվոր-  
ների սխտեմատիկ զբաղմամբ, մեր միասնական պլա-  
նի կիրառման աշխատանքի կարեւորագույն ստրատե-  
գիական խնդիրն է հանդիսանում :

«Կոմունիստական կուսակցութեանը պայքարն  
իմպերիալիստական պատերազմի դեմ և Ս. Միութեան  
պաշտպանութեան համար, անխղճի կերպով կապված  
և ճշմարտագիտից դուրս գալու հեղափոխական յեղքի  
հետ :

«Այս պատմական հարցի առնչութեամբ կարեւոր-  
ագույն խնդիրն է—իմպերիալիստական համաշխար-  
հային սխտեմի ամենաթույլ ողակներից յեղնելով՝  
ամբասցնել հեղափոխական դասակարգային ֆրոնտը :  
Հեղափոխական դործողութեանները կապիտալիստա-  
կան յերկրների տրեստացիա, կապիտալի արդյունա-  
բերական վայրերում և դյուղերում, լավագույն ձե-  
վով կապահովեն մեր աջակցութեանը Ս. Միութեան  
հնգամյակը չորս տարում կատարելու դործին» (ընկ.  
Տելմանի ճառից) :

«Իմպերիալիստական պատերազմները սեփական  
բուրժուազիայի դեմ ուղղված քաղաքացիական պատե-  
րազմի վերածելու լողունները բանավոր և դրավոր  
պրոպագանդայի միջոցով պետք է մասսայականացնել  
ժողովրդական ամենալայն մասսաների մեջ : ՍՍՀՄ-ի  
աշխատավորութեան դեմ ուղղվող պատերազմը սեփա-  
կան բուրժուազիայի դեմ քաղաքացիական պատերազ-  
մի վերածելու լողունը ամենաթողովրդականացված  
լողունը պետք է դարձնել կապիտալիստական յերկր-  
ների բանվորութեան միլիոնավոր մասսաների համար»  
(XI պլենումի բանաձեւից) :

«Կոմունիստական իրենցի տարածման պարտա-  
կարեւորութեանը՝ դորքերի մեջ համար սխտեմատիկ աշխա-  
տանք տանելու հատուկ անհրաժեշտութեանն է իր մեջ  
պարունակում : Այնտեղ, ուր այդ աշխատանքի արդե-  
ված է բացառիկ որեւէներով, ապա պետք է կատա-  
րել անլեզալ ճանապարհով : Այդպիսի աշխատանքից  
հրաժարվելը հավասարազոր է հեղափոխական պարտա-  
կանութեանը դավաճանելուն և III Ինտերնացիոնալի  
պատկանելիութեան հետ անհամատեղելի լինելուն» (Լե-  
նին, Կոմինտերնի մեջ ընդունվելու թիզիաների մասին,  
վորոնք ընդունված է Կոմինտերնի II կոնգրեսում) :

### III. ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՎԵՐԵԼԻՔԸ ՅԵՎ ՀԵՂԱ- ՓՈՒՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԱՐՐԵՐԻ ԱՃՈՒՄԸ 1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՍՈՑԻԱԼ-ԲԱՆԱ- ԲԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Համաշխարհային ճղնաժամի ամենագլխավոր հե-  
տեվանքը հանդիսանում է բանվոր դասակարգի հետա-  
պահ հեղափոխականացումը և դասակարգային պայքարի  
սրումը, վորպես հետեվանք այն շտեմոված հարձակ-  
ման, վորը դործում է կապիտալը բանվոր դասակար-  
գի կենսական մակարդակի վրա բոլոր դեբերով :

«Բուրժուազիան ամենամեծ կատաղութեամբ հար-  
ձակվում է բանվոր դասակարգի և աշխատավորական  
մասսաների վրա, աշխատելով անտեսական կողոպտման  
միջոցների ուղնութեամբ աշխատավորութեան ուսերին  
պցել ճղնաժամի բոլոր հետեվանքները (մասսայական  
արձակուրդներ և դորձադրկութեան, աշխատավարձի  
ընկում, բանվոր դասակարգի, դյուղի աշխատավորու-

թյան և քաղաքային չքավորութեան հարկերի բարձրացում, մաքսային դրույքների բարձրացում, մանրածախ գների արհեստական պահպանում, սոցիալական սպահովութեան կրճատում և այլն): Կապիտալիզմի այս հարձակումը պրոլետարիատին ամենախիստ մասնատյական աղքատութեան աղետների յե դատարարություն: Պատմութեան մեջ աննայնությունը գործաղբուհութեանը, վոր ընդգրկում է 35 միլիոն արդյունաբերական բանվոր (բացի այդ վիճակագրութեամբ հաշվի չառնված դյուղատնտեսական պրոլետարիատի միլիոնավոր գործազուրկներից, հատկապես դաղութներում, և կիսագաղութներում), ճնշում և աշխատանքի չուկայի վրա և ողտագործվում է կապիտալիստների կողմից անարգել իջեցնելու ձեռնարկութեաններում դրազված բանվորների աշխատավարձը» (ընկ. Մասունիսկու գեկուցման թեզիսներից):

Բուրժուազիան ձգտում է ստեղծել նոր շատ ավելի վատթար մի դոյավիճակ բանվոր դասակարգի համար, քան այդ յեղել է մինչև հիմա:

Բայց կապիտալի այս հարձակումը ծնունդ է տալիս բանվոր դասակարգի արագորեն աճող և ակտիվ դիմադրութեան: «Պետք է խելքը թոցրած լինել կարծելու համար թե բանվոր դասակարգն անմուռն է թույլ կտա, վոր փետրազարդեն իրեն, հանուն կապիտալիզմի կասկածելի փրկութեան» Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև դասակարգային պայքարը սրվում և ուժեղանում է արտք թափով: Իսկ դա տեսնում է գեպի խոշոր մարտեր բանվոր դասակարգի բուրժուազիայի միջև:

Ճգնաժամի յերկրորդ հետեվանքը գյուղացիական մասսաների ռադիկալիզացիան է: Ագրարային ճգնաժամը, գներն խոշոր ու տեվական անկումը, արդյունաբերական և դյուղատնտեսական գների «մկրտի» յերկարամյա դոյութեան պայմաններում, «վերջին աստիճանին է հասցրել ծանր դյուղացիական տնտեսութեանը, վոր առանց այդ էլ ճգնված էր վարձակալական բարձր վճարների, վաշխառուական փոխառութեանների ստրկացնող տոկոսների, անընդհատ աճող հարկերի և միլիտարիզմի ծանր լծի տակ»:

Դասակարգային շերտավորման պրոցեսն ուժեղանում է դյուղում: Մասսաների արագ սոցիալացումը ռադիկալիզացիայի յե յենթարկում դյուղացիութեանը:

Դյուղացիութեան ռադիկալիզացիայի այն պրոցեսն արտահայտվում է նրանով, վոր նա ամենատարջական հասարակ ձեվերի սպողիցիա յե կայմակերպում բուրժուազիայի դեմ, սարտատի յե յենթարկում հարկավճարումը կամ բացահայտորեն հրատարկում է վճարել (Հեղհաստան, Արեվմայան Ուկրայինա), հրկիզում և կալվածատիրական ազարակները (Արեվկիզում և կալվածատիրական ազարակները (Արեվմայան Ուկրայինա, Մեքսիկա), մասսայական տարբերային ապստամբութեաններ և բարձրացում (Միրիա, Պաղեստին, Լատինական Ամերիկա) և անգամ հանդույց է իսկական դասակարգային պատերազմի, վորպիսին մղում են բանվորա-դյուղացիական բանակները Չինաստանում:

Ճգնաժամի յերրորդ հետեվանքը այն հարաճուն դժգոհութեանն է, վոր ծալվում է պետական և մասնավոր ծառայողական խավերի, ինտելլեկենցիայի և արդյունաբերութեան տխնիկական անձնակազմի, մանր

առևտրականների, գործակալների, արհեստավորների, մանր արհեստանոցների տերերի և վերջապես այսպես կոչված միջին դասի մեջ: Իսկ դա շատ կարևոր մի գործոն է հանդիսանում, վորովհետև այդ խավերը ներկայումս ազդարենակչության մի խոշոր մասն են կազմում:

Կի՞րի—ի ՃԱ պլենումի թեգիսները հետևյալ կերպ են բնորոշում կապիտալի հարձակումը:

«Կապիտալի հարձակումն ուղղվում է վոչ միայն բանվոր դասակարգի դեմ, այլև քաղաքի և գյուղի աշխատավորական ամենալայն մասսաների դեմ, վորոնց կենսական շահերը նրանց՝ մղում են միասնական Փրոտնտ կաղմել պրոլետարիատի հետ՝ ընդդեմ ավազակային մոնոպոլիստական կապիտալի: Աշխատավորության մեջ աճում են մահացությունը, պոռնկությունը և ինքնասպանությունները: Կապիտալի հարձակումն ստանձնապես կատաղի յե զաղութներում, վորտեղ բանվոր դասակարգն իմպերիալիստական և բնիկ բուրժուազիաների յերկտակ ճնշման տակ լինելով, ամբողջապես հանձնված է ամենաբարբարոս շահագործման քմահաճույթին» (ընկ. Մանուելյակու զեկուցման թեգիսներից):

Յե՛վ կապիտալի այդ բազմակողմանի հարձակումն ընդդեմ բանվոր դասակարգի և քաղաքի ու գյուղի աշխատավորական ամենալայն մասսաների, հիմունք է ծառայում նրանց աճող ախտիւթյան հեղափոխական վերելքի համար:

«Ռասակարգային պայքարի զարգացումը համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետագա ծավալման պայմաններում աշխատավորական ամենալայն մասս

սաներին առաջդրում է վճռական ընտրություն կատարել—կա՛մ բուրժուազիայի դիկտատուրա—կամ պրոլետարիատի դիկտատուրա, կա՛մ տնտեսական և քաղաքական ստրկություն—կա՛մ վերջ կապիտալիստական շահագործման և հարստահարության, կա՛մ դաշտիւթային հարստահարություն և իմպերիալիստական պատերազմներ—կա՛մ խաղաղության և ժողովուրդների յեղբայրական հարաբերություններ, կա՛մ կապիտալիստական անարխիա և ճգնաժամեր—կա՛մ սնարխիան և ճրգնաժամերը վերացնող տնտեսության սոցիալիստական սիստեմ» (ընկ. Մանուելյակու զեկուցման թեգիսներից):

## 2. Հեղափոխական վերելք

Ինչո՞վ է բնորոշվում հեղափոխական վերելքը:

«Հեղափոխական վերելքի ծավալումն իր արտահայտությունը գտավ՝

ա) գործադուլային պայքարի հետագա որժան և գործադուլիների շարժման,

բ) Չինաստանի տերիտորիայի զգալի մի մասում, խորհուրդների և Կարմիր բանակի զարգացման ու ամրացման,

գ) գաղութների հեղափոխական շարժման ուժեղացման,

դ) հեղափոխական գյուղացիական շարժման զարգացման,

յ) մի շարք խոշորագույն կոմկուսակցությունների (Գերմանիայի, Չինաստանի, Չեխո-Սլովակիայի, Էսպանիայի) քաղաքական և կաղձակերպական ողողցության աճման,

դ) սոցիալ-դեմոկրատիայի ներուժ, ուղղիցիոն իլլրտուճների չեչառակի ուժեղացման և

ե) քաղաքի մանր-բուրժուական մասսաների, ծառայողների և աստիճանավորների ուղղիցիայի աճման մեջ» (Թեղիսներից) :

Ներկա հեղափոխական վերելքը շատ բանով է տարբերվում 1918-1919 թ. թ. վերելքից :

«Ներկա հեղափոխական վերելքը հեղափոխութան և պատերազմների յերկրորդ հատուցող շրջանի վերելքն է : 1919-1919 թ. թ. առաջին շրջանից նա տարբերվում է նրանով, վոր դեռևս չի հասել 1918-1919 թ. թ. վերելքի լարվածութանը, բայց նա ընթանում է այնպիսի մի ժամանակ, — յերբ գոյութուն ունի սոցիալիզմ կառուցող և սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումն արդեն ավարտող պրոլետարական դիկտատուրայի ամբողջ պետութուն, — յերբ գոյութուն ունի բանվորական շարժման այնպիսի մի շերտավորում, վոր 1918-1919 թ. վերի համեմատութամբ շատ առաջ է դնացել, — յերբ գոյութուն ունեն քաղաքականության ամուր կուսակցութուններ, բանվոր դասակարգի այն տասներկու տարվա փորձից հետո, վորի ընթացքում սոցիալ-դեմոկրատիան մի շարք առաջավոր կապիտալիստական յերկրներում իշխանութան դերերն անցավ, — յերբ կապիտալիզմի բոլոր հակասութունների սրումը շատ ավելի խորն է հասուցացել, քան 1918-1919 թ. թ. (ընկ. Մանուիլսկու ղեկուցումից) :

«Ուստի հեղափոխութունների և պատերազմների յերկրորդ շրջանը կցնցի աշխարհը շատ ավելի խոր ու շատ ավելի լայն մի ցնցումով, քան 1918-1919 թ. թ.

վերելքը, և իր թափով շարունակութունը կլինի 1917 թ. հոկտեմբերի, պրոլետարիատին հաթթանակ տալով մի շարք կապիտալիստական յերկրներում» : Դա սուկ ճգնաժամի հետ կապված կոնյունկտուրային կարգի հեղափոխական վերելք չի, այլ այնպիսի մի վերելք, վոր մի ամբողջ պատմական դարաշրջան է ընդգրկում, վորը նախապատրաստել են կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի դարաշրջանի բոլոր հակասութունները, վորը տարածվել է ամբողջ յերրորդ շրջանի վրա ասանճնապես ուժեղանում է այսոր, համաշխարհային ճգնաժամի որերին :

«Բայց հենց նրա համար, վոր դա պատմական ամբողջ գոտու վերելք է հանդիսանում և վոչ թե եպիգոտիկ մի վերելք, այնտեղ հնարավոր են կոնյունկտուրային բնույթի տատանումներ : Այդպիսի տատանումների որինակներ մենք տեսանք այս տարի մեկից ավելի անգամ» : Բայց չի կարելի այնպես յերեվակայել, թե այս հեղափոխական վերելքը կծավալվի բոլոր յերկրներում և ամբողջ ժամանակ համաչափ բնույթ կունենա : Զարգացման անհամաչափութունը կապիտալիզմի անբաժան որերն է : Նա է, վոր յերեան է դալիս դատակարգային մարտերի անհամաչափ աճման մեջ :

«Յերկրներից վումանք մյուններից առաջ են անցնում, ապա փորք ինչ յետ են ընկնում թույլ տալով, վոր յերեկվա յետ մնացածներն առաջ ընկնեն : Որինակ՝ Զեիո-Սլովակիայում այս տարի գործազրկութան միջազգային որն իր պատրաստութամբ և մարտական բնույթով ավելի լավ անցկացվեց, քան մյուն յերկրներում : Բայց, չնայած մակընթացութունների և տեղատվութունների այն անհամաչափութան, հեղափո-

խական վերելքի գարգացման բնդիանուր ուղղությանն անկասկած ընթանում է վերընթաց կորագծով» (նույն տեղը) :

Այդ է հաստատում նաև դասակարգային պայքարի նոր ձևերին անցնելը :

«Այս տարվա ընթացքում ծավալված գործադուլային շարժումը ջրում է սեփորմիտների և սպորտուներսաների այն սուտը, թե ճգնաժամի ժամանակ գործադուլն անկարելի չէ : Յեվ Բեռլինում, և՛ Տուրում, և Շոտլանդիայում և՛ Հարավային Ուելսում և՛ մանավանդ Լանկաշիրում ու այլ յերկրներում պրոլետարիատը, գործադուլ արեց, և այն էլ վոչ վատ» : (ընկ. Մանուիլսկու գեկուցումից) :

Լեհաստանի մասին, որինակի համար, հաղորդում են .

«Չայերցկյան 2½ հազար ջուլհակներին հունվարյան գործադուլը, վարոնք ընդգլխմանում էյին դադյահների թիվը կրկնապատկելուն և 800 բանվոր կրճատելուն : Կրճատումից խուսափելու համար բանվորներն իրենք առաջարկեցին չարաթական յերկու որ աշխատելու մասին : Մերժում տտանալով, 3 որ մնացին գործարանում, թույլ չտալով, վոր շտրեյկերիսերները և վոստիկանները մոտ գան : Ամեն որ ընդհարումներ էյին տեղի ունենում վոստիկանության և կանանց միջև, վորոնք ցրտահար ու քաղցած բանվորներին ուտելիք էյին բերում : Վոստիկանությունը չէր համարձակվում գլորոհ տալ բանվորների վրա, վախենալով, վոր նրանք հուսահատ քայլերի կդիմեն : Այդ դիմագրությունը հարկազրեց գործարանատերերին ժամանակավորապես նահանջել :

«Նույն ձևի պայքարի բարձրագույն աստիճանն էր ներկայացնում 1200 բանվորների գործադուլը Պետրոկովում, վորը գլխավորում էյին մեր ընկերները : Գործադուլավորները դրավեցին գործարանը, բարբիկադներ բարձրացրին և մնացին այնտեղ յերեք որ : Վոստիկանները և Փաշխտական ջոկատայինները չըջապատեցին գործարանը : Յերրորդ որը կանանց մի բաղմություն հարձակվեց վոստիկանության վրա : Լոճից մի ջոկատ վոստիկանության ողնության հասավ : Գործարանատերը խոստացավ պահպանել նախկին վճարը, բայց յերբ բանվորներն աշխատանքի անցան, նա իր պահանջները վերսկսեց : Չհաջողվեց նորից գործադուլ բարձրացնել» (ընկ. Լենսկու ճառից) :

«Լեռնարդյունաբերության ասպարիզում գործադուլ անողների թիվն Անդլիայում 1930 թ. կազմում էր գործադուլավորների ամբողջ տարվա 48 տոկոսը, Յըրանսիայում՝ 40 տոկոսը և Գերմանիայում՝ 25 տոկոսը : Տեքստիլ արդյունաբերության դժով գործադուլավորների թիվը Անդլիայում 1930 թ. կազմում էր տնտեսական մարտերի բոլոր մասնակիցների 41,6 տոկոսը : Հենց միայն Բեռլինի մետաղագործների 1930 թ. աշնան գործադուլը շատ ավելի բանվորներ էր ընդգրկում և շատ ավելի աշխատանքի որ խլեց, քան այդ ամբողջ տարվա գործադուլային մնացած ամբողջ շարժումը Գերմանիայում : 1930 թ. առաջին ամիսներին գործադուլային շարժումը ծավալվեց հարաճուն տեմպերով : Միայն հունվար ամսվա ընթացքում (1931 թ.) կորած աշխուրների թիվը Անդլիայում նախորդ ամբողջ տարվա կորած աշխուրների թվի 75 տոկոսն էր կազմում (3-4 միլ. 4-5 միլ. -ի դիմաց) : Լանկաշիրում անդլիական

մանածագործների գործադուլը հաջողությամբ է վերջանում: Ֆրանսիայում 10 տարվա ընթացքում առաջին անգամն է, վոր ծավալվում է լեռնագործների գործադուլային մասսայական շարժում: Լեռնագործների տնտեսական գործադուլը Ռուրում աննախընթաց սուր քաղաքական բնույթ է ստանում:

Վերջապես Հնդկաստանում, Բոմբեյի մանածագործների 1930 թվի պարուսթյունից հետո, գործադուլային շարժման նոր ալիք է բարձրանում: Գործադուլ են արել 100.000 ջուտագործ բանվորներ, վորոնք լողում են յերկհերթյա աշխատանքից մեկ հերթի աշխատանքի անցնելու հետևանքով սկսված մասսայական արձակուրդների դեմ» (ընկ. Սմոլյանսկի, «Պրավդա», 1931 թ. մայիսի 1):

Գործադուլն իբրև պայքարի դեմք ողտագործները ավելի դժվարացել է: Մավալվող ճգնաժամի վորոչ քանակութամբ լրացուցիչ դժվարություններ է ստեղծում պայքարի համար: Բայց նա ստեղծում է նաև մի շարք լրացուցիչ հնարավորություններ, ըստ վորում ճգնաժամի և դասակարգային պայքարի զարգացման վորոչ աստիճանների վրա այս լրացուցիչ հնարավորությունները գերակշռում են այն դժվարություններին, վորոնց ստեղծում է ճգնաժամը:

Հնդկաստանի գործադուլային շարժումը հետևյալ կերպ է բնութագրվում.

«Յեթն վերցնենք, որինակի համար, գործադուլային շարժումը, այսպես նրա զարգացման ընթացքը հետևյալ պատկերն է ներկայացնում. 1926 թ. գործադուլավորների թիվը 186.000 էր, 1927 թ. 131.000, իսկ 1928 թ. գործադուլներին մասնակցողների թիվը ար-

դեն հասնում էր 506.000 բանվորների, իսկ կորած աշխուրների թիվը՝ ավելի քան 31 միլիոնի, 1929 թ. գործադուլավորների թիվը հասավ 531.000-ի: 1930 թ. տնտեսական գործադուլների թիվը նվազում է, գործադուլավորների թիվը հասնում է 196.000-ի, բայց դրա դիմաց մենք տեսնում ենք անցում բանվորական շարժման ավելի բարձր ձևերի—տնտեսական գործադուլներից քաղաքական գործադուլներին: Ինորոչ է քաղաքական գործադուլների խոշոր քանակությունը և նրանց համատարած բնույթը (իդեոլոգիայից, վոր ներառում էր սոցիալական վիճակագրության մեջ չեն մտնում), գործադուլներ տեղի ունեցան վոչ միայն Բոմբեյում և Կալկաթայում, այլև անցկացան Հնդկաստանի հարավային, հյուսիսային և կենտրոնական մասերը» (ընկ. Մազուտի ճառից):

Այն տեսակ տնտեսական գործադուլների տեսակաբար կշիռը, վերելքի նախորդ տարիների համեմատությամբ բարձրացել է մի քանի անգամով: Հեղափոխական վերելքի զարգացման ավելի բարձր աստիճանն արտահայտվում է ամենից առաջ նրանով, վոր կոմունիստները մի շարք կապիտալիստական յերկրներում և մի շարք առանձին դեպքերում սկսում են ինքնուրույն կերպով ղեկավարել տնտեսական մարտերը:

Բայց, ԿիՊԿ-ի X պլենումի ժամանակից սկսած մենք դեռ քիչ բան ենք արել դասակարգային մարտերի ինքնուրույն ղեկավարման գործում: Ծիշտ է, մենք այն ավելի բարձր աստիճանի վրա յենք դրել, բայց ճմեր թուլությունը նրանումն է կայանում, վոր կոմունիստական կուսակցությունների մեծ մասը դասակարգային մարտերի ինքնուրույն ղեկավարման մասին բանա-

ձեւեր հանելուց դենը շանցավ: Դասակարգային մարտերի ինքնուրույն ղեկավարման խնդիրը յերկու-յերեք շարաթիւս կամ յերկու-յերեք ամսվա ընթացքում լուծելի խնդիր չե»: Նրա իրագործումը, դեռևս յերկար ժամանակ է պահանջում: Բայց այդ խնդրի լուծումը չափազանց կարևոր է, վորովհետև «նա բանվոր դասակարգի մեծամասնութեան նվաճման մեծ խնդրի բաղկացուցիչ մասն է կազմում» (ընկ. Մանուիլսկու զեկուցումից):

Գերմանիայի գործադուլային շարժման ինքնուրույն ղեկավարման մասին ընկ. Տելմանը հաղորդում է. «Ի՞նչ է նորը Ռուրի պայքարում: Նորն այնտեղ այն է, վոր մենք ինքնուրույն կերպով, կազմակերպեցինք և վարեցինք պայքարը, թեև ռեֆորմիստները և քրիստոնեյական պրոֆիտուրյունների բյուրոկրատները հենց սկզբից իսկ ամենայն միջոցներով ընդդիմանում էին գործադուլին: Ռուրի պայքարում մենք մարտական ստրատեգիայի նոր փորձ նշեցինք: Մենք այնտեղ հանդիպեցինք հարձակողական տակտիկայի, վոր արտահայտվում էր նրանով, վոր այդ պայքարում հակառակորդը չէր, վոր մեզ համար գործողութեան որևէք էր սահմանում, ինչպես այդ յեղել էր նախորդ տնտեսական մարտերի մեծ-մասի ժամանակ, այլ մենք ինքներս էյինք գործողութեան որևէք թելադրում ձեռնարկատերերին և ռեֆորմիստներին: Այս փաստի կողքովն անցկենալ չի կարելի, նկատի ունենալով, վոր բոլոր նախորդ յերկարատև ու կարճատև տարիֆային պայմանագրերի ժամկետները լրանում էյին և վոր շարունակ, յերբ հարկավոր է լինում սկսել պայքարը, պայմանագրային ժամկետները պահպանելու ձգտում էր

նկատվում: Բոլորովին նոր մի հանդամանք, բոլորովին նոր մի փաստ է հանդիսանում այն, վոր մենք նախքան տարիֆային պայմանագրերի ժամկետների լրանալը, հեղափոխական պրոֆուպողիցիայի ղեկավարութեամբ լեռնագործներին պայքարի հանեցինք» (ընկ. Տելմանի ճառից):

«Ի՞նչ դրուժյան մեջ է հիմա բանվոր դասակարգի մեծամասնութեան նվաճման գործը: X պլենումի ժամանակվանից, բանվոր դասակարգի մեծամասնութեան նվաճման գործին ամենից ավելի մոտեցած այն չորս կուսակցություններից, վոր նշել էր պլենումը (գերմանական, լեհական, չեխո-սլովակիական, Ֆրանսիական կոմկուսակցությունները) միայն գերմանական կոմկուսակցությունն էր, վոր իրոք լուրջ քայլ արավ, այդ խնդրի լուծման ուղղութեամբ վերջին ժամանակներս վատ չի սկսել աշխատել նաև Չեխո-սլովակիական կոմկուսակցությունը, փոքրիկ հաջողություններ ունեցավ Լեհաստանի կոմկուսակցությունը, իսկ Ֆրանսիական կոմկուսակցությունը անգամ փոքր յետ դնաց» (ընկ. Մանուիլսկու զեկուցումից):

Դեռևս Կիյի-ի X պլենումը նշում էր, վոր շատ դեպքերում տնտեսական գործադուլները մասսայական քաղաքական գործադուլների յեն վերծվում: Մասսայական քաղաքական գործադուլի հարցը շատ ավելի սկիտուալ նշանակություն է ստանում ներկայումս:

«Մասսաների արագ հեղափոխականացումը, իշխող դասակարգերի ղեղորիննացիան, հապիտայի պետական մեքենայի վորոչ կազմալուծումը և սոցիալ-դեմոկրատիայի ներսում տեղի ունեցող խորը խլրտումները դասակարգային պայքարի այդ գեներ հաջող ոգտա-

գործման նախադրյալներ են ստեղծում: Առանձնապես մեծանում է մասսայական քաղաքական գործադուլի նշանակությունը, վորպես գործող ֆաշիզմի և ինտերվենցիայի վտանգի դեմ պայքարելու միջոցի», (ընկ. Մանուհիլսկու զեկուցումից):

«Այսոր մենք այլևս չենք դնում անտեսական պայքարի քաղաքականացման հարցը, բայց ուժեղ ընդգրծում ենք ամեն մի անտեսական պայքարի քաղաքական բնույթը: Հեղափոխական պրոֆուպոզիցիայի նշանակությունն արտահայտվում է իբրև կադրակերպչական և քաղաքական մի կենտրոն, վոր պետք է ղեկավարի ինքնուրույն պայքարը և այն լրջորեն կենսադործի» (ընկ. Տելմանի ճառից):

«Հենց յերկրում հասունացող հեղափոխական ճղճնաժամի պահին է, վոր մասսայական քաղաքական գործադուլը ազիտացիայի և պրոպագանդայի լոզունգից գործողություն յե վերածվում: Այդպես էր Ռուսաստանում 1905 թ. այդպես էր Գերմանիայում 1918-1923 հեղափոխական տարիներին, այդպես է Հիմա Իսպանիայում, Չինաստանում, Հնդկաստանում, այսինքն բոլոր այն տեղերում, ուր իշխանությունը յերերվում է և ուր բարձր խիում է հեղափոխական ալիք» (ընկ. Մանուհիլսկու զեկուցումից):

Ընկ. Տրիլյան Իսպանիայի քաղաքական գործադուլի մասին հետևյալը հայտարարեց պլենումում.

«Այս գործադուլային շարժման բնույթը, այս շըրջանի մասսայական գործադուլների մեծ մասի գուտ քաղաքական բնույթը, — նույնիսկ բացակայել է նախապատրաստական աշխատանքը, նույնիսկ բացակայել են փաստակ դասակարգային բովանդակություն ունեցող

լոզունգներ, նույնիսկ նրանք յեղել են տարերային, չընայած նաև այն փաստին, վոր այս բացօթյա հետևանքով հանրապետական բուրժուազիան և նրա սոցիալիստական ու անարխո-սինդիկալիստական ազնաները մասամբ հնարավորություն ունեցան այդ շարժումները ընդ ուղղել իրենց կամեցած հունով. — գործադուլների այս գուտ քաղաքական բնույթն Իսպանիայի ճգնաժամի պայմաններում ցույց է տալիս, վոր աշխատավորական մասաները այլևս չեն կամենում ապրել այնպես, ինչպես առաջ, և նրանք արդեն մարտնչում են հասարակարգի սոցիալիստական վերակազմության համար»:

«Բայց չի կարելի մեխանիկորեն բոլոր յերկրների վրա փոխադրել այն, ինչ Լենինը գրում էր մասսայական քաղաքական գործադուլի մասին 1905 թ. պայմաններում: Խոչորագույն կապիտալիստական յերկրներում պրոլետարիատը գնում է վոչ թե ղեպի բուրժուազեմոկրատական հեղափոխությունը, այլ ղեպի պրոլետարական հեղափոխությունը: Այստեղ դասակարգային ուժերի այլ դասավորում կա, այլ կերպ է դրվում հարցը պրոլետարիատի դաշնակիցների մասին, այլ է սոցիալ-դեմոկրատիայի աղըեցությունն աստիճանը և այլն: Տնտեսական գործադուլներից քաղաքական գործադուլների անցնելը այս յերկրում շատ ավելի դժվար է, քան Չինաստանում, Հնդկաստանում, Իսպանիայում: Այստեղ հարկավոր է ավելի մեծ քաղաքական և կազմակերպչական աշխատանք դասակարգային մարտերի ինքնուրույն ղեկավարությունն ձեռք բերելու, սոցիալ-դեմոկրատիայի — մասսայական քաղաքական գործադուլի իրադործման այդ ամենագլխավոր խոչընդոտի — մասսայական բազան պայթեցնելու համար:

ՅԱյնինչ գործնականում կոմունիստները մասսա-  
յական քաղաքական գործադուլի կիրառման հարցը չեն  
կապել դասակարգային մարտերի ինքնուրույն ղեկա-  
վարման և սոցիալ-դեմոկրատիայի աղղեցութեան պայ-  
թեցման խնդրի հետ, խոշոր հույսեր են դրել տարե-  
րայնութեան մոմենտի վրա:

«X պլենումից հետո շատ կոմունիստների սխալը  
նրանումն է յեզել, վոր նրանք բանվոր դասակարգի  
մեծամասնութեան նվաճման, դասակարգային մարտե-  
րի ինքնուրույն ղեկավարման խնդիրը դիտել են իբրև  
մի խնդիր, վոր կարելի չէ իրադրոճել միայն ճիշ գործ  
ղնելով: Այս սխալը պատահական չէր: Այդ նրանց մոտ  
առաջացել էր չնորհիվ այն սխալ դիրքավորման, վոր  
ունեն նրանք հեղափոխական վերելքի բնույթի և տեմ-  
պերի մասին: Այս ընկերները չափազանց կրճատում ե-  
լին նրա ժամկետները, դուհկացնում էլին նրա շար-  
ժումը, այն պատկերացնելով իբրև առանց դանդաղում-  
ների, առանց կոնյունկտուրային տատանումների ան-  
ընդհատ բարձրացող մի յերևույթ: Այս սխալը կրկնա-  
պատկվում էր նրանի, վոր հեղափոխական վերելքի  
հարցը դրվում էր խիստ վերացական, մեխանիկորեն,  
առանց հաշիի առնելու նրա տեմպերն ու զարգացման  
ձևը վորոշող ամեն մի առանձին յերկրի սպեցիֆիկ ա-  
ռանձնահատկութունները: Իսկ առյալեսի դիրքավո-  
րում հանդում էր կազմակերպչական «սև» աշխատանքի  
բարդ ու աշխատանք պահանջող խնդիրների վրայից  
անցնելուն, ինքնահոսի ու տարերայնութեան կողմնո-  
րոշում էր ստալին, չափազանց դուհկացնում էր վորջ-  
կուսակցական խնդիրների դրումը» (ընկ. Մանուիլսկու  
գեկուցումից):

«Մինչև 1929 թ. վերջը, վերելքի բնորոշման գե-  
րակշռող ձևը գործադուլային շարժումն էր: Ներկա-  
յումս գործադուլների հետ միասին տվելի ու ավելի  
լայն չափերով են սկսում կիրառվել նաև սյայբարի  
այլ ձևերը—գործադուլիների ցույցեր, մասսաների  
և վոստիկանութեան ընդհարումներ, հարկեր վճարելու  
մերժում, դյուղացիական ապստամբություններ, ուր  
կիրառվում են սյայբարի այսպիսի ձևեր, ինչպես Արև-  
մտյան Ուկրայինայում» (ընկ. Մանուիլսկու գեկու-  
ցումից):

Բերենք մի քանի որինակներ:

Լեհաստանում:

«Գործադուլիների ցույցերի ալիքը վողոճել է վողո  
Լեհաստանը, համակելով վոչ միայն քաղաքային բան-  
վորներին լայն մասսաներին, այլև դյուղական չբավո-  
րութեան զգալի մի մասին: Թերևս չկա գործադուլու-  
թեան վոչ մի կենտրոն, վորտեղ ցույց կատարված չը-  
լինի: Մի քանի քաղաքներում ցույցերը կրկնվում էլին  
մի քանի անգամ: Սրանք սուկ առաջամարտիկների յե-  
լույթներ չեն, այլ Փաշխատական տերրորի պայմանե-  
րում մասսայական կամ համեմատաբար մասսայակա-  
ն ցույցեր, վորոնց մեծ մասը գլխավորում է մեր կուսակ-  
ցությունը: 2-4 հազար բանվորների ցույցեր, վորոնք  
անցյալ տարի հաղվադեպ էլին, այսօր հաճախակի յեն  
դարձել:

«Ինչպես գործադուլային շարժման մեջ, այնպես  
և այստեղ, մենք նկատում ենք ձևերի դուզորդություն,  
գրոհի տարրերի զգալի գերակշռություն: Ճիշտ է, լի-  
նում են դեռևս դեպքեր, յերբ մասսան, վոստիկանու-  
թեան միջոցով ցրիվ դալու ժամանակ պատկում է դետ-

նին, առաջինսով յուր դիմադրութիւնը թույց տալով (բենձին) : Բայց մեծ մասամբ նա քար է արձակում, զըրհում, հարկադրելով, վոր հանկարծակիի յեկած իշխանավորները նպաստ բաց թողնեն (դրամով, մթերքով, բռնելով), յերբեմն ել՝ ազատեն ձերբակալվածներին : Փամփուշտ չխնայելով մեկտեղ, վոստիկանութիւնը ավելի ու ավելի հաճախ է սկսում դադեր գործածել» (ընկ. Լենսկու զեկուցումից) :

«Այսպես, որինակ, Գրոզնայում մասսան մեծ վրձնականութեամբ դուրս յեկավ յերկու ձերբակալվածների սրահապանութեան համար, սպառնալով ջարդ ու փշուր անել վոստիկանատունը : Իզուր պեպեեստականները կոչ արին գործադուրկներին ցրիվ գալու : Նրանց ի պատասխան մասսան բղավում էր—«կորչեն վոստիկանութեան սգնականները» : Այն ժամանակ վոստիկանութեան պարետը գործադուրկներին առաջարկեց, — դաշտ հատկանշական է, — պատգամավորութիւն ընտրել, վորպեսզի միասին գնան կոմիտեիատը և ձերբակալվածներին բերեն : Բայց բանվորները նրան պատասխանեցին, վոր իրենք բոլորն ել սրտագամավորներ են և ձերբակալվածներին իրենք ել կազատեն : Յերբ գործադուրկների շարքերից սկսեցին հնչել «Դեպի Գոմիսարիատ», «ինքներս ազատենք ձերբակալվածներին» աղաղակները, այն ժամանակ ազատեցին ձերբակալվածներին և բերին ցուցարարների մոտ : Նույնը տեղի ունեցավ նաև Բելոստոկում» :

«Հունվար և փետրվար ամիսներին գործադուրկների կողմից բազմապետարանի և բարաշի գրավման 15 դեպք է յեղել : Գործադուրկների յեւույթները մոտ 100-ի յեմ հասնում, ըստ վարում մոտ 70-ը՝ կումու-

նիստների զեկավարութեամբ» (ընկ. Լենսկու զեկուցումից) :

«Արդունաբերական-գյուղական շրջաններում ցույցերը վերածվում են քաղցած բանվորների և գյուղացիների յերթերի : Այդպիսի մի յերթ էր Նովոմեստիկում տեղի ունեցած ցույցը (հունվարի 10-ին) : Նրան միացած հարեւան գյուղերից յեկած գյուղացիները : Բաղմութիւնը քարեր արձակեց վոստիկանութեան վրա : Նեղն ընկած վոստիկաններին ոգնութեան հասան վոստիկանական նոր ջոկատներ և սահմանապահներ, վորոնք ամենից առաջ սկսեցին փակել քաղաք տանող ճանապարհները, թույլ չտալով հարեան ավանների ու գյուղերի գործադուրկներին» :

«Պողնանում տեղի ունեցած ցույցը, վորը դիմադրեց վոստիկանութեան դրոհին մոտ 7000 հոգուց էր բաղկացած : Յուցարարները խլեցին 5 ձերբակալվածների : Զոլունսկայա Վոլյայում քաղաքապետարանի առաջ գործադուրկների յերկու ցույց տեղի ունեցավ : Թուզայում ցուցարարները վոստիկաններին ծեծեցին և մի ձերբակալվածի ազատեցին : Բացի այդ, փոքր քաղաքներում գյուղացիների մասնակցութեամբ մոտ 10 ուժեղ ցույցեր տեղի ունեցան» :

«Ընդհանուր ժողովներում գյուղացիներն արդեն սկսում են բացահայտորեն Փաշիստական բյուջէի դեմ քվեյարկել : 1931 թվի հունվար և փետրվար ամիսներին Լուկոմսկի (6 գմիսաներ), Վիչկովսկի և Պելիսանովսկի գավառների մի շարք գմիսաններում (գյուղական համայնք) գյուղացիները հրաժարվեցին հարկ վճարել և հակահարկային կոմիտեներ ընտրեցին : Բուն Լեաստանի հինգ գմիսաններում նրանք

դուրս քեցին հարկային վերահացուներին: Մի ամ-  
բողջ շարք այդպիսի դեպքեր տեղի ունեցան արև-  
մտյան Բելոռուսիայում: Չորս դավառներում քաղ-  
ցածներին, զործաղուրդները բուռն ցույցեր տեղի ունե-  
ցան: Մարտական տրամադրությամբ են ընթանում հա-  
կաՓաշխատական միտինգները և գյուղացիական հա-  
մագումարները: Գյուղացիական միտինգներն իրենց  
մասյականությամբ (1-3000 հոգի) հաճախ գերազան-  
ցում են քաղաքային բանվորների ամենից ավելի բող-  
մամարդ միտինգները: Վերջի 3 և կես ամսվա ընթաց-  
քում գյուղացիական կոնֆերանսներին և համագումար-  
ներին մասնակցել է 8 հազար հոգի:

Վոչ շատ ժամանակ առաջ հողագործության Փա-  
շխատական միտնոտը հարկադրված յեզով սեյմում  
խոստովանել, վոր գյուղը «սոլառնայի տեսք» է ըն-  
դունում կարվածատերերի համար» (ընկ. Լենսկու գե-  
կուցումից):

### ՀԱՄՆ-ում:

«... Մեզ իմաց տվին, և մենք մի խումբ ընկերնե-  
րով համախմբեցինք բնակարանից դուրս նետված գոր-  
ծաղուրդի հարևաններին: Հավաքվեց մոտ 1000 բան-  
վորներ: Տուր ու դմիոց տեղի ունեցավ վոստիկանու-  
թյան հետ: Հավաքվածները նույնիսկ հրապեններ դործ  
դրին, և վերջ ի վերջո հաջողվեց դուրս շարտված իրե-  
րը նորից բնակարանը բերել: Հարևաններից պահակ-  
ներ նշանակվեցին և նրանց հերթափոխությամբ սահ-  
մանվեց մի քանի որվա համար: Այդ որվանից յերկու-  
շարասի է անցել, բայց դործաղուրդին դեռևս դուրս  
չեն նետել» (ընկ. Պյատնեցկու գեկուցումից):

### ՀՆԴԱՍՏԱՆՈՒՄ:

«... 1928 թ. սկզբներին 20 հազար ցուցաբար  
բանվորներ հեղափոխական լողունգներով շրջեցին Բոմ-  
բեյի փողոցները, այրեցին Մակդոնայլի և Սայմոնի  
հանձնաժողովի անդամների պատկերները, անցկացան  
կամիր դրոշակներով: Դա պատահական իրադարձու-  
թյուն էր հնդկական պրոլետարիատի զարգացման  
պատմության մեջ: Դա առաջին պրոլետարական ինք-  
նուրույն քաղաքական ցույցն էր: Բանվոր դասակար-  
գը հեղափոխական յերիտասարդության մասսայական  
պայքարի որինակ տվեց: Յեթե վերցնենք 1929 թվա-  
կանը, ապա այստեղ ևս մենք տեսնում ենք բանվորա-  
կան մի շարք յելույթներ ընդդեմ Ուտիլի հանձնաժո-  
ղովի, կայսերական այդ յերկրորդ հանձնաժողովի,  
վորը նշանակված էր հետադուստության յենթարկելու  
աշխատանքի պայմանները Հնդկաստանում, ավելի  
ճիշտ՝ ուղիներ վորոնել կազմալուծելու բանվորական  
հեղափոխական շարժումը, ուժեղացնելու սեֆորմիզմի  
և Հնդկաստանում անդլիական դալլրի տրեդյունոնիզմ  
ստեղծելու: Հակաիմպերիալիստական լողունգների  
տակ ընթացող մի շարք բանվորական խոչոր քաղաքա-  
կան ցույցերը և յելույթները և Նաչպուրյան համա-  
գումարում առաջացած պատակաւումներն ազդեցու-  
թյուն ունեցան հեղափոխական շարժման ընթացքի  
վրա: Յեթե վերցնենք 1930 թ. պայքարը, ապա այս-  
տեղ ևս աչքի յե դարկում պրոլետարիատի տարերային  
ներգործությունը շարժման ընդհանուր ընթացքի վրա,  
նրա պայքարի ձևերի ու մեթոդների դրոշմը, վոր դր-  
սեվորվեց մի շարք ձևերով» (ընկ. Մագուտի ձառից):

«Գործադուլային շարժումը համակում է վոչ մի-  
 այն խոչորազույն արդյունաբերական կենտրոնները,  
 այլ և, չնայած իմպերիալիստական և գոմինդանական  
 ունեւորչի գաղանական պատկերներին ու կատարի տեր-  
 բորին, նետվում է դեպի ավելի հետամնաց շրջանները՝  
 Յուլյերը և զինված ընդհարումները զնալով ավելի ու  
 ավելի հաճախակի յեն դառնում Չինաստանի զանազան  
 ուայոններում: Նրանց մասնակցում են վոչ միայն բան-  
 վորական մասսաները, այլև քաղաքային չքավորական  
 մասսաները, մանր բուրժուազիայի ստորին դասը (գոր-  
 ծակատարներ, ինտելիգենցիա, ուսանողութուն):  
 Գյուղացիական հեղափոխական յելույթները զգալիորեն  
 ավելի բարձր են քան քաղաքայինները: Գյուղա-  
 ցիական պատերազմը և պարտիզանական շարժումն ընդ-  
 զբկում են վոչ միայն Միջին և Հարավային Չինաստա-  
 նը, այլև Հյուսիսային Չինաստանի զգալի մասը: Ներ-  
 կայումս մենք ունենք արդեն ավելի քան 200 դավաու-  
 ներ, վորտեղ Սորհրդային իշխանութուն և սահման-  
 ված, 50-60 միլիոն աղբարնակչութամբ, 300-000-ա-  
 նոց կարմիր բանակով և 3-4 միլիոնանոց գյուղացիա-  
 կան ջոկատներով» (ընկ. Լյու-Սյանի ճառից):

«Այս հզոր շարժումը ճնշել չեն կարող պատեիչ  
 արչավախմբերը, կալվածատիրական, բուրժուական  
 բանակները, չի կարող խեղդել իմպերիալիստական  
 ինտելիգենցիան, վորովհետեւ չինական գյուղացիու-  
 թյունն իր դառն փորձից յեղնելով համողված է, վոր  
 խորհուրդները նրան հող և աղատութուն կտան, վոր  
 միայն խորհրդային իշխանության պայմաններում կա-  
 բելի յի ապրել առանց քաղցի, առանց աղքատության  
 և կարիքի:

Դրա համար ել ամենեվին պարմանայի չե,

վոր գյուղացիության հիմնական մասսաներին պատկա-  
 նող հարյուր և տասնյակ հարյուր միլիոնավոր չինացի-  
 ներ սփիններով ու դենքով են քվեարկում խորհուրդների  
 համար, Լենինի այն ցուցմունքի համար, վորը նա ուր-  
 վեց կոմիտեների II կոնգրեսում, թե խորհուրդները  
 կարող են ապստամբության որգաններ և իշխանության  
 որգաններ լինել նույնիսկ հետամնաց ու դադութային  
 յերկրներում, վոր միայն խորհուրդները կարող են այդ  
 ժողովուրդներին աղատել վերջնական աղքատությու-  
 նից ու քայքայումից» (ընկ. Լյու-Սյանի ճառից):

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐՃՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ի պատասխան աշխատավարձի ընդհանուր իջեց-  
 ման և աշխատանքի պայմանների վատթարացման գյու-  
 ղատնետեսության ասպարիզում բարձրանում է բառ-  
 րակների գործադուլային շարժումը, հաճախ դասակար-  
 քային պայքարի ամենակատարի ձևեր ընդունելով: Վոչ  
 մի հաշվարկման չենթարկվող և հհարկու չափերի հուս-  
 նող գործազրկությունը գյուղում և գյուղական պրո-  
 լետարիատի ու կիսապրոլետարիատի նկատմամբ վորեւ  
 պետական ապահովության բացակայությունը մի շարք  
 յերկրներում հանգել են բուռն ցույցերի և արյունահեղ  
 յերկրները՝ իշխանության ազենաների հետ: Գոր-  
 քնդհարումների՝ իշխանության ազենաների հետ: Գոր-  
 շարժումը հետզհետե ավելի ու ավելի հա-  
 ծաղուրկների շարժումը հետզհետե ավելի ու ավելի հա-  
 ծախակի դալիս է միանալու թշվառության մեջ խրված  
 գյուղացիության հսկայական բանակը: Մի շարք յեր-  
 կրներում վարձակալության վճարների, հարկերի, բան-  
 կիրներին ու վաշխատուններին ունեցած պարտքերի դեմ  
 ուղղված գյուղացիական շարժումը և չինովնիկ վերա-  
 կացուներին ու ժանդամներին ցույց տրվող դեմադրու-

Թյունը այնպիսի սպառնալի բնույթ են ստացել, վոր էշխանությունները հաճախ ստիպված են լինում զիջումներ անել: Քաղցած գյուղացիների արշավանքները դեպի քաղաքները, հացահատիկների գնացքների ու պահեստների կողոպուտները հին ժամանակների հեքյաթներ չեն, այլ կենդանի իրականություն վոչ միայն գաղութներում և յեվրոպայի ազրարային յերկրներում, այլև Հյուսիսային Ամերիկայի «բարգավաճ» հանքապետություններում: Կալվաճատիրական-կապիտալիստական ամենածանր լծի, աղբային ստրկացման և Փաշխտական տերրորի (Արևմտյան Ուկրաինա) պայմաններում ասպարեզ ե իջել նաև «կարմիր աքաղաղը»:

«Այն, ինչ կատարվում է վոչ միայն ազրարային ու գաղութային, այլև կապիտալիստական յերկրների գյուղում, վոչ մի կասկած չի թողնում այն մասին, վոր ազրարային ճգնաժամի զարգացումն առաջիկայում ընթանալու յե կալվաճատերերի և կապիտալիստների հարձակմանը դիմադրելու բոլոր ձեվերի աճման ու սրման նշանաբանի տակ, ինքնապաշտպանությունից հակահարձակման անցնելու նշանաբանի տակ» (ընկ. Կոլարովի զեկուցումից ԿիՊԿ-ի XI պլենումում):

### 3. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԱՐՐԵՐԻ ՀԱՍՈՒՆԱՑՈՒՄԸ

Առանձին յերկրների հեղափոխական ճգնաժամի հասունացող տարրերի հարցը XI պլենումի կարևոր հարցերից մեկն էր: Հեղափոխական ճգնաժամի բնութագրմանը պլենումը մոտեցավ հիմունք ունենալով մի շարք յերկրներում կատարված կոնկրետ վերլուծությունը:

«Մագալվոդ հեղափոխական վերելքը, այն անհա-

Ղոդ փորձերի կողքին՝ վոր անում է բուրժուազիան իմպերիալիստական աշխարհի հիմնական հակասությունների լուծում գտնելու համար (հատկապես զաղութներում), պայմաններ է ստեղծում հեղափոխական նրգունամալի նախադրյալների անմահ համար գերմանիստում և Լեհաստանում, հեղափոխական ճգնաժամի հետագա զարգացման համար Չինաստանում ու Հնդկաստանում և հեղափոխական ճգնաժամի նախադրյալների համար կապիտալիստական մյուս յերկրներում, համաձայն նախ և առաջ այն բանի, թե ինչքան ընդունակ է կոմկուսը մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին և գլխավորել նրանց շարժումն ընդդեմ կապիտալի հարձակման ու քաղաքական ռեակցիայի, թե ինչքան ընդունակ է նա պրոլետարիատին և մյուս աշխատավորական մուսսաներին ցույց տալ՝ հիմնվելով նրանց իսկ փորձի վրա՝ կապիտալիզմի նգնաժամից դուրս գալու հեղափոխական յեվի անհրաժեշտությունը»:

Գերմանիայում «հեղափոխական ճգնաժամի նախադրյալների աստիճանական աճումն արտահայտվում է նրանով, վոր բազմացել են պրոլետարիատի հեղափոխական ուժերը (կոմկուսակցության աճում՝ 50 տոկոսով, մասնաշխատական հեղափոխական կազմակերպությունների աճում), սկսվել է սոցիալ-դեմոկրատիայի մասնաշխատական բազայի փլուզումը, մասնաշխատական պայքար է ծավալվել Փաշխտական դիկտատուրայի դրժադրման դեմ և աշխատավորական մասսաների սոցիալական ու աղբային ազատագրման ծրագրի հիման վրա հետ ե մղվում Փաշխտական շարժումը, ժողովրդական հեղափոխության լոզունգով պրոլետարական հեղափոխության համար նորանոր խավեր են ձեռք բերվում շա-

Հագործավորների շարքերից, աճում է անասավածու-  
թյունը տիրող դասակարգերի մեջ և դրան զուգընթաց  
քաղաքական վերախմբավորումներ են կատարվում բուր-  
ժուակրայի ներսում, աճում է ամելայն մասսաների  
դժգոհությունը վերսայլյան սիստեմի և Յունգի պլանի  
դեմ: Տնտեսականի ճգնաժամը Գերմանիայում առաջ-  
նորդում է դեպի դասակարգային մարտերի ծայրահեղ  
սրումը և դեպի աճող քաղաքական ցնցումներ, վորպի-  
սին արագացնում է հեղափոխական ճգնաժամի նախա-  
դրյալների ուժեղացումը:

«Լեհաստանում, ուր արդյունաբերական և սպրա-  
րային ճգնաժամը տանում է դեպի վողջ տնտեսական  
կյանքի քայքայումը, ուր գործազրկությունն ընդգր-  
կում է պրոլետարիատի կես մասին, ուր դյուրացիա-  
կան մասսաների քայքայումը զարգանում է արագ տեմ-  
պերով,—հեղափոխական ճգնաժամի նախադրյալներն  
արտահայտվում են նրանով, վոր սրվել է դասակար-  
գային պայքարը քաղաքում և գյուղում և այլն), սրվել  
են ճնշված ազգությունների պայքարը (Արևմտյան Ու-  
կրայնա), խլրտումներ են սկսվել սոցիալ-Փաշիստա-  
կան և Փաշիստական կուսակցությունների ստորին խա-  
վերում, գնալով ավելի ու ավելի յե սեղմվում պիտու-  
ղչչինայի մասսայական բաղան և նրա կապերը մասսա-  
ների հետ (դժգոհության աճում Փաշիստական «բան-  
վորական» կուսակցության, լադերի ներսում), ամրա-  
նում է կոմունիստական կուսակցությունը»:

Իսպանիայում «հեղափոխական ճգնաժամի տարբե-  
րի աճումն արտահայտվում է նրանով, վոր խոշոր չա-  
փով ավելացել են պրոլետարիատի տնտեսական և քա-  
ղաքական գործադուլները, գյուղացիության մեջ հեղա-  
փոխական շարժում է սկսվում, մանր բուրժուազիան

մոսսայական շարժումով դեմ է դուրս գալիս միապե-  
տության (ուսանողական ցույցերը և այլն), խորանում  
է աղգային-ազատագրական շարժումը Կատալոնիայում  
և Բիոկայայում, քայքայվում է բանակը, չփոթություն  
է տիրում տիրող դասակարգերի և նրանց կուսակցու-  
թյունների մեջ»:

«Չինաստանում հեղափոխական ճգնաժամն արտա-  
հայտվում է նրանով, վոր խորհրդային իշխանություն  
և Կարմիր բանակ է կապմակերպվել տասնյակ միլիոնա-  
վոր ազգաբնակչություն ունեցող տերրիտորիայում,  
վորպիսին Չինաստանին առաջին տեղն է տալիս գաղու-  
թային աշխարհի ազգային-ազատագրական շարժման  
մեջ. խորհուրդների և Կարմիր բանակի կորիզի կազ-  
մակերպման փաստը պայմանավորում է պրոլետարիա-  
տի հեղեմոնիայի հաջողությունը ազգային-ազատագրու-  
կան շարժման, հակաիմպերիալիստական ու ազդարա-  
յին հեղափոխության մեջ, հեղեմոնիան, վոր արդեն  
ամրանում է պետական իշխանության առաջին տարբե-  
րով: Ազդարային հեղափոխությունից ծնունդ առած  
խորհուրդներն ու Կարմիր բանակը, հիմնվելով մասսա-  
ների համար ակնհայտ խորհրդային ռայոնների փորձի  
վրա, պայքարի յեն հանում արդյունաբերական կենտ-  
րոնների բանվորներին և գյուղացիական մասսաներին,  
վորոնք լիկվիդացիայի յեն յենթարկում կալվածատե-  
րերի Ֆեոդալական սեփականությունը, վերաբաժանում  
են հողը գյուղացիության հիմնական մասսաների ող-  
տին, ավելի ու ավելի խախտու դարձնելով հակահե-  
ղափոխական գոմինդանի դահձային ռեժիմը: Վողջ  
գաղութային աշխարհը հեղափոխականացնող չինական  
խորհրդային շարժման հետագա զարգացումը կապված

ե խորհուրդներէ և կարմիր բանակի տերրիտորիալ բազայի ընդարձակման ու ամրացման հետ»:

«Հնդկաստանում, բանվորական և գյուղացիական շարժումն ազդեցութեամբ տակ մասսաների ծավալւող և խորացող հեղափոխական շարժումն ընդդէմ անգլիական ենպերիալիզմի, այն ժամանակ, յերբ նացիոնալ-ոնեֆորմիստական բուրժուազիան բացահայտ կերպով սկսել է դավաճանական գործարքներ և հակահեղափոխական դաշինք կնքել բրիտանական իմպերիալիզմի հետ, — ներգրավում է միլիոնավոր բանվորներ, գյուղացիներ, և քաղաքային բանվորութիւնն փչրում է հակահեղափոխական գանդիզմի շրջանակները, մասսաներին սկսում է ազատագրել նրա ազդեցութեանից և անցնում է հեղափոխական պայքարի բացահայտ ձեւերին (զինված ընդհարումներ վոստիկանութեան և գորգի հետ ֆեշալարի և Շոլապուրի ապստամբութեանները, գյուղացիական ապստամբութեաններ Բիրմայում, Բերարում և այլն, ապստամբութեաններ Կոռնալուրում, մասսայական բանվորական յելույթներ ընդդէմ Գանդիի և Ազգային կոնգրեսի)» (ընկ. Մանուէլսկոյ ղեկուցման թեզիսներէց):

Լեհաստանի, Գերմանիայի, Հնդկաստանի և Չինաստանի հեղափոխական ճգնաժամի բոլոր տարրերի ուշադիր վերլուծութեան հիման վրա կիցի—ի XI պլենումը այս հաստեմացող հեղափոխական ճգնաժամը հետեւյալ կերպ ձևակերպեց.

«Աճելով կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամից և յերկու տնտեսական ճգնաժամից, զարդանալով մասսաների հեղափոխական վերելքի հիման վրա, հեղափոխական ճգնաժամի այս տարրերը կապված են մասսաների չքավորութեան և թշվառութեան անսովոր սրման

հետ, կապվում են նրանց աճող հեղափոխութեան պիտակութեան, կապիտալիստական պետութեան վողջ միջազգային և ներքին սիստեմի խախտման, դասակարգային ուժերի արագ վերախմբումն, Փարիզի, նոր իմպերիալիստական պատերազմների, և հակախորհրդային ռազմական ինտերվենցիայի ուղիներում հակասութեաններից դուրս գալու յեւթ վորոնող վերնախավերի ճգնաժամի հետ» (XI պլենումի բանաձևից):

«Ի՞նչն է այստեղ յուրահասուել: Առաջին. այս ճգնաժամն աճում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամից, այսինքն այն փաստից, վոր ԽՍՀՄ գոյութեան ունի, վոր վերստայլան սիստեմը մի շարք կապիտալիստական պետութեանների արագ նեխման համար նախադրյալներ է ստեղծել, վոր համաշխարհային եկոնոմիկայի կոնտրոնները հետպատերազմյան շրջանում անդրկովկասյան յերկրներն են փոխադրվել, վոր դոմինիոնները ձգտում են անջատվել Բրիտանական կայսրութեանից, վոր հսկա գաղութային աշխարհը ներկայումս սկսել է շարժվել: Այդպիսին են կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հիմնական դժերը, և նրանք իհարկե ազդում են հեղափոխական ճգնաժամի տարրերի դարգացման վրա: Իրանք տնտեսական տարրեր են, թե՛ քաղաքական տարրեր: Իհարկե և՛ մեկը, և՛ մյուսը: Նրանք թաղնված ձևով դրված են կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի մեջ:

«Յերկրորդ. հեղափոխական ճգնաժամի տարրերն աճում են ներկա տնտեսական ճգնաժամից, վորն իր հետն է բերել բազմամիլիոն գործազրկութեան, բանվոր դասակարգի վրա հարձակում, դասակարգային պայքարի անսովոր սրում, ինչպես նաև ընդհանուր տնտեսական ճգնաժամի բոլոր հետեւյալներէ կրկնապատիկ

բարում: Դա այսպես կոչված ավելադիր մի արդյունք է ընդհանուր կապիտալիստական ճգնաժամի ներքործության համար:

«Յերրորդ. մեր սահմաններում՝ հեղափոխական ճգնաժամը հեղափոխական վերելքից չիմական պարիսպով չի բաժանված: Նա զարգանում է հեղափոխական վերելքի հիման վրա: Դրա համար ել մեր սոված սահմանումը սխոլաստիկական չէ, նա ընդգրկում է հեղափոխական դինամիկ պրոցեսներն իրենց ամբողջության մեջ:

«Չորրորդ. հեղափոխական ճգնաժամի մեր բնութագրման մեջ դրված են հեղափոխական սխոլաստիկայի հիմնական տարրերը: Վոչ թե այն, վոր բոլոր նրանք արդեն իսկ առկա յեն. վո՛չ: Նրանք դրված են հետագա զարգացման համար: Սա ավելի մեծ բան է, քան թագնված վիճակում լինելը, բայց և այնպես սա դեռևս հեղափոխական սխոլաստիկա չէ:

«Կա մասսայի աղքատացման և թշվառացման անսովոր սրում, կա մասսաների հեղափոխական ակտիվություն, վորը վերնախավերի ճգնաժամի հետևանքով գոյացած պատուվածքներից, դուրս է խուժում: Ընդգծում ենք, վոր ժողովրդական դժգոհությունը դուրս է խուժում վերելում գոյացած պատուվածքներից, վորովհետև տեղ մենք դիսպրոպորցիայի որենք չենք սահմանում որյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների միջև: Իայց միևնույն ժամանակ մեր սահմանման մեջ հեղափոխական ճգնաժամը չի նույնացվում այնպիսի մի դրության հետ, վորտեղ վերնախավերն այլևս չեն կարողանում հին ձևվերով կառավարել, իսկ ներքնախավերը չեն կամենում հին ձևվերով ապրել, վորտեղ համատուրթյամբ դրվում է իշխանության հարցը, այսինքն՝ չի նույնանում հե-

ղափոխական սխոլաստիկայի հետ, վորը հեղափոխական ճգնաժամի բարձրագույն ձևն է հանդիսանում: Հեղափոխական ճգնաժամը հեղափոխական սխոլաստիկայի հետ չույնացնելով, մենք միաժամանակ նրանց միջև քարե պատնեշ չենք քաշում:

«Հինգերորդ-մեր սահմանման մեջ հեղափոխական ճգնաժամը կապված է կապիտալիստական տիրապետության վոչ միայն ներքին, այլև միջազգային, սխտեթյան վոչ միայն հետ: Այդ վորոչ շարվով նոր բան է, վոր մենք մտցրել ենք հեղափոխական ճգնաժամի բնորոշման մեջ: Այդ ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, վոր մենք մատնանշում ենք Ձինաստանի, Հնդկաստանի, Գերմանիայի և Լեհաստանի հեղափոխական շարժման առաջ ծառայած այսորվա դժվարությունները, վոր մենք դրանով իսկ ազդանշում ենք այն պարտավորություն-սիական, ամերիկական, ճապոնական բանվոր զատակար գը Ձինաստանի, Հնդկաստանի, Գերմանիայի, Լեհաստանի և Իսպանիայի հեղափոխական շարժման նկատմամբ:

«Վեցերորդ. Փաշիգմը մեր բնորոշման մեջ հեղափոխական ճգնաժամի ինչ վոր վճռական գործոնի դերում չի դրվում, այլ նրան տրվում է տիրող դասակարգում դեպրիեկտացիայի, բանվոր դասակարգին ճնշող ու միջոցով իրենց դրությունից դուրս գալու յելք վորոնելու ձգտման հատկանիշներից մեկի համեառ դերը:

«Յեկ վերջապես, յոթերորդ, հեղափոխական ճգնաժամի մեր բնորոշման մեջ ընդգծվում է, թե ինչու՞ մենք հեղափոխական ճգնաժամի կապակցությամբ խոսեցինք իմպերիալիստական նոր պատերազմների և հակափոր-հրդային ռազմական ինտերվենցիայի վտանգի մասին: Գրգային ռազմական ինտերվենցիայի վտանգի մասին: 121

Պատահականն և այդ: Վոչ, մենք ընդդժեցինք ներքին  
հակառթյունների սրման հետ կապված իմպերիալիս-  
տական պատերազմների վտանգը և մանավանդ Սորհր-  
դային Միության դեմ ուղղված հակահեղափոխական  
պատերազմի ավելի մեծ վտանգը նրա համար, վորպես-  
զի ցույց տված լինենք հեղափոխական ճշմարտամի աճ-  
ման և զարգացման պրոցեսի դիալեկտիկական ընույթը:

«Մենք այդ ընդդժեցինք հենց նրա համար, վոր-  
պեսզի ցույց տված լինենք զարգացման այն դիալեկտի-  
կական պրոցեսը, վորի հետ կապված է հեղափոխական  
ճշմարտամի տարրերի զարգացումը: Դրանով մենք հե-  
ղափոխական ճշմարտամը չենք պատկերացնում վոր-  
պես ինչ վոր միակողմանի պրոցես, վոր միայն ղեպի  
վեր է դնում, այլ այն վերլուծում ենք ծայրաստիճան  
սրվող դասակարգային պայքարի դիալեկտիկական  
փոխազդեցության մեջ: Դրանով մենք ղեն ենք նետում  
այն բոլոր սխեմատիկական Փորմուլաները, թե հեղա-  
փոխական ճշմարտամի աճումը կապված է միմիայն պրո-  
լետարիատի հարձակման հետ, այլ դասակարգերի հար-  
ձակման ու ինքնապաշտպանության հարցը յենթակա  
յենք դարձնում ուժերի փոխհարաբերության կոնկրետ  
վերլուծության՝ դասակարգային պայքարի յուրաքան-  
չյուր տվյալ աստիճանի վրա:

«Այնուհետև, հեղափոխական հեռանկարն ուրվա-  
զծելիս՝ անհրաժեշտ է ընդդժե ևս մի չարագանց կա-  
րելվոր հարց: Առանձին յերկրի հեղափոխական ճշմա-  
րտամի տարրերը վերլուծելիս մեզ մոտ շատ հաճախ չը-  
փոթվում են, վորովհետև տվյալ յերկրի հեղափոխա-  
կան հեռանկարները կապում են բացառապես նրա ներ-  
քին իրազրությունների հետ: Վերցնենք այնպիսի մի յեր-  
կիր, ինչպիսին է Իսպանիան, կամ Միջին Յեվրոպայի

յերկրները: Ծի՞շտ կլինեք արդյոք, յեթե որինակի հա-  
մար գործմանական հեղափոխական շարժման հեռանկար-  
ները քննության առնվելին բացառապես Գերմանիայի  
դասակարգային ուժերի ներքին փոխհարաբերություն-  
ների տեսանկյան տակ: Կարելի՞ յե արդյոք գերմանա-  
կան ժողովրդական հեղափոխության հեռանկարը քն-  
նության առնել վողջ միջազգային բարդ կոմպլեքսից  
և ամենից առաջ ՍՍՀՄ-ի հարցից դուրս: Կարելի՞ յե  
արդյոք մի պահ անգամ յերեվակայել, վոր մի վորեկ  
խոշոր հեղափոխական շարժում Միջին Յեվրոպայում  
եր յետելից չի բերի միջազգային խոշոր պայքարի  
ձև ունեցող հետեվանքներ» (ընկ. Մանուիլսկու յեզրա-  
փակման խոսքից):

Թեզիսները տարբերություն չեն դնում քաղաքա-  
կան ճշմարտամի և հեղափոխական ճշմարտամի միջև:  
Բայց պլենումը գերադասեց հեղափոխական ճշմարտամ  
անունը: Ինչո՞ւ: «Վորովհետև մենք յենում ենք այն  
նկատառումից, վոր «քաղաքական ճշմարտամ» տերմինը  
մեր քաղաքական լեզվով մտնում է, գործածվում է ար-  
տահայտելու ամենարագմազան քաղաքական սխուտա-  
ցիաներ, անգամ մինիստրական ճշմարտամը: Յեվ մա-  
սամը դրանով է բացատրվում այն խառնաչիտություն-  
ներ, վորպիսին ստեղծվել է այդ տերմինի շուրջը: Յեթե  
խոսքը ավելի հստակ տերմինոլոգիայի մասին է, ասպա  
մեր թեզիսներում «քաղաքական ճշմարտամ» տերմինի  
փոխարեն կարող ենք գործածել «հեղափոխական ճշմա-  
րտամ» տերմինը» (ընկ. Մանուիլսկու յեզրափակման  
խոսքից):

Պլենումը կամեցավ ձիշտ տերմինոլոգիա սահմա-  
նել, վորպեսզի անձիշտ մեկնաբանություններ չառա-  
ջանան: Բայց մենք շարունակ պետք է հիշենք, վոր «մի-

այն Ֆորմուլաները մեզ վերջինչ չեն բացատրի» : «Հեղա-  
փոխական պրոցեսները ավելի բարդ բան են, քան  
Ֆորմուլաները, վորոնք դասակարգային ուժերի փոխ-  
հարաբերության վերլուծության վրա չեն հիմնված,  
այլ հիմնված են բոլոր դեպքերի համար նույն պատրաս-  
տի պատասխանը տալու վրա, կտապալվեն հեղափոխա-  
կան պրոցեսների կողմից» (նույն տեղը) :

Քաղաքական ճգնաժամը չի կարելի հակադրել հե-  
ղափոխական ճգնաժամին իրրև ինչ վոր առանձին աս-  
տիճան, իրրև հեղափոխական ճգնաժամի նախնական  
աստիճան : Այդպիսի հակադրություն հղի յե աջ սխալ-  
ներով :

«Քաղաքական ճգնաժամը վորպես ներկա հեղա-  
փոխական ժգնաժամին նախորդող առանձին մի աստի-  
ճան համարել իր հետ բերում ե այն, վոր դբանով նը-  
վիրադործվում են Բրանդլերյան այսպես կոչված «ան-  
ցողիկ շրջանները» անցման շրջանի այնպիսի յոգունդնե-  
րի հետ ինպիսին ե արտադրության վերահսկողություն-  
ներ... Քաղաքական ճգնաժամը հեղափոխական ճրգնա-  
ժամին հակադրելը վտանգավոր ե, այնուհետեով, նրա-  
նով, վոր նա տակտիկական տեսակետից հազիվ թե սո-  
ցիալոգիական որենքի չի վերածում համաշխարհային  
հեղափոխական շարժման այն հետամնացությունը,  
վորպիսին նա ունի նպաստավոր որչիկտիվ իրադրու-  
թյան նկատմամբ... Քաղաքական ճգնաժամի՝ վորպես  
վերնախավերի յուրատեսակ մի ճգնաժամի՝ հասկա-  
ցողությունը գործնականորեն շրջանառության դնելը  
կնշանակի այն, վոր կոմկուսակցությունը թաղելվում ե  
քաղաքական ճգնաժամի խրամներում, վորպեսզի ար-  
դարացնի իր հետամնացությունը : Այդ վտանգը կա»  
(ընկ. Մանուիլսկու յեղրատիպիման իտպը) :

#### IV. ՖԱՇԻՉԱՐԸ ՅԵՎ ԱՈՑԻԱԼ ՖԱՇԻՉԱՐԸ

##### 1. ՖԱՇԻՍՏԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխական ճգնաժամի հարցի հետ միասին XI պը-  
լենումը զգալի ուշադրություն նվիրեց Փաշիզմի պրո-  
լեմին : Ինչքան աճում են կապիտալիզմի ներքին և ար-  
տաքին հակասությունները և ամենից առաջ ինչքան ա-  
ճում ե դասակարգային պայքարը, այնքան բուրժուա-  
զիան ավելի ու ավելի յե անցնում աշխատավորներին  
ճնշելու բացահայտ Փաշիստական ձեվերին : Փաշիզմի  
պրոբլեմը վճռական նշանակություն ունի մեր մի ամ-  
բողջ շարք կոմկուսակցությունների համար : Այս հար-  
ցում հաճախ են սխալներ կատարվել : Պլենումն ամ-  
փոփեց դոյություն ունեցեղ վեճերը և տվեց պարզ ու  
հստակ դեքլարում Փաշիզմի հարցերում :

Քաղաքական ճգնաժամը հեղափոխական ճգնաժա-  
մին հակադրելու վտանգը նրանումն ե կայանում, վոր  
քաղաքական ճգնաժամի ամբողջ հարցն ըստ եյության  
հանգում եր Փաշիզմի հարցին : Աճում ե Փաշիզմը—ասել  
ե սկսվում իշխող դասակարգերի քայքայումը, ասել ե,  
սուկա յեն քաղաքական ճգնաժամի տարրերը : Մշակվում  
եր հեղափոխության յուրատեսակ մեխանիկական մի  
թեորիա. այդպիսի հարցադրումով չավազանց գոեհ-  
կացվում եյին կոմունիստների խնդիրները : Իրրև թե,  
հեշտ ե հաղթահարել Փաշիզմը, նա ինքն ե փտում,  
քայքայվում :

Ի՞նչ ե Փաշիզմը :

«Փաշիզմի ուժիմը պետություն ինչ վոր նոր տիպ  
չե. նա հանդիսանում ե իմպերիալիստական դարա-  
շրջանի բուրժուական դիկտատուրայի ձեվերից մեկը :  
Փաշիզմը որդանապես ճնունդ ե աննում բուրժուական

դեմոկրատիայից: Յերբ բուրժուական դիկտատուրան անցնում է աշխատավորներին ձեռքերու բացահայտ ձեռքերի. ապա այդ անցման պրոցեսն ինքնին կազմում է բուրժուական դեմոկրատիայի Փաշխտականացման ելությունը» (ընկ. Մանուիլսկու դեկլացումից):

Իր այս բնորոշումով պլենումը սկզբից և յեթ Փաշիզմի դեմ պայքարելու գործի լիբերալ ձեվերի դեմ ուղղված դիրքավորում ընդունեց:

Միայն բուրժուական լիբերալը կարող է ներկա բուրժուական դեմոկրատիան հակադրել Փաշխտական ուժեղին, իբրև նրանից սկզբունքորեն տարբերվող քաղաքական մե ձև: Այս հակադրումով սոցիալ-դեմոկրատիան գիտակցաբար խաբում է մասսաներին:

Ի՞նչն է գլխավորը Փաշիզմը բնութագրելիս

«Գլխավորը Փաշիզմում այն է, վոր նա հարկադրամբի ու բռնութայն բույր մեքոդներով՝ բացահայտ հարձակում է գործում բանվոր դասակարգի վրա: Դա բազմազանական պատերազմ է ընդդեմ աշխատավորութայն» (ընկ. Մանուիլսկու դեկլացումից): Բուրժուական դեմոկրատիայի մնացորդների վերացումը Փաշիզմի բնութագրութայն մեջ եյական դեր չի խաղում: Դա պրոլետարիատի դեմ ծավալվող դասակարգային հարձակման հիմնական, վճռական դժի կողմնակի մի արգասիքն է: Յեվ պարլամենտի վերացումն էլ Փաշխտական դիկտատուրայի պայմաններում պարտադիր չէ (որինակ՝ Լեհաստանում):

Փաշիզմը բնութագրելիս շատ հաճախ ընդգծում են այն գծերը, վորոնք Փաշիզմի ելությունը չեն կազմում: Իրա համար էլ պլենումը բնութագրեց Փաշիզմի համար եյական այն գծերը, վորոնք մեր կոմկուսակցու-

թյունների կողմից Փաշիզմի դեմ մղվող պայքարի նախատիկայում ունեն վճռական նշանակություն:

«Այս տեսակետից յեղնելով Փաշիզմի մեջ վճռական է այն, վորը, առաջին, բուրժուակիան հարձակվում է հեղափոխական կազմակերպությունների վրա (կոմկուսակցություններ, կարմիր պրոֆմիություններ և այլն մասսայական կազմակերպություններ), նպատակ ունենալով ջախջախել բանվորական հեղափոխական շարժումը՝ Ֆիզիքական վոչնչացման կամ մասսայական ձերբակալությունների միջոցով բնաջինջ անելով նրա ակտիվին, վոչնչացնելով բանվորական մտմուրը, անգամ վերացնելով բանվորների համար բուրժուական դեմոկրատիայի կողմից սահմանափակված խոսքի, ժողովի, ընտրություններին մասնակցելու ազատությունը, ամենակատարի տերրորի սխտեմ սահմանելով բանվորների հանդեպ, արյան մեջ խեղդելով բանվոր դասակարգի ամեն մի հեղափոխական շարժումը և այդպիսով ձեռնարկատիրոջ և գործարանային վարչության անսահմանափակ իշխանություն հաստատելով ձեռնարկությունում:

Յերկրորդ. բուրժուակիան Փաշիզմի ոգնությամբ ձգտում է մեքոդից վերացնել դասակարգային պայքարը և այն փեխարինել կապիտալի դիկտատուրայի գրորոհով աշխատավորութայն հանդեպ: «Բուրժուական դեմոկրատիայի գովեցյալ դասակարգային աշխատակցությունը Փաշիզմը կիրառում է տնտեսական և քաղաքական բացարձակ բռնության մեթոդներով: Նա վերացնում է գործադուլ անելու իրավունքը և այն փոխարինում է հարկադիր արբիտրաժի սխտեմով: Սոցիալ-դեմոկրատիայի նման նա յեղ է «գերադասակարգային պետութայն» իդեան ոգտագործում իբրև պը-

րոյէտարիստի դատակարգային պայքարը խեղդելու մի միջոց: Յերբարդ. բուրժուազիան Ֆաշիզմի ոգնութեամբ ունիորմիտական պրոֆմիտութենական կազմակերպութեաներին կամ հատկապես ստեղծված նոր, Ֆաշիստական պրոֆմիտութեաններին վերջանականապես դարձնում է կապիտալիստական պետութեան այնպիսի ճնշման որդաններ, ինչպիսին են վոստրիկանութեանը, գատարանը, զորանոցը և բանտը: Չորբարդ. մոնոպոլիստական կապիտալիզմը քաղաքական կուսակցութեաների հին սիստեմը փոխարինում է կապիտալի կիսաուղղմական և տերորիստական կազմակերպութեամբ, քաղաքացիական կռիւներին հարմարեցրած միասնական Ֆաշիստական կուսակցութեան ձևի տակ» (ընկ. Մանուիլսկու զեկուցումից):

«Բուրժուազիայի վերագինումը քաղաքացիական պատերազմի համար՝ արտահայտվում է, առաջին, նրանով, վոր կապիտալը կադրային դասակարգային բանակի մեքենայացված մասի հիման վրա վերագտաւորում է իր զինված ուժերին, յերկրորդ, նրանով, վոր նա այս բանակի հետ միասին հատուկ Ֆաշիստական ջոկատների ձեւով կադրեր է ստեղծում: Բանակի հին տիպը, վորը հիմնված էր ընդհանրութեան սկզբունքի վրա, վերանում է, վորովհետեւ նա հեղափոխական սպասումբութեանների սպանալիք է ներկայացնում: Պատերազմների և հեղափոխութեանների դարաշրջանում բուրժուազիան վախենում է զինված ժողովրդից: Այստեղից է բղխում վարձկան բանակի, կադրային բանակի, մեքենայացված բանակի, բնաջնջման մասնագետների բանակի իդեան: Բուրժուազիան յերազում է մոտոմեքենայացված ճընտիբ բուրժուական գլխարդի»,

վորը հակառակորդին առաջին հարվածը հասցնելու խնդիրն ունենա և դեկալար կադրերով ապահովի «զինված ժողովրդի» «մեք» բանակը: Փաստորեն այդ նույն իդեան է պաշտպանում նաև սոցիալ-դեմոկրատիան «սպառազինումների կրճատման» ձևի տակ: «Միսթամանակ կապիտալիստական յերկրներում ամենուրեք աճում են Ֆաշիստական զինված ջոկատները» («պոզպատյա սաղաւարտներ» գերմանիայում, «նետաձիգներ» Լեհաստանում, «Լյուցիոր» Ֆինլանդիայում, «Հեյմվեր» Ալստրիայում և այլն): Բացի այդ, բոլոր յերկրներում կան հարյնասիրական, սպորտային բոյսկառուտական և այլն կազմակերպութեաններ, վորոնք բաւ էլութեան նույնպես Ֆաշիստական են» (ընկ. Մանուիլսկու զեկուցումից):

Գերմանիայի Ֆաշիստականացման պրոցեսի մասին ընկ. Տելմանը հետեւյալը հաղորդեց.

«Բրյուննիդի կառավարութեան կողմից Ֆաշիստական դիկտատորայի իրադործման քաղաքականութեանն ավելի ուժեղ է դրսեւորվում այն իրադարձութեաններում, վորոնք տեղի ունեցան գերմանիայում վերջին ժամանակներս: Հենց նորերս նախադաս Հինդենբուրգը պաշարման դրութեան հայտարարեց և հեղափոխական բանվորական շարժման համար կիսալեզալ դրութեան ստեղծող մի հրաման ստորագրեց: Ապագայում ամեն տեսակ պրոլետարական ժողով կարող է արդելվել:

Ամեն մի պրակատ, ամեն մի ազիտացիոն տախտակ, ամեն մի թուուցիկ նախորդ գրաքննութեան և յենթարիլելու:

«Ձեռքի մի շարժումով Գերմանիայում ստեղծվում է քաղաքական ուսակցիայի իրադութեան, վորը հիշեցնում է պատերազմի և այն ժամանակվա բանվոր-

րական շարժման ճնշման ամենալատթար ուրերը կայսերական գերմանիայում, բայց վորը կատարվում է անշուշտ դասակարգային սրման շատ ամելի բարձր մի աստիճանի վրա» (ընկ. Տելմանի գեկուցումը) :

Փաշխտական տիրապետութեան մեթոդները ընկ. Լենսկին հետևյալ կերպ բնութագրեց .

«Կապիտալի նոր հարձակումը բանվոր դասակարգի հանդէպ սերտ կերպով կապված է նրան պայքարի ամեն անսակ լեզալ կազմակերպչական հնարավորութեաննրից զրկվելու հետ : Վերացնելով սոցիալական որենադրութեան ասպարիզում բանվորների ձեռք բերած նվաճումների մնացորդները, Փաշխտական կոտալարութեանը բուրժուական տարրերի մեծամասնութեանն է ապահովում հիվանդանոցային զրամարկոնների կոտավարման դործում, դրամարկոններ, վորոնք ամենուրեք Փաշխտական դիրեկտորներին ձեռքն են հանձնված : Փակելով հեղափոխական պրոֆիտութեանները (հենց միայն Վարչալայում վերջին Ծ ամսվա ընթացքում 11 այդպիսի պրոֆիտութեանն է վակված), կոտավարութեանը ձեռնարկում է իրեն մենաշնորհ դարձնել պրոֆիտութեանական կազմակերպութեանները և «միասնական, անկախ, անկուտակցական պրոֆիտութեան պետական հիմունքով» լողունդի տակ ծավալել Փաշխտական պրոֆիտութեանների սխտեմը : Այս ուղղութեամբ առաջին քայլը պետք է լինի այն, վոր պետք է միացվեն մարչալ Պիլսուլսկու բացահայտ Փաշխտական յերանդ ունեցող «Ալխատանքի գլխավոր Ֆեդերացիա»-ի, «սոցիալիստական» թեքում ունեցող «Դասակարգային պրոֆիտութեանների կենտրոնական միավորման» և աղգային բանվորական կուտակցութեան «ձախերի» գլխավորած «Լեհական

պրոֆիտութեաններ»-ի մեջ մտնող խայտաճամուկ և վոսկրախտավոր պրոֆիտութեանները : Փաշխտի բաժան- բաժան շոչափուկների կենտրոնացումը պրոֆ- շարժման մեջ պետք է համապատասխանի Փաշխտական իշխանութեան ընդհանուր կենտրոնացմանն՝ ի սպաս մոնոպոլիստական կապիտալի :

«Փաշխտական պրոֆիտութեանների ծավալուն ու առավելագույն շափով կենտրոնացված սխտեմը պետք է ապահովի բանվորական մասսաների տաելութեանն ու դիմադրութեան հանդիպող արբիտրաժի քաղաքականութեան հաջող կիրառումը :

«Այս սխտեմը, այն ձեռնարկողներին և նրանց գլուխը կանդնած նախկին մինիստր Մորաչևսկու կարծիքով, անհրաժեշտ հիմք կտանդծի Փաշխտական աշխատանքային առյաններ կազմակերպելու համար : Սոցիալ-Փաշխտական պրոֆիտութեանների ներդրուման հարցը առայժմ մնում է բայց և գտնվում է վորոնումների շրջանակում : Այսոր արդեն վորոշ բաժանմունքներ դրավվում են Փաշխտական պրոֆիտութեանների միավորման մեջ :

Իանվոր դասակարգի համար հետագա հարվածն այն յեղավ, վոր ձերբակալվեց և լիկվիդացիայի յենթարկվեց հակա֓աշխտական բլոկի մեջ մտնող պեպե- ետական ձախե համադումարը : Միջնայժմ Փաշխտները վործում են պրովոկացիաների միջոցով քայքայել և ուպրեսիաների ոգնութեամբ ջախջախել այս կազմակերպութեանը, սխտեմատիկ կերպով ձերբակալելով և տաժանակիր աշխատանքի դատապարտելով նրա կազմերին : Բայց, յերբ տեսան, վոր այս բեպրեսիաների բովում պեպեետական ձախը կոփվում էր և ընդարձակում իր հենակետները, Փաշխտը ձեռնամուխ յեղավ

նրա բացահայտ լիկվիրացիային» (ընկ. Լենսկու գե-  
կուցումից) :

## 2. ՅԱՇԻՉՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԵՍԼՆԵՐԸ

Փաշիգմը արդասիք է վոչ թե այն բանի, վոր կա-  
պիտալիզմն ավելի ուժեղ է դարձել, այլ այն բանի,  
վոր նա ավելի թուլացել է :

Յերբ վոլոյնեկում զնդացիքներ են դնում, ապա  
դրանով իշխանութունն իրեն ավելի ամուր ու հան-  
դկատ չի դրում : Կապիտալը հենց նրա համար է հարձա-  
կում գործում, վորպեսզի ամբացնի իր դիրքերը, վոր-  
պեսզի ավելի ուժեղանա, վորպեսզի փչրի պրոլետա-  
րիատի հարձակումը անտեսական և քաղաքական բո-  
լոր դժերով : Կապիտալի հարձակողականում գրված  
են, թե՛ հեղափոխութունից պաշտպանվելու և թե՛  
նրա վրա հարձակվելու տարրերը :

Փաշիգմը, վորպես կապիտալիզմի ճգնաժամի ար-  
դասիք, հենց ինքն ուժեղացնում է կապիտալիստա-  
կան սխտեմի անկայունութունը, պատրաստում է իր  
սեփական կործանումը և վոզ կապիտալիստական սխ-  
տեմի կործանումը» (ընկ. Մանուիլսկու գեկուցումից) :

Փաշիգմը կապիտալի հարձակման ձևերից մեկն է,  
բայց այդ չի նշանակում, թե համաշխարհային պրո-  
լետարիատն ամենուրեք սոսկ պաշտպանողական վիճա-  
կում է գտնվում : Այդպիսի պատկերացում արմատա-  
պես սխալ է, վորովհետև «մի շարք Ֆրոնտներում պրո-  
լետարիատը հարձակվում է,—այդ ԽՍՀՄ-ումն է.  
մյուս Ֆրոնտներում մենք ակնատես ենք կապիտալի  
հարձակման և պրոլետարիատի հակահարձակման (ա-  
մենից առաջ Գերմանիայիում, Ֆրանսիայիում, Անգ-  
լիայիում, Լեհաստանում) : յերրորդներում կապիտալը

հարձակվում է, իսկ բանվոր դասակարգը շատ թույլ  
գեմադրութուն է ցույց տալիս (Յուգոսլավիա, Իտա-  
լիա)» (ընկ. Մանուիլսկու գեկուցումից) :

«Փաշիստական դիկտատուրայի հաստատումը կա-  
րող է գոնացան ձևերով անդի ունենալ. նա կարող է  
անդի ունենալ աստիճանաբար, այսպես ասած «ցա-  
մաք ճանանդարհով» : Այդ լինում է այն տեղերում, ուր  
ուժեղ սոցիալ-դեմոկրատիա կա, վորը պրոլետարիա-  
տին նահանջել է տալիս Փաշիգմի առջևից, ինչպես ո-  
րինակ՝ Ավստրիայում : Փաշիստական դիկտատուրան  
«ցամաք ճանապարհով» կիրառելու համար է աշխա-  
տում դերմանական սոցիալ-դեմոկրատիան : Բայց հենց  
նրա համար, վոր Գերմանիայում ուժեղ կոմկուսակ-  
ցութուն կա, վորն որն որին մորիկիցացիայի յե յեն-  
թարկում բանվորությանը Փաշիգմի դեմ պայքարելու  
համար,—Փաշիստական դիկտատուրայի ավստրիական  
մեղանակի կիրառում Գերմանիայում լինել չի կարող :

«Փաշիստական դիկտատուրայի հաստատման մյուս  
տիպը (խոսլական, լեհական) Փաշիստական հեղա-  
շրջման հետ է կապված : Այդպիսի հեղաշրջումները  
հանդիսանում են իշխող դասակարգերի յուրատեսակ  
մի «վերականգնում» ընդդեմ պրոլետարիատի, ընդդեմ  
ճնշված դասակարգի, վորը հեղափոխության սպառնա-  
վեք է ներկայացնում կապիտալիստական հասարակար-  
դի համար : Բայց թե՛ առաջին և թե՛ յերկրորդ դեպ-  
քում Փաշիստական դիկտատուրայի հաստատումը հա-  
վասարապես մնում է իրրև խախնարար հակահեղա-  
փոխութուն :

«Կան կոմունիստներ, վորոնք դանում են, վոր  
պայքարը Փաշիգմի դեմ սկսվում է այն պահից միայն,

յերբ նա գննքը ձեռքին փողոց ե գուրս գալիս «հեղա-  
շրջում» կատարելու համար: Այդ ճիշտ չե և շատ վը-  
տանգավոր ե: Փաշիգմը հետզհետե յե աճում: Ճին ըն-  
ընկերներն, որինակ, անընդունակ գտնվեցին Փաշիգ-  
մին դիմադրելու հեղաշրջման պահին, վորովհետև նը-  
րանք, Փաշիգմի հաստատման մասին ունեցած նման  
անճիշտ պատկերացումից յեխնելով, ամբողջ ամիսնե-  
րի ընթացքում աչքից՝ վրիպեցրել եյին Փաշիստական  
(լատուասյան) շարժման աճումը: «Փաշիգմ-հեղաշրջ-  
ման» այս թեորիան հենվում ե Փաշիգմի պուտ ձևական,  
պարլամենտական պատկերացման վրա» (ընկ. Մանու-  
ելակու գեկուցումից):

Յեթե չի կարելի ասնլ, թե համաշխարհային պրո-  
լետարիատը Փաշիգմից պաշտպանվելու վիճակումն ե  
գտնվում միայն, ապա չի կարելի նաև պնդել, թե պրո-  
լետարիատը ամենուրեք հարձակվում ե: Մի շարք տե-  
ղերում դեռևս մեզ խփում են, այն ել լուրջ կերպով:  
«Անհատականալի յե, թե ինչպես կոմունիստական մար-  
մուլում դրվեց այն մասին, վոր Փաշիստները գոյու-  
թյուն ունեցող կարգերի թշնամիներ են: Ի՞նչպիսի  
կարգերի: Բուրժուական դիկտատուրայի՞ ուժիմի, թե  
միայն այդ ուժիմի պարլամենտական ձևի: Փաշիգմը  
բուրժուական դիկտատուրայի թշնամի չե, նա նրա ա-  
մենաճնշող ձևն ե» (ընկ. Մանուելակու գեկուցումից):

Փաշիգմի պրոլետմը սխալ զնելուց բղխում ե նրա  
սխալ՝ ալ կամ «ձախ» գնահատականը: Փաշիգմի գնա-  
հատման խնդրում անբի սխալը հենց նրանումն ե, վոր  
«նրանք Փաշիգմի մեջ տեսնում են միմիայն Փաշիստա-  
կան ուսկցիայի ուժեղացումը: Իսկ Փաշիստական  
ուսկցիայի ուժեղացումը նրանք ընդունում են իբրև

կապիտալի դիրքերի ուժեղացում: Այստեղից ել այն  
յեղրակացությունները, թե բանվոր դասակարգը թու-  
լացել ե, թե նա պետք ե նահանջի, թե Փաշիգմի հետ  
համաձայնության պետք ե դալ» (ընկ. Մանուելակու  
գեկուցումից):

«Մյուս՝ «ձախ» սխալը կհանգեր այն բանին, վոր  
Փաշիգմի մեջ կտեսնեյին միայն կապիտալիզմի քայքայ-  
ման արդյունքները: Յեթե կոմունիստները այս դիրքե-  
րում կանգնեյին, նրանք անտեսելիս կլինեյին այն կա-  
րեվորագույն հանգամանքը, վոր Փաշիգմը կապիտալի  
հարձակման ձև ե: Նրանք Փաշիգմի բացառապես հեղա-  
փոխական դեր վերագրելիս կլինեյին: Այստեղից կհե-  
տեվեր այն յեղրակացությունը, թե Փաշիգմի գալուստը  
հողիվ թե ցանկալի չե: Փաշիգմի հարցի այս ձևի դրու-  
մը կհանգեր պատիվության՝ Փաշիգմի դեմ մղվող պայ-  
քարում» (ընկ. Մանուելակու յեղրակական խոսքից):

Փաշիգմը անդրադարձնում ե հասարակական զարգաց-  
ման դիալեկտիկական հակասությունը: Նրա մեջ դրված  
են թե՛ տիրող դասակարգի շարձակման և թե՛ նրանց  
քայքայման տարրերը: Այլ խոսքով ասած, Փաշիստական  
զարգացումը կարող ե հանգել թե պրոլետարիատի հաղ-  
թանակին և թե՛ նրա պարտության: Փաշիգմի պարտու-  
թյունը պարտադիր չե: «Այդ հարցը կլուծի սուբյեկտիվ  
գործոնը, այսինքն՝ պրոլետարիատի դասակարգային  
պայքարը: Կայքարի բանվոր դասակարգը Փաշիգմի  
դեմ—ուրեմն ավելի արագ կզարգանան Փաշիգմի անկ-  
ման տարրերը: Կնահանջի պրոլետարիատն առանց կրո-  
վի, ինչպես 1922 թ. Իտալիայում, —ուրեմն ավելի արագ  
կզարգանան Փաշիգմի հարձակման գծերը հանդեպ բան-  
վոր դասակարգի: Առաջին ճանապարհը տանում ե դե-

պի հաղթանակ ընդդէմ Փաշխատական դիկտատուրայի, յերկրորդը՝ դեպի պրոլետարիատի պարտութիւնը» (ընկ. Մանուկիսկու յեզրափակման խոսքից) :

«Փաշխատական շարժման յերեւման դաւը և անդամ նրա ժամանակավոր աճումը պրոլետարիատի պարտութիւնն չի նշանակում : Փաշխատական դիկտատուրայի հաստատումը նշանակում է բանվոր դասակարգի ժամանակավոր պարտութիւնն : Բայց դա պրոլետարիատի պարտութիւնն չէ, յետեւ բանվոր դասակարգը կռվում է իր ամեն մի դիրքի համար, անգամ յետեւ հակառակորդի ճնշման տակ նա ստիպւած կլինի կռվում նահանջի դիմել» (ընկ. Մանուկիսկու յեզրափակման խոսքից) :

«Սխալ կլինե՞ր կարծել, թէ Փաշխատական դիկտատուրայի կիրառումը միայն պրոլետարական հեղափոխութեամբ կարելի յի խանդարել» : Մենք կարող ենք թույլ չտալ, վոր աճի Փաշխատական ռեկցիան, մենք կարող ենք թույլ չտալ, վոր բուրժուազական Փաշխատական տիպի բուրժուական դիկտատուրա կիրառի, յետեւ մենք կազմակերպենք պրոլետարիատին ամենորոյն պայքար մղելու, ճիշտ աշխատիս, ինչպէս մենք մեր հասկանալովս մտածումք թույլ չենք տալիս կապիտալի հարձակումը անտեսական բնազավառում : Իրանով մենք ստորբերում ենք ռեֆորմիստներին և բրանդելերականներին : Ամենաուղիղ օրոնիստական մի Փատալիզմ կլինե՞ր, յետեւ մենք Փաշխատական ձևի բուրժուական դիկտատուրայի կիրառման վիճեցումը միայն պրոլետարիատի հեղափոխութեան հետ կապելինք :

Յեւ «մասնակի մարտերով կարելի յի շինել միայն թույլ չտալ Փաշխատական տիպի բուրժուական դիկտատուրայի կիրառումը, այլև հաջողութեամբ պայքարել

արդէն հաստատուած Փաշխատական դիկտատուրայի դեմ, ինչպէս որինակ՝ Իտալիայում կամ Յուգոսլաւիայում : Պրոլետարիատի մասնակի մարտերը բուրժուական դիկտատուրան չեն տապալի, բայց կիպոմարտեն նրան, կնախապատրաստեն նրա անկումը : Մասնակի մարտերը, յետեւ նրանք ղնալով ավելի հասակակի դառնան և իրենց թափն ընդլայնեն, յետեւ հորցնեն բուրժուական դիկտատուրայի տապալման հեղափոխական հեռանկարը, կարող են ստիպել բուրժուազիային նահանջել, կարող են ժամանակավորապէս խուլացնել Փաշխատական ռեֆիզմը» (նույն տեղը) :

Նույնպէս դուհիկացում կլինե՞ր կարծել, թէ Փաշխատական դիկտատուրան բուրժուական դիկտատուրայի վերջին ձևն է : Իտալիայում դա հալանարար այդպիսի կլինի : Բայց խոչոր հոռետեսութիւնն կլինե՞ր մտածել, թէ «բուրժուական դիկտատուրայի Փաշխատական ձևը կապիտալիզմի համաշխարհային քաղաքական վերնաշէնք կդառնա ավելի շուտ, քան պրոլետարական հեղափոխութեան ընդհանրապէս վերջ կտա կապիտալիզմին : Հենց այդ թեորիան է, վոր սնունդ է տալիս այն տրամադրութիւններին, թէ Փաշխատական ռեկցիայի աճումը կարելի յի թույլ չտալ միայն պրոլետարական հեղափոխութեամբ» (նույն տեղը) :

«Կամունիստական Ինտերնացիոնալի մեջ մանող կուսակցութիւններին և վուչ մեկին չի կարելի պահանջել, վարպետի նա Փաշխտի դարգացումը ամեն ղեպքում դադարեցնի պրոլետարական հեղափոխութեամբ» : Բայց ԿիԳԿ-ի պլենումը պահանջում է յուրաքանչյուր կոմկուսակցութիւնին, վորպէսզի նա ախտիլ պայքար մղի բուրժուական դիկտատուրայի դեմ, գըր-

նելով, վոր դրանով կոմկուսակցությունները թույլ  
չեն տա և կարող են թույլ չտալ Փաշխատական ղեկա-  
տուրայի հաստատումը:

Ճաշիգմի դեմ պայքարելու ասպարիզում մենք ու-  
նենք խոշոր հետամնացություն: Այդ արտահայտվում  
է «տապին, նրանով, վոր մենք մեր պաստիվությամբ  
թույլ ենք տալիս, վոր բուրժուազիան, այն ժամանակ,  
յերբ նեղցել և կապիտալի մանեվրելու ընդունակու-  
թյունը տնտեսական ընադավառում, մահեվրներ անի  
քաղաքական հարցերում—պարլամենտորիզմի հար-  
ցում, Յունդի պլանի հարցում, Վերսայլի հարցում  
պրոպագանդիզմի հարցում և այլն: Յերկրորդ, Փա-  
շիգմի դեմ պայքարելու հարցում մեր հետամնացու-  
թյունն արտահայտվում է նրանով, վոր մենք թույլ  
ենք տալիս սոցիալ-դեմոկրատիային մանեվրելու բուր-  
ժուական ղեկատուության ձևերի հարցում: Յեվ այդ  
հիմա մի ամբողջ պատմական շրջանի նրա ղլխավոր  
մանեվրն է» (նույն տեղը):

Այդ հետամնացությունը հաղթահարելու համար  
պահանջվում է մեր կոմկուսակցությունների ղեռնա-  
չատ մեծ ու համառ աշխատանքը:

Պլենումը մատնանչեց մեր կոմկուսակցություննե-  
րի բոլոր հիմնական խնդիրները Փաշիգմի դեմ պայքա-  
րելու ասպարիզում:

Այդ խնդիրներում ղլխավորն այն է, վոր յեթե  
մենք ցանկանում ենք թույլ չտալ Փաշխատական ղեկ-  
տուրա, պետք է ամենաակտիվ պայքար մղենք բուր-  
ժուական ղեկատուության դեմ: Չի կարելի այնպես  
պատկերացնել, թե բուրժուական դեմոկրատիան ավե-  
լի լավ է, քան Փաշխատական ղեկատուության: Հարցն

ասպարիզում, նշանակում է կանգնել լիբերալական  
տեսակետի վրա: Բանվոր դասակարգի ղլխավոր թըը-  
նամին միշտ յեղել է, մնում է և կմնա բուրժուազիան:  
Ամենաակտիվ կերպով պայքարելով բուրժուական ղեկ-  
տատության դեմ՝ կարելի յե թույլ չտալ Փաշխատա-  
կան տիպի բուրժուական ղեկատուության: Յեվ միմիայն  
անխոնջ ու համառ պայքար մղելով բուրժուական ղեկ-  
տատության դեմ՝ կարելի յե ջախջախել սոցիալ-դե-  
մոկրատիային:

3. ՍՈՑԻԱԼ-ԾԱՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

«Ճաշիգմի աճումը վերջին ժամանակներս հնարա-  
վոր յեղավ միայն շնորհիվ այն աջակցության, վորդի-  
պին ցույց է տալիս միջադատյին սոցիալ-դեմոկրատիան  
բուրժուազիայի ղեկատուության հետպատերազմյան  
ամբողջ շրջանում, անկախ նրա ձևվերից» («Ընկ. Մա-  
նուիլսկու ղեկուցման թեզիսներից»): Սոցիալ-դեմոկ-  
րատիան ինքը հանդիսանում է կապիտալիստական պե-  
տության Փաշխատականացման գործոնն ու ուղեկցու-  
յը:

«Ընկ. Ստալինը սոցիալ-դեմոկրատիայի մասին  
հետեվյալն էր ասում.

«Ճաշիգմը բուրժուազիայի մարտական կազմակեր-  
պությունն է, վոր հենվում է սոցիալ-դեմոկրատիայի  
ակտիվ աջակցության վրա: Սոցիալ-դեմոկրատիան որ-  
յեկտիվորեն Փաշիգմի չափավոր թեփն է: Հիմք չկա յե-  
թադրելու, թե բուրժուազիայի մարտական կազմակեր-  
պությունը կարող է մճռական հաջողություններ ձեռք  
բերել մարտերում կամ հասնել յերկրի կառավարման ա-  
ռանց սոցիալ-դեմոկրատիայի ակտիվ աջակցու-  
թյան...»:

«Համալսարանային տնտեսական ճշմարտամբն ամբողջ պարզութամբ բաց արավ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի դերը, վորպես բուրժուազիայի դիկտատուրայի գլխավոր սոցիալական հեմարանի: Համալսարանային իմպերիալիստական պատերազմի և պրոլետարական դեկտատուրայի սուսաջացման ժամանակից սկսած, դասակարգային պայքարի բոլոր հիմնական ետապներում սոցիալ-դեմոկրատիան յեղել և կապիտալիզմի կողմը և բանվոր դասակարգի դեմ: «Հայրենիքի պաշտպանութան» դրոշակի տակ նա միլիտանավոր սլոբոտարներ ուղարկեց իմպերիալիստական սպանդի դաշտը: Նա ոգնում էր «Լր» բուրժուազիային ռադիկալան ինտերվենցիա կոտորել ՍՍՀՄ-ի դեմ 1918—1920 թ. թ.: Նա փրկում էր կապիտալիզմը պրոլետարական հեղափոխութունից՝ պատերազմից անմիջապես հետո (Քերմանիա, Ախտրեա, Հունդարիա, Իտալիա, Փինլանդիա): Նա ակտիվ ոգնութուն ցույց տվեց բուրժուազիային կապիտալիստական տնտեսութունն ամբողջապես համար: Նա կապիտալիստական ռադիկալացման լուծը դրեց բանվորական մասսաների շնքին: Նա այսօր, ամենածանր ճշմարտամբն որերին, բոլոր ջանքերը դործադրում է, վորպեսզի չահգործման և սաղբկութան կապիտալիստական սիստեմը վրկի վերահաս կործանումից»:

«Պատերազմի և ՍՍՀՄ-ում խորհրդային իշխանութան հիմնադրման ժամանակվանից սկսած՝ սոցիալ-դեմոկրատիայի վողջ դարգացումը եվոլյուցիայի միակնհայտ պրոցես է դեպի պատերազմը»:

«Բանվոր դասակարգի դեմ կապիտալի հարձակման գծով—դա ուղղակի և անուղղակի աջակցութունն է

սոցիալտոմարձի իջեցման և սոցիալական սպահովութան վողջ սիստեմի ռահմանափակման քաղաքականութան, աջակցութունն՝ ամենանողոք ռադիկալացման նոր ալիքին, դա դործադուրների վիժեցման, սարտոտափի կազմակերպումն, արբիտրափի կատարելագործումն է, վորպես բանվոր դասակարգի ստրկացման և շտրեյկերիսերութան միջոցի:

«Թողութղական մասսաների տնտեսական և փինանսական կողողումն դով — դա բաղմակողմանի աջակցութունն է բանկերի, տրեստների և կարտելների քաղաքականութան, մասսայական սպանման բոլոր ապդաքականութան, մասսայական սպանման բոլոր ապրանքների թանգացման քաղաքականութան, հարկային բեռան ծանրացում, սլոբոտեկցիոնիզմի ակտիվ աջակցութունն:

«Գաղութային թալանի դծով — դա դաղութային և կիսադաղութային յերկրների սողգային-ազատագրական շարժման բացահայտ ճնշումն է, դա տասնյակ հազարավորների բանտարկութուններն են. և մասսահազարավորների բանտարկութունները Հնդկաստանում, դյուղերի կործանում ողանավերի միջոցով Չինաստանում, ուղղակի աջակցութուն Չան-Կայ-Շիի դահճային կատաղարութան և բացահայտ պատերազմ, վոր վարում են ռադիկալ Նալերը Յանցզիի վրա կարմիր Բանակի ջոկատների դեմ Չինաստանի հարավում, մասսայական պատիժներ Հնդկաչինում:

«Իմպերիալիստական հալչալիստան դծով, — դա անմիջական և ակտիվ մտանակցութունն է վերսայլան սիստեմին, խիստ գաղանի դիվանագիտութան կուլիսային դավերին, «խաղաղասիրութան» դրոշակի տակ՝ սպառազինումների ու պատերազմի պատրաստութան

վակլանայի աջակցութիւնն և, տարձական դա-  
շինքներն սխտեմի աջակցութիւնն և :

«Միջոցային սոցիալ-դեմոկրատիայի վողջ հակա-  
հեղափոխական, հակաբանվորական քաղաքականու-  
թիւնն իր ավարտումն և գոնում աշխարհիս առաջին  
պրոլետարական սեփական հանդէպ բլոկադա և ուղ-  
մական ինտերվենցիա պատրաստելու մեջ» (ընկ. Մա-  
նուիլսկու գեկուցման թեղիաներից) :

Ռուսական մենչեվիկներն «Միութենական Բյուրո-  
յի» դատաւարութիւնը ամբողջ պարզութեամբ ցույց  
տվեց, վսր 2-րդ Ինտերնացիոնալը դարձել և ԽՍՀՄ-ի  
դեմ պատերազմի պատրաստվող համաշխարհային իմ-  
պերիալիզմի մարտական ջոկատը :

Ահա սոցիալ-Ֆաշիստների դավաճանական քաղա-  
քականութեան որինակները .

«Բանվորական» մինիստր Մնուդեներ կոչ և անում  
անգլիական պրոլետարներին գոհաբերող լինել հանուն  
անգլիական կապիտալիզմը ճգնաժամից փրկելու : Աշ-  
խատանքի «բանվորական» մինիստր Մարգարիտտ  
Բողվելը մերժում և գործադուրկների պատղամալու-  
թիւններին ընդունել և կանանց ու յերիտասարդ-  
ների գործազրկութեան նպաստը վերացնելու պատրաս-  
տութիւնն և տեսնում» :

«Իերմանական սոցիալ-դեմոկրատները ձայն են տա-  
լին սոցիալական լապահովութեան իջեցման բոլոր Ֆա-  
շիստական որենքների ոգտին : Աշխատանքի սոցիալ-  
դեմոկրատ մինիստր վրասելը առաջին արշավանքն ըս-  
կուց գործադուրկների վտիտ նպաստների դեմ : Հի-  
վանդանոցային դրամաբեկներն միութեան սոցիալ-  
դեմոկրատ նախագահ Լեմանը առաջինը յեղաւ, վսր

արշավանք սկսեց հիւանդութեան նպաստների դեմ» :

«Սոցիալ-դեմոկրատները և պրոֆբյուրոկրատները  
Ավստրիայում, Հոլանդայում, Հունգարիայում և մի  
քանի այլ յերկրներում հանդէս են գալիս գործադուրկ-  
ներին հարկազիւ աշխատանքի ուղարկելու վերաբեր-  
յալ Ֆաշիստական որենքների քացահայտ պաշտպանու-  
թեամբ : Կապիտալի այդ լակեյները, վորոնք հարկա-  
զիւ արշատանքի մասին ստոր առասպելներ են տարա-  
ծում պրոլետարական դիկտատուրայի յերկրի նկատ-  
մամբ, հենց իրենք են մասսաների ստրկացման գործին  
նախաձեռնողները : «Արտադրական նպաստների» դրո-  
շակի տակ 2-րդ Ինտերնացիոնալի փառք ու պարծանք  
Ֆրեդրիխ Ադլերը և Ոստո Բաուերը ավստրիական գոր-  
ծադուրկների համար իսկական դադութեային հարկազիւ  
աշխատանք և Ֆաշիստական ստրկութիւն են պաշտ-  
պանում» :

«Անգլիական արեդ-յունիոնների առաջնորդները  
գործադուրկի մանածագործների, բրդագործների և  
լեռնագործների յեանվից դավաճանաբար պայմանա-  
վորում են ձեռնարկատերերի հետ աշխատավարձի ի-  
ջեցման և բանվորական որվա յերկարացման մասին» :

«Գերմանական սոցիալ-դեմոկրատ Ջինցհեյմերը  
հաշտաբար առյանում ձայն տվեց Բեռլինի մետաղա-  
գործների աշխատավարձը 8 տոկոսով իջեցնելու ոգ-  
տին : Ռուրի գործադուրկի ժամանակ պրոֆբյուրոկրատ-  
ները ձայն տվին լեռնագործների աշխատավարձը 6  
տոկոսով իջեցնելու ոգտին» :

«Պրոֆբյուրոկրատներն որն սրին վիժեցնում են  
բանվոր դասակարգի գործադուրկին պայքարը : Ռու-  
ըում և Բեռլինում, Բրեդֆորդում և Լանկաշիրում ,

Վարչախոյուն, Փարիզում և Տոկիոյում, նրանք դափա-  
ճանում են լեռնադորձներին, մանածադորձներին, մե-  
տադադորձներին և փոխադորձներին: Խեմնիցում նը-  
րանք մատնում են արամվայի գործադուլափորներին՝  
աշխատանքից արձակելու համար: Իսպանիայում պը-  
րոֆմիտիթենական սնեղը վոստիկանատներ են հանդի-  
սանում գործադուլափորների դեմ պայքարելու հա-  
մար: Աշխատանքի ամերիկական Ֆեդերացիան Հուլիե-  
րի հետ պայմանադիր և կնքում գործադուլներից հրա-  
ժարվելու մասին և իր կոնգրեսում բացահայտորեն դեմ  
է դուրս գալիս սոցիալական ապահովութեան, այն պա-  
արվակով, թե պետութեանից նպաստ ստանալը ամե-  
րիկական բանվորի արժանապատվութեանից ցածր մի  
գործ է (Վիլյամ Գարին): Յերբեք չի յեղել պրոֆբյու-  
րոկրատների այնքան բացահայտ ու ցինիկական շուր-  
րեյիբեխերութեան, ինչպիսին հիմա յե: Կապիտա-  
լիստներն այլևս կարիք չունեն դեղիններին և պինկեր-  
րոններին կանչելու, յերբ շտրեյիբեխերն են հար-  
կափոր լինում — նրանց ծառայելու պատրաստ են 2-րդ  
և Սմստերդամյան ինտերնացիոնալները» (Պրոֆինտեր-  
նի կոչից):

Առանց ջախջախելու սոցիալ-դեմոկրատիային, չի  
կարելի տապալել բուրժուական դիկտատուրան պրոլե-  
տարական հեղափոխութեամբ, չի կարելի նվաճել բան-  
վոր դատակարգի մեծամասնութեանը: Ուստի սոցիալ-  
դեմոկրատիայի դեմ պայքարելը կոմունիստական Ին-  
տերնացիոնալի հիմնական պրոբլեմն է հանդիսանում  
այն պայքարում, վորը նա վարում է մասսաներ ձեռք  
բերելու համար: Այդ պայքարն առանձնապէս խոշոր

նշանակութեան ունի հեղափոխական վերելքի ներկա  
մոմենտում: Պլենումը շատ մեծ ուշադրութեան նվի-  
րոց սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարելու հարցին:  
Նա տվեց նրա հետպատերազմյան զարգացման մանրա-  
մասն բնութագրութեանը, թվելով պրոլետարիատին  
դավաճանելու բոլոր ետապները:

«Ի՞նչն է, վոր, չնայած դավաճանութեաններին այս  
յերկար շարանին, բանվորներին պահում է սոցիալ-  
դեմոկրատիայի շարքերում:

«Սոցիալ-դեմոկրատիայի ապարատի և նրա շար-  
քերը մտնող բանվորների փոխհարաբերութեաններին  
հիմունքը կազմում է հարկադրանքը՝ նրա բոլոր ձեւիե-  
րով: Բանվորը «ազատ» է մտնել կամ չմտնել օեֆոր-  
միստական պրոֆմիտեթյուններին շարքերը, — բայց  
գործնականում նրան հարկադրում է տնտեսական ան-  
հրաժեշտութեանը: Բանվորը աշխատանք կարող է ըս-  
տանալ պրոֆմիտեթյան միջոցով, գործադրկութեան  
ժամանակ նրան նպաստ է տալիս պրոֆմիտեթենական  
դրամարկը, սոցիալական ապահովութեան սիստեմը  
ամենասերտ կերպով պրոֆմիտեթենական ապարատի  
հետ և կտալած: Սոցիալական բնույթ ունեցող բոլոր  
հիմնարկութեաններում բուն են դրել սոցիալ-դեմոկ-  
րատները: Ձեռնարկատերը բանակցութեաններ և վա-  
րում սոցիալ-դեմոկրատներին միջոցով, ջանալով նրանց  
հեղինակութեանը բարձրացնել բանվորական մասնայի  
աչքին. սոցիալ-դեմոկրատական գործարկումի անդա-  
մը ազատ մուտք ունի դիրեկտորի կարիները, նա այս-  
պես ասած լույս է տալիս կապիտալի անդրադարձ լույ-  
սով. նրա փոքրիկ յերաշխափորութեանները անպայման  
կկատարվեն, վորպեսզի բանվորներին մեջ աղբյուրի

բարեմիտ գործարկումի ոգտակարութեան տպավորու-  
թյուն ստեղծվի: Մահ, հիվանդութիւն, հաշմանդա-  
մութիւն, ծերութիւն — այդ ամենը կախման մի  
չլիթա յե, վոր ոգտագործում ե սոցիալ-դեմոկրատա-  
կան ապարատի ծառայողը բանվորին այդ ապարատի  
ճանկող թաթերից բաց չթողնելու համար:

«Հարկադրման այս ձեւիէ հետ միասին լայն գործա-  
ծութիւն ունի ամեն տեսակի կաշառքը: Սոցիալ-դե-  
մոկրատիան վոչ միայն ոգտագործվում ե կապիտալիզ-  
մի կողմից բանվորական շարժումը լիկվիդացիայի յեն-  
թարկելու համար, այլ և ինքը ոգտագործում ե կապի-  
տալիստական պետութեան վողջ ապարատը բանվոր  
դասակարգի վրա իր ճնշումն ուժեղացնելու համար»  
(Ընկ. Մանուէլիսկու գեկուցումից):

Վերջին ամիսներում մի շարք կապիտալիստական  
յերկրներում մենք նկատում ենք ուժեղ խլրտցմաներ  
սոցիալ-դեմոկրատիայի ներսում: Այդ խլրտումն ամե-  
նից ավելի սուր ձեւեր ե ընդունում այն յերկրներում,  
ուր անտեսական ճղնաժամի հեղափոխական ճղնաժամ  
դառնալու տենդենցներն ամենից ավելի յեն զարգացած:  
«Մի յարք յերկրներում, որինակ՝ Գերմանիայում, նը-  
լանք արտահայտվում են նրանով, վոր ամբողջ յերի-  
տասարդական տեղական կազմակերպութիւններ անց-  
նում են կոմկուսակցութեան շարքերը, մյուսներում,  
ինչպես Սլոտրիայում և Չեխո-Սլովակիայում, առայ-  
ժըմ արտահայտվում են նրանով, վոր աճում ե ոպու-  
լիցիան ընդդեմ կառավարող ինտանցիաների, յեր-  
րորդներում, որինակ՝ Անգլիայում, նրանով, վոր հե-  
ռանում են բանվորական կուսակցութեան շարքերից և  
այլն: Յեւ սոցիալ-դեմոկրատ բանվորները խլրտում-

նրի մակարդակների այս բազմազանութիւնը պահան-  
ջում ե կոմկուսակցութիւններից մտածված, վոչ-  
շարուն մոտեցում ունենալ այսպիսի յերկուցմների  
հանդեպ» (ընկ. Մանուէլիսկու գեկուցումից):

«...Սոցիալ-դեմոկրատական բանվորական մաս-  
սաների հարաճուն ձախացում ե տեղի ունենում: Մատ-  
նանշենք սոցիալ-դեմոկրատական բանվորների և ան-  
գամ վորոչ պաշտոնյաների մասնակցութիւնը տնտե-  
սական մարտերում վերջին ժամանակներս կոմունիստ-  
ների և հեղափոխական պրոֆոպագիցիայի հետ կողք-  
կողքի ընդդեմ իրենց իսկ առաջնորդների դաժնաճանու-  
թեան և շարեյկերիերութեան: Աճում ե սոցիալ-դե-  
մոկրատ բանվորների ճգտումը արյունոտ Փաշիզմի  
դեմ պայքարելու համար: Վոչ շատ մեծ կենտրոննե-  
րում այլևս անսպասելի չի թվում, յերբ սոցիալ-դե-  
մոկրատները ջոկատները մեր ընկերները և «պայքարի  
միութեան» անդամները՝ հետ միասին կոմում են Փա-  
շիտների արյունոտ սխրագործութիւնների դեմ: Խո-  
չոր քաղաքներում մենք ականատես ենք դեպքերի, յերբ  
սոցիալ-դեմոկրատների ջոկատները և անգամ «Հանրա-  
պետական Դրոշակի» վոչ մեծ ջոկատները մեզ հետ մի-  
ասին մասնակցում են նացիոնալ-սոցիալիզմի դեմ ուղ-  
ղված յերկուցմներին և սեզամ կոմում են մեր ընկերնե-  
րի հետ կողք-կողքի»:

«Սոցիալ-դեմոկրատիայի ներսում հասունացող  
ճղնաժամը մեծ հնարավորութիւններ ե տալիս կու-  
սակցութեան կողմը գրավելու վոչ միայն սոցիալ-դե-  
մոկրատիայի ստանձին անդամներին, այլ և ոպողի-  
ցիոն բանվորների ամբողջ խմբերին: Մեզ հայտնի յե,  
վոր մի քանի տեղական կազմակերպութիւններ իրենց

վարչություններով միասին անցել են Կոմունիստական Կուսակցութեան կողմը» (ընկ. Մանուկըկու գեկուցումից) :

Կոմունիստներից պահանջվում է ամենամեծ ակտիվություն սոցիալ-դեմոկրատիայի դավաճանութեան դեմ պայքարելու համար : Անհրաժեշտ է անցնել հարձակման ընդդեմ սոցիալ-դեմոկրատիայի այն բոլոր հարցերում, վորոնք հուշում են բանվորութեանը, ինչպես, որինակ՝ ԽՍՀՄ-ին վերաբերող հարցերը, բանվոր դասակարգի տնտեսական պայքարի-հարցերը հանդեպ կապիտալի հարձակման, սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխներին կապիտալիստական քաղաքականութեան հարցերը Ֆաշիզմի նկատմամբ : Կոմունիստները պետք է ուժեղացնեն իրենց ազդեցության այս բոլոր հարցերի շուրջը, մերկացնեն սոցիալ-դեմոկրատներին և հանդես գան նախաձեռնողի դերում՝ կապիտալիզմի դեմ պայքարելու համար վարից միասնական հեղափոխական Ֆրոնտ կազմակերպելու ուղղությամբ :

Մենք դասակարգային պայքարի ներկա մոմենտում առանձնապես մեծանում է «դասակարգ դասակարգի դեմ» պայքարի տակտիկայի նշանակությունը :

«Դասակարգ դասակարգի դեմ» տակտիկան այնպիսի մի տակտիկա չէ, վոր իր սուր ծայրով ուղղված է սոցիալ-դեմոկրատիայի դեմ՝ նրան մերկացնելու համար բանվորական լայն մասսաների աչքին, վորոնք հաճախ նրան ընդունում են իբրև «վտարադույն չարիք» :

«Դասակարգ դասակարգի դեմ» տակտիկան դեռևս մասունները կողմից չի յուրացված : Մեր ճատերը սոցիալ-դեմոկրատիայի Ֆաշիստականացման մասին մա-

կերեսային են, գեռես Կոմկուսակցութեան համար միասու արյուն չեն դարձել : Կոմունիստները, չնայած նրապատասխան իրադրութեան, իրենց «դասակարգ դասակարգի դեմ» տակտիկայով դեռևս չեն կարողացել հիմնովին խախտել սոցիալ-դեմոկրատիայի դիրքերը բանվոր դասակարգի մեջ : Ակնհայտ է, վոր այս տակտիկայի կիրառման դործում կոմունիստները սխալներ են լաց թողնում :

«Ի՞նչպիսի սխալներ են դրանք : Առաջին, սոցիալ-տունիստական պատիվություն սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարելու խնդրում, մի տեսակ ինքնապաշտպանութեան տակտիկա, փոխանակ հարձակողականի : Այդ առանձնապես ցայտուն է արտահայտվել և արտահայտվում է այն կոմունիստների մոտ, վորոնք ռեֆորմիստական պրոֆիտություններում են աշխատում» (ընկ. Մանուկըկու գեկուցումից) :

Այս սոցիալ-տունիստական պատիվությունը մենք դեռ վուչ ամեն տեղ ենք կարողացել հաղթահարել : Անդամ մեր լուսավորչի կուսակցություններում մի շարք դեպքերում մենք նկատում ենք սոցիալ-տունիստական ռեյտիվներ :

«Յերիբորդ. կոմունիստները հաճախ մոռանում են, վոր «դասակարգ դասակարգի դեմ» տակտիկան հրաժարում չէ միասնական բանվորական Ֆրոնտի տակտիկայից, այլ, ընդհակառակը, նրա ամենալայն կիրառումն է, իբրև, ամենից առաջ, դասակարգային պայքարի տակտիկա : Հենց նրա համար, վոր մենք պայքարում ենք, վոր մենք սոցիալ-դեմոկրատիային մերկացնում ենք փաստերով, գործով, բանվոր դասակարգի պայքարից ձեռք բերված վտարով» :

Սոցիալ-դեմոկրատիային հաջողութեամբ մերկայեցնելու համար, պետք է սովորել սոցիալ-դեմոկրատիային դնելու այնպիսի դրուժխան մեջ, վորը բանվոր դասակարգին չափ ավելի բան ասեր, քան ամենակրահոտ կոմունիստական ճառերը: «Սոցիալ-դեմոկրատ բանվորների մեջ ազիտացիա մղելու մեր մեթոդները դեռևս չափից դուրս վատ են: Մենք նրանց այնպես ենք դիմում, ասես թե մեր առաջ կոմունիստական աուդիտորիա գտնվելիս լինի, վորի համար սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական բնույթը միանգամայն պարզ է, կամ այնպես, ասես թե այնտեղ նստած լինեն մարդիկ, վորոնք իրենց զաղափարական կապերը խզել են սոցիալ-դեմոկրատիայի հետ, վորոնք միայն մի փոքր բացատրական կարիք ունեն կոմունիստներին շարքերը լեցվելու համար» (ընկ. Մանուկյանու գեկուցումից):

«Բասակարգ դասակարգի դեմ» տակտիկան յերբեք չի կարելի հիմնել այն պատկերացման վրա, թե մյուս բոլոր դասակարգերը համատարած ռեակցիոն մասսաներին ներկայացնում իրենցից:

Այդպիսի դիրքավորում «դասակարգ դասակարգի դեմ» տակտիկա չէ, այլ կոմունիստներին դասակարգից կղզիացնելու տակտիկա:

«Բասակարգ դասակարգի դեմ» տակտիկան ուղղված է «փոքրագույն շարիքի» թեորիայի դեմ, մի թեորիա, վորի ոգնութեամբ սոցիալ-դեմոկրատիան խաբուում է մասսաներին: «Սոցիալ-դեմոկրատիան որն որին պընդում է բանվորների առաջ, թե նա Իրյունինգի կառավարութեանն աջակցում է նրա համար, վոր նա արվելի փոքր շարիք է, քան Հիտլերի կառավարութեանը, վոր

կարող է հաջորդել նրան: Անգլիական «ձախ» անկախները կոչ են անում բանվորներին աջակցելու լեյբորիստական կառավարութեանը, վորովհետև նա արվելի լավ է, քան պահպանողական կառավարութեանը և այլն» (նույն տեղը):

Բայց կոմունիստները դեռ վոչ ամեն տեղ են պարզ ու կոնկրետ ցույց տվել մասսաներին, թե ինչու սոցիալ-դեմոկրատիան փոքրագույն շարիք չէ: Նա փոքրագույն շարիք չէ վոչ թե նրա համար, վոր «արվելի վատ» է քան Փաշիստները, կամ «նույն է», ինչ Փաշիստները, այլ նրա համար, վոր նա գլխավոր խոչընդոտ է բուրժուական դիկտատուրայի բոլոր ձեւերի դեմ պայքարելու համար մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելու ճանապարհին, նրա համար, վոր նա բուրժուակալի գլխավոր սոցիալական հենարանն է: Այդ ցույց է տալիս միջազգային սոցիալ-դեմոկրատիայի վողջ փորձը Գերմանիայում, Ավստրիայում, Անգլիայում և այլն:

«Բասակարգ դասակարգի դեմ» տակտիկան չի նշանակում հրաժարվել մանևիլրուց: Կոմունիստների մանևիլրումը անհրաժեշտ է: Այն ինչ կիԳԿ-ի 10-րդ պլինումից սկսած մանևիլրների մեր արսենալը չափազանց աղքատիկ է: Մենք չենք, վոր մանևիլրում ելինք, այլ սոցիալ-դեմոկրատիան եր մանևիլրում մեր դեմ» (նույն տեղը):

Մասսաների ռադիկալիզացիայի ռեփուզացումը պահանջում է, վոր կոմունիստները մեծ ակտիվութեան հայտարարեն մանևիլրելու դործում: Սոցիալ-դեմոկրատիան դեռևս մի ամբողջ շարք «ձախ» մանևիլրներ է անում, հակառակ այն կոմունիստներին կարծիքին, վոր

յունք յենթադրում եյին, թե սոցիալ-դեմոկրատիան արդեն բարձրել է իր Փաշխատական զարգացման շրջանը և այլևս մանեվրել չի կարող:

Սոցիալ-դեմոկրատիայի մանեվրելու ընդունակութիւնը միշտ ել յերեք փաստից ե կախում ունեցել — ա) բանվոր դասակարգի դժգոհութեան աճման տեմպից, բ) Կոմկուսակցութեան ուժից և սոցիալ-դեմոկրատիայի մանեվրի մերկացման գործում նրա հայտարարած ահտիվութիւնից, գ) կապիտալի մանեվրունակութեան աստիճանից:

«Սոցիալ-դեմոկրատիան ներկայումս կարող է մանեվրել կա՛մ աշխատավարձի իջեցման չափերի հարցում, կա՛մ այն ձևով հարցում, վերով կատարվելու յետոյ իջեցումը: Նա կարող է նաև մանեվրել այնպիսի հարցերի բնադաշտում, վորոնք նրա պրակտիկ քաղաքականութեան կիրառման գործում նրա վրա վոչ մի պարտականութիւն չեն դնում, որինակ՝ «միասնական Փրոնտի» հարցում, «պրոֆիտութիւնների միասնութեան» հարցում և այլն: Յեւ մենք տեսնում ենք վերջին ժամանակներս, վոր սոցիալ-դեմոկրատիայի մանեվրները հենց այդ ուղղութեամբ են զարգանում: Յերկրորդ և Սոցիալ-դեմոկրատիայի ինտերնացիոնալների Յուլերիսյան նիստում սոցիալ-դեմոկրատ սրիկաները հանգիստ յեկան Յոթամյա բանվորական որվա, հնգորդա շարաթի, սոցիալական ապահովութիւն մտցնելու, ընդդէմ կապիտալիստական ռացիոնալացման, հանուն ԽՍՀՄ-ի հետ հարաբերութիւնների վերականգնման, գլխաթախման և այլ լողունքներով»:

«Սոցիալ-Փաշխատական անդամների այս նոր դիրքադէ կեղծութեան ստորութիւնը մերկացվում է

այն հիմնական փաստով, վոր, հանդես գալով հանուն Յոթամյա բանվորական որվա և հնգորդա շարաթի, միջառջային սոցիալ-դեմոկրատիան վոչ այլ ինչ է անում, յեթե վոչ կատարում է կապիտալի դիրկտիվը բանվորներին վոչ լրելով որ աշխատեցնելու և աշխատավարձը կրճատելու մասին»:

Մասաներին իրենց լողունքների շուրջը մտքիլկայացիայի յենթարկելով, կոմունիստները մամուլում, պարբերականներում, ժողովներում և փողոցում վճճակներ են դնելով դասակարգային պայքարի հարցերը, պիտք է սոցիալ-դեմոկրատական պարագլուխներին այնպիսի դրուժյան մեջ դնեն, վորտեղից բանվորների համար պարզ յերեկա նրանց դավաճանութիւնը (նույն տեղը):

### V. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՍԵԿՏԻԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՋԻԿՍ. ԽՆԴԻՐՆԵՐԸ

#### 1. ՄԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոմիստերնը 11-րդ սլենումը յեկալ լուրջ հաջողութիւններով: 1930 թ. փետրվարյան նախադասութիւնից հետո անցած մի տարվա ընթացքում Կոմիստերնը ձեռք բերեց իր շարքերի «բայլէփիկյան ավելի մեծ կոնտրիկացիա, իրբեւ վեղափոխական սրբութատրիատի համաշխարհային միասնական կուսակցութիւն»: Կոմիստերնի Երդ կոնդրեսի և ԿիԳԿ-ի 10-րդ սլենումի սահմանած գլխավոր գիծը հետեւողականորեն կիրառելու շնորհիվ քաղաքականորեն ջախջախիցին աջերը Համկ(բ)Կ-ի շարքերում և ապահովից կապիտալիստական յերկրները կոմկուսակցութիւնները

չարքերի հաջող դատումը աջ ունեւորաներից, «ձախ» ու հաշտվողական տարրերից: Յերբեք կոմիւնտերնի դեկաւար սեկցիան — Համկոմկուսը — այնքան համախըմբւիած ու միաձուլլ չէր յեղել, ինչպես հիմա: «Յերբեք աջ և «ձախ» ուկլոնիստներն իրենց ճակատներն այնպես չենին փչրել լենինյան կուսակցութեան բայլչեվիկյան գրահի հանդեպ, ինչպես հիմա: Յեւ միւսուսն ժամանակ կոմիւնտերնի շարքերում յերբեք չէր յեղել Ֆրակցիոն պայքարի, խմբակայնութեան և քաղաքական տատանումների վերացման հիման վրա բարձրացած այնպիսի կուս միասնութեան ու բայլչեվիկյան գողում, ինչպես հիմա» (ընկ. Մանուիլսկու գեկուցումից):

Համայնարհային հեղափոխական շարժման ներկա ետապի համար շարունակում և գլխավոր վտանգ մընալ աջ վտանգը: Ինչքան դեռ գոյութեան ունենա կապիտալիզմն իր դասակարգային հակասութեաններով, իր ճնշման ապարատով, սեպրեսիաներով, իր բուրժուական դիտութեամբ և իդեոլոգիայով, — այնքան գոյութեան կունենան նաև հարստահարվողների առանձին շերտեր, վորոնք հուս ունեն յուր գնալ առանց դասակարգային պայքարի դաժան որենքի, հարմարվել կապիտալիստական տուժանքի սխալմաններին: Քանի դեռ չի վոչնչցիլ սոցիալ-դեմոկրատիայի ճնշումը բանվոր դասակարգի վրա, քանի դեռ նա արմատախիլ չի արվի բանվոր դասակարգի շարքերից, այնքան անխուսափելի յեն աջ ոպորտունիստական սեցիդիսները կոմունիստական կուսակցութեանների շարքերում:

Հաշվետու տարեշրջանում ըստ ամենայնի բացուհայտ աջ սեցիդիսներ տեղի ունեցան չինական կոմկուսակցութեան շարքերում հանձինս չենդուսուխտա-

կան տարրերի, վորոնք պաշտպանում են միջազգային աշխրի լիկվիդատորական հայացքները, ինչպես նաև խաւալական կոմկուսակցութեան շարքերում՝ հանձինս Սանտինիի, Բլաւիոյի և Յերրաչիի, վորոնք Ֆաշիստական դիկտատուրայի դեմ պայքարելու խնդրում անցան լիկվիդատորական անկամայնութեան դիրքերը և դեմ դուրս յեկան կուսակցութեան քաղաքականութեան սկիւիլացմանը:

Կոմիւնտերնը հետեւողական պայքար մղեց նաև սոցիալ-դեմոկրատական տրադիցիաների դեմ կազմալխատանքի բնագաւառում, գործարանային բըիջները կուսակազմակերպութեանների հիմքը դարձնելու անընդունակութեան դեմ:

Ամենից ավելի բնորոշ «ձախ» սխալներից պետք է նշել գերմանական կոմկուսակցութեան անդամ ընկ. Մերկերի սխալը, վորը հաւասարութեան նշան էր դնում սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան առաջնորդների և շարքային անդամների միջև: Գերմանական կոմկուսակցութեանը ժամանակին, դեռ սաղմնավորման ընթացքում, բաց արալ այս սխալը և դրանով մյուս սեկցիաների համար ևս հեշտացրեց նման վնասակար յերեվութեաների դեմ պայքարելու գործը:

«Ձախ» բնութի մի ուրիշ, ավելի կոպիտ սխալ կատարեց Լի-Լի-Սյանը Չինաստանում: «Լի-Լի-Սյանի սխալի եյութեանը նրանում է, վոր նա Չինաստանում սկսվող հեղափոխական վերելքի առանձին հայտանիշները ճգնում էր բացատրել իբրև հեղափոխական սիտուացիայի սկզբնավորում Չինաստանում և վողջ աշխարհում, այնտեղից հանելով միանգամայն անձիշտ պուտչական յեղբակացութեաններ, վորոնք սպառնում

եյին կործանել չինական Կոմկուսակցությունը (ընկ. Մանուելյակու ղեկուցումից) :

Կոմկոնտերնի յերկրորդ խոշոր նվաճումը հաշվետու շրջանում դերմանական Կոմկուսակցության ձեռք բերած հաջողություններն են : Ընտրական հաղթանակը ուելիստազում (4,6 միլ.), գործարկումների ընտրության ժամանակ ձեռք բերած հաջողությունները, կապիտալի հարձակման դեմ ծավալված պայքարը (մեծադադործների գործադուլը Բեռլինում, լեոնադործների նը՝ Ռուրում, նավահանգստային բանվորներինը՝ Համբուրգում), վոդոցային ցույցերը Ֆրանկի դեմ և կուսակցության 80 տոկոսով աճումը մեկ տարում, դալիս են ասելու, վոր Գերմանական Կոմկուսակցությունը հաստատուն քայլերով առաջ է դնում բանվոր դասակարգի մեծամասնության նվաճման ճանապարհով : Գերմանական Կոմկուսակցության աճումը ցույց են տալիս հետեվյալ տվյալները :

«... Անցյալ տարվա հուլիսից մինչև սեպտեմբերը մենք 9000 հոգու աճում ենք ունեցել, սեպտեմբերից հոկտեմբեր՝ 22 հազար : Հոկտեմբեր ամսին կուսակցությունը 155 հազար անդամ ուներ, այդպիսով հասնելով այնպիսի մի մակարդակի, վորպիսին չէր յեղել 1923 թվից ի վեր, յերբ կուսակցության անդամների թիվը հասնում էր ներկա թվի մաքսիմումին : Երկաշումս կուսակցությունը այս թվերը չափազանց հետ է թողել : Նոյեմբեր ամսին նա ուներ 169 հազար անդամ, դեմեմբերին՝ 180.000, իսկ առ 1-ը հունվարի 1931 թ.՝ 198.943 անդամ» :

«Կուսակցության անդամների թիվն ընդհանուր առմամբ 20 տոկոսով ավելի կլինի, յեթե հաշվելու լի-

նենք նաև նրանց, վորոնք անդամավճարների մոշման հաշվարկմամբ դեռևս չեն ընդգրկված : Այսպիսով մենք ունենք վոչ թե 200.000 անդամ, այլ մոտավորապես 20 տոկոսով ավելի» :

«Յեթե Կոմյերիտիության 1929 թ. սեպտեմբերի 11-րդ համագումարի ժամանակ 21.630 անդամ էր հաշվվում (թեև նրանցից վոչ բոլորն էյին անդամավճար տալիս, և այդ տեսակետից հարկավոր է գործը բարելավել), ապա 1930 թ. սեպտեմբերի արդեն 26.500 անդամ կար : Այս դարգացումը արագ թափով շարունակվեց, և 1931 թ. փետրվարին Կոմյերիտիությունն արդեն ուներ 40.000 անդամ : Այս տարվա մարտի 1-ին ունեյինք արդեն 43.000 անդամ» (ընկ. Տելմանի հեկուցումից) :

Յերրորդ խոշոր հաջողությունն այն է, վոր մի շարք կապիտալիստական յերկրներում աճել է կոմկուսակցությունների ազդեցությունը մասսաների վրա : Գերմանական Կոմկուսակցության հետ միասին, վորը ավելացրեց ուելիստազի ընտրությունների, Բրասուշվեյդի կոմունալ հիմնարկությունների ընտրությունների (1930 թ.) և գործարկումների ընտրության ժամանակ շահած ձայների թիվը, հարկավոր է նշել նաև Բուլղարական Բանվորական կուսակցության ձեռք բերած հաջողությունները 1930 թ. կոմունալ, շրջանային և այլ ընտրությունների ժամանակ : Խոշոր հաջողություններ ձեռք բերեց նաև չեխոսլովակիական կուսակցությունը գործարկումների ընտրության ժամանակ : Աճել է Լեհաստանի Կոմկուսակցության ազդեցությունն ու դեկավարությունը պրոլետարիատի և դյուրացիության հեղափոխական մարտերի նկատ-

մամբ: Պիլսոնը չինայի անլուր Փաշխտական տերրորի պայմաններում լեհական Կոմկուսակցութեանը հաջողվեց մի շարք վայրերում կազմակերպել ու գլխավորել պրոֆետարիատի և գյուղացիութեան սրայքարը լեհական բուրժուազիայի հարձակման, հարկերի, Փաշխտական տերրորի և գործադրիութեան դեմ: Կոմկուսակցութեան ազդեցութեան աճումը մասսաների մեջ յերեւման յեկամ նաև նրանում, վոր մասսայական հեղափոխական ցույցեր և գործադուրիների յելույթներ կազմակերպվեցին (Գերմանիայում, Չեխո-Սլովակիայում, ՀԱՄՆ-ում, Ավստրիայում, Հնդկաստանում, Լեհաստանում և այլն): Բարձրացել և կոմկուսակցութեանների մարտունակութեանը: Կան յերկրներ, ուր բերթե ամեն որ այս կամ այն կենտրոնում մասոայական ցույցեր են տեղի ունենում: «Կոմկուսակցութեանների քաղաքական ազդեցութեան աճման դուրընթաց բեկում է ստեղծվել նաև նրանց թվական քանակութեան աճման ուղղութեամբ» (ընկ. Մանուելիսկու ղեկուցումից):

Կոմկուսակցութեանների թվական քանակութեանում աճել և Գերմանիայում, Լեհաստանում, Իտալիայում, Չինաստանում, Հնդկաչինում, Իսպանիայում, Բուլղարիայում, Ավստրիայում և այլ սեկցիաներում:

Չորրորդ հաջողութեանն այն և, վոր Չինաստանում մի քանի տասնյակ միլիոն բնակչութեան ունեցող տերրիտորիայում խորհրդային իշխանութեան և կազմակերպվել և Կարմիր Բանակ և ստեղծվել: Չինական Կարմիր բանակի հաջողութեանները նախ և առաջ չինական Կոմկուսակցութեան հաջողութեաններն են, վորը այդ բանակի կոմունիստական կորիզն է ստեղծել և

կարողացել և, հիմնվելով ճիշտ քաղաքական գծի վրա, նրան միլիոնավոր գյուղացիութեան անձնուրաց աջակցութեան ասարկա դարձնել: «Չինական խորհուրդների Կարմիր Բանակն արդեն մի շարք փայլուն հաղթանակներ և տարել: Նա հետ մղեց Գոմինգանի առաջին հարձակումը Յոյանսոխում, նա հաղթականորեն ընդլայնում է իր տերրիտորիալ բազան Խունանում և Հուբեյում. վերջին ժամանակներս նա ծանր հարվածներ հասցրեց բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխութեանը Հյուսիսային Չինաստանում և Խեյանում» (ընկ. Մանուելիու ղեկուցումից): Չինական Կոմկուսակցութեան անդամների թիվը մեկ տարում 150.000-ից բարձրացավ 200.000-ի: Նա կարողացավ նույնպես մասսայական կազմակերպութեանների ցանց ստեղծել գյուղում, կազմակերպութեաններ, վորոնց ուժն ու ազդեցութեանը արագ թափով աճում են:

Կոմիսներնի հինգերորդ խոշոր հաջողութեանն և հանդիսանում Հնդկաչինի Կոմկուսակցութեան վերջնական ձեվակերպումը, վորի ազդեցութեանը արագ թափով աճում է Հնդկաչինի բազմամիլիոն գյուղացիական մասսաների մեջ: Կոմկուսակցութեանը ձեվակերպվեց նաև Հնդկաստանում, վորն այսօր մարտական հեղափոխական ծրագրով հանդես է դալիս ընդդեմ այլազգի և տեղական բուրժուազիայի: Ծավալվող հակաիմպերիալիստական սրայքարը Հնդկաստանում, վորն ընթացում է հաճախակի բնույթ ստացող քաղաքական գործադուրների, իմպերիալիզմի ղեկավարների և գյուղացիութեան ընդհարումների (Բոմբեյ, Կալկաթա, Մադրաս, Կարաչի և այլն) և ղինված ապստամբութեանների միջոցով, ուր գործն անցնում է հեղափոխա-

կան ժողովրդի կողմը, — ավելի ու ավելի հաճախ և փչրում հակահեղափոխական գաղափարի շրջանակները:

Ամենահատուկ տերրորի, մասսայական զնդակահարութեանների, մահապատիժների, ամբողջ դուռերի ավերումների պայմաններում՝ Փրանսիական ոսկուպանոնների կողմից, ծավալվում և հեղափոխական պայքարը հնդկաչինում բաղմահադար ցույցերի, զինված ընդհարումների, մասնակի ապստամբութեանների, չինոֆինիկների կարվածատերերի ու մանդարինների տների բրնձի ամբարների ավերումների, դուռերի փրկում-վարութեանների և տեղ-տեղ ել հյուսիսում, ուր ուժեղ և չինական հեղափոխութեան սպրեցութեանը, խորհուրդներ կազմակերպելու միջոցով: Չինական հեղափոխութեանը և Հնդկաչինի ու Հնդկաստանի հեղափոխական վերելքը փորում են իմպերիալիստական պետութեանների զաղութային քաղաքականութեան հիմքերը: Կոմիսսարների ուժեղացող ազդեցութեանը Արևելքի այս յերեք հիմնական յերկրներում վերխառնի նշանակութեան ունի զաղութային ժողովուրդների հեղափոխական պայքարի հետագա ծավալման և միջազգային պրոլետարիատի վողջ հեղափոխական շարժման համար:

Թե ինչպես մեր լավ աշխատանքի ղեկընում կարող են աճել մեր սեկցիաները, այդ մենք կարող ենք պահանջել ՀԱՄՆ-ի կալֆորնիական շրջանի հետևյալ որինակից:

«... Յերբ աշխատում են, բանվորները ղեկի մեջ են դալիս: Ահա այդ ժամանակում, այն և՛ դեկտեմբերի 31-ից մինչև հունվարի 6-ը կատարված աշխատանքի ղեկուցումը.

1) 6 ժողով և կայացված գործարանի առաջ:

ներկա են յեղել մոտ 2000 բանվոր: Աղբեր են տարաված, «Դեյլի Ուորկեր» և ժեռոններ են վաճառվել. 2) 9 ժողով դիշերանոցների դռներին կայացած հերթերի մոտ: Արդյունքը հավաքված է 500 ստորագրութեան սոցիալական ապահովութեան որենքի նախագծի տակ, վորը մշակել է Պրոֆմիանսութեան և գործադրութեան վեգան, «գործադուրկների շարժման» 27 անգամ և հավաքագրված, բաժանված է 1000 որինակ ազդ. 3) 14 ժողով և կայացվել աշխատանքի բորսաներում: Արդյունքը— 42 նոր անգամ հավաքագրվեց, 375 որինակ «Դեյլի Ուորկեր» վաճառվեց: Յուրաքանչյուր ժողով ընդգրկել է միջին հաշվով 250 բանվոր, ընդամենը 3500 հոգի. 4) 14 ժողով փակ շինքերում, ուր ներկա են յեղել 3000 բանվորներ. հավաքված է 160 ստորագրութեան. 5) 6 ռայոնական ժողով, ներկա են յեղել 250 հոգի, հավաքագրված է 6 հոգի, վաճառված է 12 որինակ «Դեյլի Ուորկեր», հավաքված է 35 ստորագրութեան. 6) 4 ժողով քաղաքային պարկում, ընդգրկված է 2000 բանվոր, հավաքագրված է 27 անգամ, հավաքված է 162 ստորագրութեան, վաճառված է 1000 որինակ «Դեյլի Ուորկեր» տարածված է 1000 որինակ ազդ. 7) անց է կացված 2 դիսկուսիոն յերեկո, հաճախել են 150 հոգի, հավաքված է 76 ստորագրութեան, հավաքագրված է 16 նոր անգամ. 8) «ընկերներ ավտոմոբիլով գործուղվել են ավելի հեռավոր քաղաքներ—Մերիպիլ, Որոսիլ և Ռոզվիլ: Տարածված է 2000 ազդ, վաճառված է 250 որինակ «Դեյլի Ուորկեր» արված է 100 հայտարարութեան գործադուրկների խորհուրդին միանալու մասին. 9) մամուլ և գրականութեան հրատարակված են 5 տարբեր աղբեր անդրերեն լեզվով, 1 ազդ էսպաներենով, 2 ազդ կանանց համար. 10) ընդհանուր նվաճումներ. հավաքագրված է 190

նոր անդամ, հախարչված և 1090 ստորագրութիւնն, վաճառված և 35 դոլլարի դրահանութիւնն, հանդանակված և 38 դոլլար, ընդգրկված և 5000 բանվոր, կայացվել և 55 ժողով, ոգտագործված 14 հոկտոբ: Գործողութիւնն սնկից դուրս չպրտելու դեմ գործոն ընդդէմութիւնն ցուլց տալու մեկ դեպք և յեղել. 11) ընդհանուր արդիւնքը— 10.000 բանվորների յերթ, վորից 2000—ը թափորում և 8000—ը մայթերի վրայով ուղեկցելիս:

«Արդիւնքն անպայման շատ մեծ և, չե՞ վոր կալիֆորնիան այնքան էլ պրոլետարական, արդիւնաբերական չըջան չե. իսկ յեթե այդպիսի աշխատանք կատարվեր Դիտրոյիտում, Յիլադելֆիայում և այլ վայրերում, յետ համոզված եմ, վոր նույնպիսի արդիւնքներ կլինէյին» (ընկ. Պյատնիցիու ճառից):

## 2. ՄԵՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սոցիալական հաջողութիւնների հետ միասին կոմիւնտերնի սեկցիաների մեծ մասում կան նաև մի շարք թույլ կողմեր և բացեր, վորոնք հիմնականում արտահայտվում են նրանով, վոր կոմկուսակցութիւնները յետ են մնացել մասսաների հեղափոխական վերելքից և սոցիալ-դեմոկրատիայի դեմ պայքարելուց: «Քանի վորական շարժման մեջ խոչոր տեղաշարժեր են տեղի ունենում, արագանում և բանվոր դասակարգի ձախացումը, քանիվում և սոցիալ-դեմոկրատիայի մասսայական քաղաք, աճում և մասսաների ակտիվութիւնը, շարժման մեջ են ներգրավվում պրոլետարիատի նոր ու թարմ խավեր, կանայք, յերիտասարդ բանվորներ: Պրոլետարիատին ոգնութիւնն են դալիս գյուղացիութիւնն և քաղաքային մասեր աշխատավորութիւնն քայ-

քայվող խավերը, ճնշված ժողովուրդների աշխատավորները (ընկ. Մանուիլսկու դեկլացումից): Դա ընդլայնում և հեղափոխական վերելքի մասսայական բազան և պահանջում և կոմունիստական կուսակցութիւններից զլիազորել ընդարձակվող հեղափոխական վերելքը, մարտականորեն վերադասավորել իրենց շարքերը:

Իրականում կապիտալիստական յերկրների կոմկուսակցութիւնների մեծ մասը դեռ մարտականորեն չի վերադասավորվել, չի անցել պրոլետարիատի մասսայական մարտերի ինքնուրույն դեկալարմանը: Առանձին գաղութներում, կիսագաղութներում և Յեվրոպայի կապիտալիստական յերկրներում հեղափոխական ճգնաժամի հասունացման կապակցութեամբ առանձնապէս սրվում և յերեք խոչորագույն կապիտալիստական յերկրները— ԽՍՀՄ-ի, Ֆրանսիայի և Անգլիայի—կոմունիստական շարժման յետ մնալու հարցը: կոմունիստական շարժման հետամնացութեամբ և առաջին, նրանում, վոր թերազնահատվում և ձախացող մասսաների հեղափոխական շարժման աճման թափն ու տեմպը:

Մի շարք կապիտալիստական յերկրների բազմաթիւ արդիւնաբերական ուսյուններում բանվորական գործադուլները տարեբայնորեն են առաջացել վող միայն հասկանալի ու ճիշդ կոմունիստների ակտիվ մասնակցութիւն (Լանկաշիրի և Հարավային Ուելսի գործադուլներն Անգլիայում, քաղաքական և տնտեսական մարտերն Իսպանիայում): Հետամնացութիւնն արտահայտվել և նաև գործադուլների շարժման նկատմամբ հասկանալի և ուղիղ տեղերի յերկրներում, վորտեղ

կոմկուսակցություններն ինդհատակյա յեն: Իտալիա-  
յում 3 որ— նոյեմբերի 23-ին, 24-ին և 25-ին— գոր-  
ծադուրիկների ցույցեր տեղի ունեցան «Տա'ց մեր յերե-  
խանների համար կամ Մուսոլինիի գլուխը» լուղունդով:  
Գործադուրիկ մասսաների աճող հեղափոխական շար-  
ժումը շատ տեղերում ընթանում է տարերայնորեն, ա-  
ռանց կոմկուսակցության ղեկավարության ու կազմա-  
կերպման: Այնինչ այն տեղերում, ուր գործադուրիկնե-  
րի մեջ համապատասխան աշխատանք է կատարվում,  
խոշոր արդյունքներ են ստացվում: Գործադուրիկներն  
ակտիվ մասնակցում են ցույցերին, հաճախում են ժո-  
ղախմբեր և մտնում է կոմկուսակցության մեջ:

Կոմունիստական ղեկավարության հետամնացու-  
թյունն արտահայտվում է նաև գյուղացիների ծավալ-  
վող հեղափոխական շարժման նկատմամբ: Իբրեվ որի-  
նակ կարող է ծառայել Արևիմտյան Ուկրաինայի կո-  
մունիստական կուսակցությունը, վորը չմասնակցեց  
Արևիմտյան Ուկրաինայում ծավալված գյուղացիական  
խոշոր շարժմանը:

Յեբրարդ, հետամնացությունն արտահայտվում է  
նրանով, վոր կոմկուսակցությունները չեն կարողա-  
նում բանվորների և գյուղացիության աշխատավորա-  
կան մասսաների ամենուրյա կոնկրետ կարիքների հի-  
ման վրա մասսաներին մորելիցացիայի յենթարկել հե-  
ղափոխական պայքարի համար: Կոմկուսակցություն-  
ների պահանջները հաճախ վերացական ինուլթ են կը-  
բում, բանվորական մասսաների չահերը չեն շոշա-  
փում: Ամերիկայում լեռնագործների գործադուրի ժա-  
մանակ հանդես էլին բերված «բանվորա-Ֆեբրուարական  
կատապարություն», «հանքերի աղագյոացում» լուղունդ  
ները— և վոչ մի խոսք գործադուրավոր բանվորների

անմիջական պահանջների մասին (ընկ. Գյատնիցկու-  
ճառից):

Մեր բլիթները և պրոֆմիությունները դեռևս չեն  
սովորել բայլչեվիկորեն մասսայական աշխատանք  
կատարել աշխատավարձի իջեցման, բանվորական որ-  
վա յերկարացման, աշխատանքի լարվածության, մաս-  
սայական արձակուրդների, սոցիալական արհեստի-  
թյան սիստեմի սահմանափակման, հետպատերազմյան  
չրջանում պրոլետարիատի կողմից բուրժուազիայից  
պոկված քաղաքական և սոցիալական նվաճումների  
վերացման դեմ: Անուշաղիր վերաբերմունքը պրոլե-  
տարիատի ամենուրյա կարիքների նկատմամբ՝ անդբո-  
տարիատի ամենուրյա կարիքների նկատմամբ՝ անդբո-  
տարձավ նաև փետրարի 25-ի գործադուրիկության մի-  
ջադգային որվա անցկացման վրա: Կոմինտերնի սեկ-  
ցիաները մեծ մասամբ չկարողացան պրոլետարիատի  
հեղափոխական ակտիվությունը մորելիցացիայի յեն-  
թարկել կարիքների և կոնկրետ պահանջների շուրջը:  
Հաճախակի անտեսվում և սխալ է կիրառվում միասնա-  
կան Ֆրոնտն ընդդեմ բուրժուազիայի և սոցիալ-Ֆա-  
շիզմի: Կոմինտերնի շատ սեկցիաներ արդեն շրջա-  
դարձ կատարել են բանվորական մասսաների ամենուրյա  
պահանջների ուղղությամբ: Բայց պրոֆմիութենական  
աշխատանքի աստարիղում այդ շրջադարձը դեռևս չա-  
փազանց աննշան է:

Յեբրարդ, հետամնացությունն արտահայտվում է  
նրանով, վոր շարունակվում է կոմկուսակցության  
քաղաքական աղբեցության թույլ կազմակերպչական  
ամբացումը: Դեռ շատ տեղերում կոմկուսակցություն-  
ները չեն կարողացել նվաճել գործարաններն ու Ֆար-  
բիկաները: Դեռ շատ սուր է կուսակցական ու պրոֆ-  
միութենական աշխատանքի ծանրության կենտրոնը

ձեռնարկութիւնները փոխադրելու, Ֆարբիկա-գործարանային բջիջներ ստեղծելու հարցը: ՀԱՄՆ-ում կուսակցութեան անդամներէ 10 տոկոսն է միայն ընկնում Ֆարբիկա-գործարանային բջիջներին, Չեխո-Սլովակիայում՝ 14 տոկոս: Գոյութիւն ունի նաև անդամներէ մեծ հոսունութիւն, վորը մի քանի տեղ, որինսկի՝ Ծրանսխայում, հասնում է մոտ 50 տոկոսի:

Կոմկուսակցութեան կազմակերպչական հետամնացութիւնը քաղաքական ազդեցութեան նկատմամբ, դա կոմինտերնի սեկցիաների հին, խորացնող արձատացած հիվանդութիւնն է, վորը նախապատերազմական շրջանից է ժառանգված: Կազմակերպչական հետամնացութիւնը տառապում է անարխո-սինդիկալիստական արհամարհանքով՝ հանդեպ պրոլետարիատի մասսայական քաղաքական կազմակերպման սոցիալ-դեմոկրատական, պարլամենտական ձեւերով: Սեկցիաների այս հիվանդութիւնը նաև նրանումն է, վոր ՀամԿ(բ)կ-ի կազմակերպչական ձեւերը մեխանիկորեն փոխադրվում են կապիտալիստական յերկրների կոմկուսակցութիւնները: Շատ կոմունիստներ զեռուս չեն ըմբռնում կոմկուսակցութեան կազմակերպչական խնդիրները, այն է՝ ձեռնարկութիւններում ամուր կազմակերպութիւններ ստեղծելը, և դրա փոխարեն կըզուս են փողոցային կազմակերպման հին ձեւիկն:

Չորրորդ, հետամնացութիւնն իր արտահայտութիւնը դտավ նրանում, վոր Ֆինական կոմկուսակցութիւնը 1930 թ. ամրան փաստորեն նահանջեց Ֆաշիզմի առջևից: Այդ անձնատվութեան հիմնական պատճառը դարձան Ֆինական կոմկուսակցութեան այն ոպորտունիստական իլլյուզիաները, թե պետք է հարմարվել «բեզալութեան», Ֆինական բուրժուազիայի գիլտատուրա-

յի ուժիմին: Ֆինական կոմկուսակցութիւնը ժամակին չգիտակցեց յերրորդ շրջանի խնդիրները, չգիտակցեց կուսակցութեան քաղաքականութեան մեջ վճռական շրջադարձ կատարելու անհրաժեշտութիւնը, հատկապես այն պահից, յերբ Ֆինլանդիան թեմակիտից տնտեսական ճգնաժամի շրջանը (1929 թ.) և Ֆինական բուրժուազիան սարսափով համակլեց ԽՍՀՄ-ի վիթխարի տնտեսական զարգացման հանդեպ: Փոխանակ տրնտեսական մարտերի և հեղափոխական պայքար ծավալելու, Ֆինական կոմկուսակցութիւնը հանուն լեզայ հնարավորութիւններէ պահպանման սուզվեց լեզայ կազմակերպութիւններէ մեջ, չամբարեցեց անլեզայ կազմակերպութիւններէ այն աշխատանքի ղեկավարութիւնը և յերկար ժամանակ հաշտվեց այսպես կոչված «ձախերի» ոպորտունիստական տակտիկայի հետ, «ձախեր», վորոնք պաշտպանում էյին ամեն գնով սոցիալ-դեմոկրատներէ հետ միասնութիւն կազմելու անհրաժեշտութիւնը: Ֆինական կոմկուսակցութիւնն ուզողում է իր սխալները, վերականգնում է կոմկուսակցութեան անլեզայ ապարատը: Ֆինական բուրժուազիային չհաջողվեց լսելըել կոմունիստական շարժումը Ֆինլանդիայում, բայց Ֆինլանդիայի իրադարձութիւնները դաս և նախազգուշացում պետք է հանգիտանան կոմինտերնի բոլոր սեկցիաների համար:

Հիւզերորդ, կոմունիստական ղեկավարութեան հետամնացութիւնն արտահայտվեց նաև նրանով, վոր «իմպերիալիստական յերկրներէ կոմկուսակցութիւնները բովականաչափ աջակցութիւն ցուց չովին դաշտութիւններէ ու կիսադաշտութիւններէ հեղափոխական-ազատագրական շարժմանը և տիրող ազգութիւնները թույլ մասնակցութիւն ունեցան յեվրոպական յերկր-

ների ճնշված ժողովուրդների հեղափոխական-ազատագրական շարժումներին» (ընկ. Մանուելյակու թեղիաներից) :

Վեցերորդ. հեռամնացությունն արտահայտվեց նրանով, վոր բավարար պայքար չծավարվեց Փաշիզմի և սոցիալ-Փաշիզմի դեմ : Անբավարար պայքարը Փաշիզմի և սոցիալ-Փաշիզմի դեմ իր ձևակերպումը դրտավ այն թեորիայում, ըստ վորի սոցիալ-Փաշիզմը «փոքրագույն չարիք» և Փաշիզմի նկատմամբ, առանց հասկանալու, վոր Փաշիզմը վոչ ալ ինչ է, յեթե վոչ բուրժուական դիկտատուրայի այլաձևություններից մեկը : Իս բուրժուական դիկտատուրային և սոցիալ-դեմոկրատիային հնարավորություն տվեց մասնավեր իրենց համար վատթարացած պայմաններում՝ պարլամենտարիզմի, Յունգի սլլանի, վերուսյլյան դաշնագրի և այլ հարցերի շուրջը :

Յութերորդ. կոմիտեերնի սեկցիաների հեռամնացությունն արտահայտվեց նրանով, վոր անբավարար դեկավարություն ցույց տվեց կոմյերիտմիության աշխատանքի նկատմամբ, վորը մի շարք յերկրներում այն պիտի թերություններ ունի, վորոնց չնորհիվ Անգլիայում և Պրանսիայում անդամների թիվը պակասել է : Կոմիտեերնը ժամանակին ավարարեց այս վտանդը և այժմ կոմիտեերնի սեկցիաների ուղղությունն է հրավիրում այն խոչոր կարեվորության վրա, վորպիսին ունի կոմյերիտմիության աշխատանքը, հատկապես հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստության շրջանում :

### 3. ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կոմիտեերնի սեկցիաներն իրենց հետագա աշխատանքի ընթացքում պետք է իրենց ուղղությունը կենտրոնացնեն հետեվյալ հիմնական խնդիրների վրա :

Կենտրոնական խնդիրը. «վորը դրված է բոլոր կոմունիստական կուսակցությունների առաջ, կայանում է նրանում, վոր պետք է նվաճել բանվոր դասակարգի մեծամասնությունը, վորպես բանվոր դասակարգին պրոլետարիատի դիկտատուրայի համար վճռական պայքարի հանելու անհրաժեշտ միջոցան» (ընկ. Մանուելյակու դեկուցման թեղիաներից) : Այս խնդրի կերտումը պահանջում է, վորպեսզի կոմունիստական կուսակցությունները դառնան բանվոր դասակարգի մասսայական կուսակցություններ, յերկրի վողջ ջադաքային կյանքի ակտիվ գործոններ : Այս խնդրի կերտումը պահանջում է ամբայնել ինքնուրույն հեղափոխական պրոֆշարժումը և ինքնուրույն պրոֆմիությունները, վորպես իսկական կազմակերպություններ, վորոնք ընդունակ լինեն գործնականում դառնալ կոմկուսակցությանից դեպի բանվորական լայն մասսաները ձգված շարժատար փոկեր :

Բանվոր դասակարգի մեծամասնության նվաճման համար մղվող պայքարը տվյալ ետպում պետք է ընթանա հետեվյալ ուղղություններով :

1. Պայքարել կապիտալի հարձակման դեմ և կազմակերպել պրոլետարիատի լայն իսկահարձակում ընդդեմ աշխատավարձի իջեցման, հանուն նրա բարձրացման, ընդդեմ մասսայական արձակումների, հարացման, ընդդեմ մասսայական արձակումների լրիվ նուն 7-ամյա բանվորական սրվա՝ աշխատավարձի լրիվ պահպանմամբ, հանուն սոցիալական ազատության՝ ձեռնարկատերերի և կապիտալիստների հաշիվն, հանուն գործադուրկներին անհապաղ օգնություն ցույց տալու :

2. Պայքարել բուրժուական դիկտատուրայի բոլոր անսակների դեմ ընդդեմ ձեռնարկատիրական և վոստեակների դեմ

տիկանական տերրորի, հանուն հեղափոխական բան-  
վորական կազմակերպութիւնների, մամուլի, ժողով-  
ների և խոսքի ադատութեան, հանուն Փաշխատական  
կազմակերպութիւնների անհապաղ ցրման, հանուն  
նրանց զինաթափման և բանվորների ղինման՝ Փա-  
շխատների հարձակումից պաշտպանվելու համար, ընդ-  
դեմ կապիտալիստական տերրորի գաղութներում, մաս-  
սայական քաղաքական գործադուլների պրոպագանդա,  
կազմակերպում և անցկացում, վորպես քաղաքական  
սեակցիայի և բուրժուական դիկտատուրայի բոլոր  
տեսակները դեմ պայքարելու միջոց մասսայական ինք-  
նապաշտպանութեան կազմակերպում գործարանային  
բաղայով:

3. Պայքարել իմպերիալիստական պատերազմի և  
հակախորհրդային ռազմական ինտերվենցիայի դեմ  
մերկացնել իմպերիալիստական կառավարութիւնների  
ռազմական-ինտերվենցիոն պատրաստութիւնները,  
պայքարել Չինաստանի Խորհրդային շրջանների ինտեր-  
վենցիայի յենթարկելու դեմ, կոմկուսակցութիւններէ  
կողմից ժամանակին մի շարք կազմակերպչական մի-  
ջոցներ ձեռք առնել լիակատար անլեզալ դրութեան  
անցնելիս պատրաստ լինելու համար, ուժեղացնել հա-  
կամելիտարիստական աշխատանքը, ուժեղացնել աշ-  
խատանքը բանվոր յերիտասարդութեան մեջ:

4. Հեղափոխական յելույթները բոլոր ձեւերը նա-  
խապատրաստելիս և այն ծախալելիս կոմիտեների սեկ-  
ցիաները պետք է անպայման ամենատնողոք և հետեւի-  
դական պայքար մղեն սոցիալ-դեմոկրատական և ռե-  
փորմիստական առաջնորդների դեմ. հենց նրանց իսկ  
դաժնաճանութեամբ մերկացնել նրանց «ձախ» մանկավր-  
ները: Դրա հետ միաժամանակ, հիմք ունենալով միաս-

նական Ֆրոնտ վարից, պետք է համառ աշխատանք կա-  
տարել սոցիալ դեմոկրատական բանվորներին և ռե-  
փորմիստական պրոֆիտութիւնների անդամներին նվա-  
ճելու համար: Կոմիտեներն սեկցիաների վողջ աշխա-  
տանքը պետք է կոնկրետ պահանջներով տողորված  
լինի և յուրաքանչյուր մասնակի պահանջը պետք է յեն-  
թակա դարձվի պրոլետարիատի հիմնական քաղաքական  
նպատակներին: Ուժեղացնելով ամենորյա պայքարը  
սոցիալ-դեմոկրատական առաջնորդների դեմ, կոմիտե-  
ներն սեկցիաները պետք է անխնա պայքարեն այն  
թեորիայի դեմ, ըստ վորի սոցիալ Փաշիզմը Փաշիզմի  
համեմատութեամբ «փոքրագույն չարիք» է համար-  
վում:

5. Կոմիտեներն սեկցիաներն իր ամբողջ լայնու-  
թեամբ պետք է դնեն կոմկուսակցութիւնների քաղա-  
քական աղբջութեան նկատմամբ ունեցած կազմակերպ-  
չական հետամնացութիւնը լիկլիզացիայի յենթարկե-  
լու հարցը: Յինանական կապիտալի դասակարգային  
կազմակերպութիւններին, նրա տրեսներին, դանադան  
տեսակի միութիւններին և Փաշխատական ջոկատներին  
պրոլետարները պետք է հակադրեն ձեռնարկութիւն-  
ները իրենց կազմակերպութիւնները:

6. Զարգացող հեղափոխական սպայքարն իր ամ-  
բողջ լրջութեամբ դնում է չքալոր և մանր գյուղացիու-  
թեան լայն խալերին պրոլետարիատի կողմը գրաւելու  
հարցը: Ագրարային ճգնաժամի պայմաններում յերբ  
գյուղացիութեան միլիոնավոր մասաները կոր-  
ծանվում, աղքատանում և սովամահ են լինում, գյու-  
ղացիութեան հիմնական մասաների նախճման համար  
պայքարելը կրկնապատիկ կարևոր նշանակութիւն է  
ներկայացնում: Կոմկուսակցութիւններն իրենց վողջ



թաց նվաճումները ըստագույն որինակն են ծառայում հզնաժամից դուրս դարու հեղափոխական յնլըի համար: Այս փորձը Համկոմկուսին նվիրված, հերոսական այս պայքարը պեսը և հաշվի առնվեն կոմիտեերնի սեկցիաների կողմից:

«Միայն կովելով և, վոր մենք, կոմունիստներս, դուրս կգանք ճգնաժամից, միայն կովելով և, վոր մենք ավելի ահարկու մի ուժ կգառնանք կապիտալիստական աշխարհի համար, քան այդպիսին եյինք պատերազմների և հեղափոխութեան առաջին շրջանում, կովելով և, վոր մենք կհաղթահարենք կոմկուսակցութեանների հետամնացութեանը և մոտայուտ կղարձենք պրոլետարիատի վճռական հաղթանակի ժամը» (ընկ. Մանուիլսկու յեղբայրակիման ճառից):



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԿԻԳԿ-Ի XI ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**

**ՄՍՄԻՆ ԶԵԿՈՒՅԵԼՈՒ ՊԼԱՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

I. Յերկու աշխարհ . . . . .	6
II. Իմպերիալիստական նոր պատերազմների և հակա- իստիքային ինտերվենցիայի վտանգը . . . . .	9
III. Հեղափոխական վերելքը և հեղափոխական հզնաժամ- ափ նախադրյալների աճումը . . . . .	13
IV. Ֆաշիզմը և սոցիալ-ֆաշիզմը . . . . .	17
V. Կոմիտեերնի սեկցիաների գրուքայունը և առաջիկա խնդիրները . . . . .	21
<b>I. ՅՆՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ</b>	
I. ԿԱՌՈՒՅՎՈՂ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԱՇԽԱՐՀ ՅԵՎ, ԿԱՊԻ- ՏԱԼԻԶՄԻ ԱՇԽԱՐՀ	
1. Տնտեսական հզնաժամը կապիտալի յերկրներում և սոցիալիստական շինարարութեան բուռն վերելքը ԽՍՀՄ-ում . . . . .	27
2. ձգնաժամի բնույթը . . . . .	28
3. Արդյունաբերութեան վերելքը ԽՍՀՄ-ում . . . . .	31
II. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԽՍՀՄ-ում.	
1. Հսկայական գործազրկութեան կապիտալի յերկրնե- րում և բանուժի պակասութեան ԽՍՀՄ-ում . . . . .	38
2. Աշխատավարձը կապիտալի յերկրներում և ԽՍՀՄ-ում . . . . .	40
3. Սոցիալական ապահովութեանը կապիտալի յերկրնե- րում և ԽՍՀՄ-ում . . . . .	42
III. ՀԱՄԱՇԽԱՐՀՍԵՐՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԳՆԱԺԱՄԸ ՍՈ- ՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՄԸ	

II. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ  
ՅԵՎ ՀԱՆԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵՐՎԵՆՅԻԱ-  
ՅԻ ՎՏԱՆԳԸ

1. Հակաուրբյունների սրուճը կապիտալիստական աշ- խարհում . . . . .	56
2. Միջազգային հարաբերությունների հանգուցային հակաուրբյունը . . . . .	58
3. Ինտերվենցիայի նախապատրաստությունը . . . . .	60
4. Սոցիալ-դեմոկրատիայի դերը ինտերվենցիայի նա- խապատրաստության գործում . . . . .	74
5. ԽՍՀՄ-ի խաղաղության ֆաղափականությունը . . . . .	
6. Պայքար ինտերվենցիայի և իմպերիալիստական նոր պատերազմների վտանգի դեմ . . . . .	80

III. ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ ՅԵՎ ՀԵՂԱՓՈ-  
ԽԱԿԱՆ ՀԳՆԱԺԱՄԻ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԻ  
ԱՃՈՒՄԸ

1. Համաշխարհային ճգնաժամի սոցիալ-ֆաղափական հետեվանքները . . . . .	91
2. Հեղափոխական վերելքը . . . . .	96
3. Հեղափոխական ճգնաժամի տարրերի աճումը . . . . .	114

IV. ՖԱՇԻՉՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼ ՖԱՇԻՉՄԸ

1. Ֆաշիզմի բնութագրությունը . . . . .	125
2. Ֆաշիզմի գնահատման սխալները . . . . .	132
3. Սոցիալ-ֆաշիզմի մասին . . . . .	138

V. ԿՈՄՒՆՏԵՐՆԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԽՆԳԻՐՆԵՐԸ

1. Մեր հաջողությունները . . . . .	153
2. Մեր բերությունները . . . . .	162
3. Մեր խնդիրները . . . . .	168

ԿԻՆԸ 50 ԿՈՊ. (5 1/2 ժ.)

4 90



ИТОГИ XI ПЛЕНУМА ИККИ

Госиздат ССР Армени  
Эривань 1981

«Ազգային գրադարան»



NL0191312

